



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐՁԵՄՆԵ

ՆԱՄԱԿԱՆԻ

ԳԱ. ԲԱԼԵԿ Ա. ՅԱԿՈՎԵ

ՆԱՐ ՏԱՐՔՈՅ ԵԽ ԱՆՈՒԱՆ ՏՕՒԻ ԵԱՐԵ

ՈՒՂԵՐՁՔ

ՅԱԽՎԱԿԱՆԱՔ ՅԱԽՆԱՐԱԿԱՆԱՔ

ԳԱՐԵՎ ԿՈՒՋԻ ԿՈՒՋԻ

ԽԱՆԻԹՆ , Աղեղուցն , Ակայուցն

ՀԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԿԱՆ

Տ. Ա. Բ. Ա. Ա. Ա.

Գրադիտաց Եամակներ

Յօրինեց

ԱՐՄԱՆ ԳԱՐԱՄԱԶԵԱՆ

Բ. Տարգուրիս

معارف نظارت جليله سنك و مطبوعات داخلية مديریت بهمه سنك
١٠٥ نومروی رخصتماه سبله طبع او نشدره

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԲԵԱՆ ԵԽ Բ. Ա.

Ա. Պալիս , Պաոպ Այի Ճամսկահ , Թիւ 38

1902

£1.99

114 APR 193 2011
PP Aleppo - Syria

Stepan - Vayakedian

Ստեփան - Վայակեան

Stepan - Vayakedian

Առձին Նամականի



Խոսք

808.6

9.2.2
1902

Ա Ռ Ջ Ե Բ Ն

Ա Ա Մ Ա Կ Ա Ն Ի

Պ Ա Ր Ո Ւ Ն Ս Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԵՒ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Ո Ւ Ղ Ե Բ Զ Ք

ՅԱԽԱԿՑԱԿԱՆՔ, ՅԱԽԱՐԱՐԱԿԱՆՔ


ԳՈՐԾԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԱԽԱԿԵՆԵՐ, Աղերազգեր, Վկայազգեր

ՀՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՏՈՄՍԱԿՆԵՐ, ՀԵՇԱԳՐԵՐ

ԴՐԱԳԻՏԱԳ ՆԱԽԱԿՆԵՐ



Յօրինեց

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Բ. Տպագրութիւն

معارف نظارت جلیلسی و مطبوعات اداره بیوهی رخصتیله
طبع اوئشدر.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Մ. ՍԱՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Ա. Պոլիս, Պատր Ալի Ճատէսի, Թիւ

1902



24998



ՆՈՒՖԻ

ԽՈՐԻՆ ՄԵՆԱՐԱՆԱՅ ԵՒ ԱՆԿԵՂԾ ՀԱՄԱՐՄԱՆ

Ա. Ռ.

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ

ԳՐԻԳՈՐ ԷՖԵՍԻ ԱԼԵԱՆԱՔԵԱՆ

Եւայլն, Եւայլն, Եւայլն :

ՀԵՊԻՆՍԿԻՆ



ՆԱԽԱԲԱՆ

Ա. ՏՊԱ.ԳՐՈՒԹ.Ե.Ս.Դ.

Ինչ հարկ Նամականի հրատարակել, մինչ մարդու իր ընդունած դաստիարակութեամբ եւ փոքր ի ժամէ գրելու վարժութեամբ կրնայ բան մը խմբագրել:

Այս առարկութիւն ըստ երեւութին որքան եւս հիմնաւոր բուփ, չե կարող Նամականւոյ մը հրատարակութիւնն անպէս ցուցընել: Զի Առձեռն Նամականիներ անոնց համար են՝ որ պէտք ունին օրինակներ տեսնելու: Յանախ նաեւ ընտանեկան կամ առեւտրական նամակ մը գրելու ժաշ իսկ կարող մեկը շատ կը տուարի, երբ հարկ ըլլայ գրել արտաքոյ կարգի բուղք մը, աղերսագիր մը կամ նամակ մը՝ որ անպատասխանի պիտի մնայ, եթէ հին սովորութեամբ որոշուած ձեւեր նեղիւ պահուած չըլլան:

Ի՞նչու ուրեմն արհամարհանօֆ մեկդի նետուփ առաջնորդ մը՝ որ շատ անգամ կրնայ օգտակար ըլլալ:

Այսպիսի առաջնորդ մը ըստ կարելոյն վասահելի եւ ձեռնիսա կացուցանելու համար՝ շանացինք բազմարիւ նամականիներ ուսումնասիրել:

Եւ ահա բարգմանածոյ եւ ինքնագիր օրինակներով կը կազմենք մեր այս գործ :

Կը յուսանք քէ ոչ նուազ օգտակար կ'ըլլան նամակաց ընդլայնելի 48 նիւթեր, Հայ հեղինակաց ումանց նամակներ, մեծ մասամբ անտիպ եւ յոյժ նետարերական եւ գեղեցիկ ոնով:

Հայ հեղինակաց նուիրուած ԺԱ. գլուխն' գործոյս



բոլորովին նոր եւ հրապուրիչ համգամանի մը .կ' ընծայէ: Շնորհակարուրի ևն ամեն անոնց՝ որոնք իրենց անձնական համակառութերը սիրայօժաւ մեր առջեւ բացին , այս կերպով իրենց բանկազին բարեկամուրեան նոր հաւասիք մասուցանելով գործոյս հեղինակին :

Գործոյս վերջին մասը կը կազմէ բղբակցուրեան մասին պատմական ծանօթուրինեներ , ամեն ինչ խնամով հետազոտած , նոյնպէս բղբակցուրեան կանոններ , սակագիններ , եւն . որոնք նոյնպէս մասնաւոր հոգածուրեամբ նօդուած են :

Հետամուտ եղած ենք ամեն տեսակ նիւրի համար օրինակներ տալ : Պէտք չէ կարծել թէ այս օրինակներ տի լինել այն փոփոխուրինեներ , զորս ողջմուրիներ ձեւն : Բացի զիտողուրիններկ՝ զորս զլուխներուն ըստնենեն եւս կը զետեղին :

Թուղր. — Պէտք է առ հասարակ բուղբն եզերեն ուղիղ կտրուած ըլլայ : Աղերսագրի համար կը գործած բուղբ կոչուածն : Պէտք է երկեր ըլլայ այն :

Քառածալ կամ սովորական նամակի բուղբն ընտածուի . անպատճի է կես բերք գործածել : Սովորութիւնը միայն առեւտրական նամակներու համար կը մար կը գործածուի :

Թուական. — Կը ցուցնէ այն տեղին՝ ուր կը գրուի ամսարիւլ եւ տարին , գործի կամ առեւտրական նա-

մակներու մէջ սորագրութենեն վերջ վարը ձախ կողմը դնելու է : Անպատճ չէ սակայն միւս սորեւ դնելն . հաւասարներու մէջ հաղախավարուրիւն մը աւելի ընելի վայելուչ է գործողին համար :

Գլխագրութիւն նամակաց. — Պէտք է մեկ տողի վրայ ըլլայ . ասոր եւ գրուածին մէջ բողուած միջոցը յարգանաց նշան մ' է : Աղերսագրաց կամ հրաւիրագրաց մէջ սովորուրիւն է բերքին մէջտեղին ֆիշ մը վեր դնել : Պէտք չէ որ երբեք համառօսագրեալ ըլլայ . *Skr* , *Sիկին* բառերն կը բաւեն պարզ նամակաց մէջ : Աղերսագրաց մէջ սովորուրիւն է վերնագրէն վեր ցուցնել աղերսագրին ընդունող անձին պատուանուններն ու աստիճանն , նշայն : Գլխագրութիւնը պէտք է գրուի բերքին մեկ երրորդ մասին վրայ . գլխագրութեան եւ նամակին բուն գրուածին մէջ պէտք է հաւասար միջոց բողուլ : Պէտք չէ մոռնալ թէ այս պատճանուրեան նշաններն անհրաժեշտ են , եւ թէ անոնցմէ յանախ կախում ունի յաջողուրիւն մը :

Նամակի բուն գրութիւն. — Ամեն բանէ առաջ պէտք է դիւրընքենելի գրուած ըլլայ . տարիենով կամ դիրքով ակնածելի անձանց ուղղեալ նամակներու մէջ պէտք է համառօսիւր ծանուցանել նամակին նպատակը : Կարեւոր է յանախ կրկնել *Skr* , *Sիկին* բառերն ըստ աստիճանի այն անձանց՝ որոց կը գրուի : Զուարենաբան ոճը միայն երիտասարդաց կամ հաւասարներու մէջ ընդունելի է :

Այս վերջին դեպքին մէջ միայն հարցումը ներելի է , յոյժ հաղախավար ձեւով կրնայ ըլլալ պատկառելի անձի մը . չպիտի ըսել . Տեղեկուրիւն տուել , կ'աղաչեմ , այլ պէտք է ըսել . Ներելի որ ինձ տեղեկու-

րիւներ տնորհիք . . . եւալին: Մտեմութեան մէջ միայն ներելի է նամակն առնող անձին միջոցաւ նոյն բաղադր բնակող ուրիշ անձին մը բան մը բան տալ: Ազգականաց համար ընդունելի են պատուասիրական խօսքեր: Բայց պէտք է միշտ ակնածական բանաձեւ մը գործածել: Զոր օրինակ. ներեցիք որ Զեր պարոն եղբայրը նամակիս մէջ գտնէ յարգանաց հաւաստիք:

Ներմագրութիւն կամ աւարտ նամակի. — Տարիքոն ծնողաց կամ ազգականաց ուղղեալ նամակներուն մէջ պէտք է միշտ յարգանք բառն դնել: Փատսպանի մը ուղղութեալ նամակաց մէջ երախտագիտութիւն բառն: Հաւանելի է: Առեւտրական նամակները կ'աւարտին այսպէս. Պատրի ունիմ զձեզ բարեւել: Անձնուէր ծառայ Զեր բանաձեւը կրնայ գործանուիլ նոյն աստիճանի անձանց միջեւ, որմէ անհանոյ հետեւանք մը չծագիր:

Մտրագրութիւն, — Ընդհանուր կանոն է որ գրութիւնը պէտք է դիւրընքեռնի ըլլայ, եւ անունն աւելացնի գծերու խառնիխուուն մանուածէ:

Յետ գրութեան. — Նամակին շարունակութիւն մ'երեան մասը պէտք է աւելցնել պատուասիրական խօսքերու համար, նոյնպէս մոռցուած բան մը նշանակելու համար, եւ այսպիսի դեպքի մէջ գրուելու է այնպէս, ինչպէս ցցուցիմք բուն գրութիւն նամակի յօդուածին մէջ: Ուրիշ ամեն առքի մէջ անմտադրութեան նաևն է. հաւասարներու մէջ ներելի է այն:

Մաշեց եւ կամաց. — Պէտք է որ նամակները խնամով ծալուին, այնպէս որ անզգոյն հետաքրութիւնը չկա-

րենալ աչք նետել անոր վրայ: Աղերսագիրք եւ կարեւոր գործոց տելեկացուցիչ գրութիւնն չուս ծալուելով պահարանի մէջ պիտի գրութին: Այսպէս պիտի ըլլայ նաեւ երեւելի անձանց գրուած նամակներու համար: Կարմիր կնքամուր պիտի գործածուի աղերսագրաց եւ պահարանով գոցուած նամակներու համար:

Երեսագիր. — Գրեցէք անունն, արուեստն կամ աստիճանն այն անձին՝ որուն կ'ուղղիք նամակը: Հոս ալ մի՛ մոռնաք թէ Տեր կամ Տիկին բառերն ամբողջ գրերով պէտք է գրուին: Երէ մեծ բաղաքի մէջ բնակով անձի մը կը գրէք, փողոցին անունն կամ տան թիւն անհրաժեշտ կարեւոր են: Երէ երկու բաղաքներ միեւնուն անունն ունենան, պէտք է յաւելուլ նաեւ նահանջունն կամ գաւառին անունն:

Այսպէս,

Մեծապատի

Սարգիս Էմիլի Արքարեան

Ի ՄՊՐԻՉԻՍՏԱՐ

[Էմիլի Կուսակաղութիւն]

Երե նամակդ պիտի երբայ գիւղ մը կամ դրդ համակի : Մը մօտաւորագոյն բաղադին անունը պիտի է

Ազնիւ


Պարու Թաղենս Կարսպետեան

ՀԱՅԳԻՒՂ

[Կուսանդառապողաց]

Խոշոր գրերով պիտի է գրուի անունն այն բաղադին՝ ուր պիտի մնայ նամակն : ՍՏԻՊՈՂԱԿԱՆ բառը զոր ումամբ երբեմն իրենց նամակին ներփեւ կը դնեն, երբեք չպիտի զործածուի բղարարութեամբ խրկուած նամակի մը համար : Պիտի չե ենթագրել քէ վարչութիւնը իր ձիերուն բիւր պիտի կրկնապատիկ ջեր նամակը տանելու համար :

Այս զեկոյցը կարելի է սակայն զործածուիլ երրորդի մը ձեռամբ խրկուելիք բղրի մը համար կամ բաղադի մէջ մէկ անձէ միւսի խրկուած տոմսակի համար, որպէս զի երե բարեկամ մը կես օրուան հաշի կը հրաւիրէ, անոր դռնապանը Զեր հրաւիրագիրը կես օրէն վերջ ժամը 9 ին չքողու :



Հետեւեալ ցանկը պաշշանուրիւններու համեմատ
պատրաստուած է, եւ որ կը ճշդէ շանուանց զործա-
ծուրիւննի :

ՇԲԱՆՈՒԱՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ

Ա. Կարողիկոսական կամ Հայրապետական
Տեր Հայրապետ կամ Աստուածթնիր Հովուապետ. —
Հոգիւոր Տեր. — Օծուրիւն :

Բ. Մասնաւոր Կարողիկոսաց

Սայ եւ Ալբամարայ. — Երանաւորի Կարողիկոս.
Ամենապատիւ Տեր. — Ամենապատուրիւն :

Գ. Պատրիարքական

Ամենապատիւ Մրբազն Պատրիարք. — Մրբազն
Հայր կամ Տեր. — Բարձր Մրբազնուրիւն :

Դ. Հրաժարեալ Պատրիարքաց

Ամենապատիւ արքեպիսկոպոս. — Ամենապատու-
րիւն :

Ե. Եպիսկոպոսական

Գերապատիւ Եպիսկոպոս. — Մրբազն Հայր կամ
Տեր. — Գերապատուրիւն :

Զ. Վարդապահաց կամ Եւազ բահանայից

Արժանապատիւ Սուրբ Հայր կամ Տեր. — Արժանա-
պատուրիւն :

Է. Կթահանայական

Ծնորհազարդ Տեր Հայր. — Հայրուրիւն :

Ը. Սարկաւագական

Բարեկրօն Սարկաւագ. — Տիրացու Եղբայր. —
Եղբայրուրիւն :

ՇԲԱՆՈՒԱՆՔ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՅ

Ա. Թագաւորական

Վեհափառ Արքայ կամ Կայսր. — Օգոստափառ
Տեր. — Վեհափառուրիւն :

Բ. Խօխանական

Վեհազն Խօխան. — Վեհազն Տեր. — Վեհազնու-
րիւն :

Գ. Սպարեգոսական

Բարձրապատիւ Եպարքու. — Բարձրապատիւ Տեր.
— Բարձրուրիւն :

Դ. Կափառարական

Վաեմապատիւ Նախարար. — Վաեմապատիւ Տեր. —
Վաեմուրիւն :

Ե. Սւագական

Վաեմապատիւ Պեյ, Եֆենի. — Վաեմուրիւն :

Զ. Սատինանաւորաց

Ազնուազուր Տեր. — Ազնուրիւն :

Ե. Հասարակական

Մեծապատճեն կամ Մեծարգոյ Տեր . — Մեծապատճենին :

ՇԲԱՆՈՒԱՆՔ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ

Ա. Կայսրութեայ կամ Թագուհեայ

Վեհափառ Թագուհի կամ Կայսրուհի . — Ծիրանափառ Դէխոյ . — Վեհափառութիւն :

Բ. Թեխանութեայ

Վեհազուն Խելանուհի . — Վեհազուն Տիկին կամ Տիրուհի . — Շնորհածուք Վեհազնութիւն :

Գ. Նախարարութեայ

Վաեմածուք Բամբիթ . — Վաեմափայլ Տիկին . — Վաեմութիւն :

Դ. Աւագանույ

Ազնուածուք Տի'լին . — Շնորհափայլ Ազնուութիւն .
(Օրիորդաց) Ազնիւ Օրիորդ . — Ազնուութիւն :

Ե. Հասարակական

Համեսափայլ Տիկին , Շնորհափայլ կամ Նազելատուք Օրիորդ . — Ազնուութիւն :



ՆԱՄԱԿԱՆԻ

ԳԼՈՒԽ Ա.

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԵՒ ԱՆՈՒԱՆ ՏԾՆԻ ՆԱՄԱԿԱՆԻ

14/6 - 2017

Գլուխութիւն . — Ընթանառայէս կարնարան ոնն այսպիսի նամակներու մէջ պէտք է իշխէ , որոց նպատակն է գորով եւ յարգան յայսել : Այսպիսի պարագայի մէջ մտայի երեւալու նկրտիլ խամամտութիւն է : Ծնողաց , աւագաց , բարերարի , իրաեկամիքուղիեալ այսպիսի պատուայիրական խօսերիմիմայն սրէք բելարդ եալ ըլլալով աւելի լաւ կ'ըլլան : Պարզութիւննեւ յատկութիւն այսպիսի ոնի մը գլխաւոր տարերն են :

1. Մանկան մը նամակը իր ծնողին :

Գորովագո՞ւթ ձնողք իմ ,

Շատ երջանկիկ սիտի ըլլայի , եթէ այսօր ձեր մօան ըլլայի յայտնելու համար Զեղ իմ սրտագին բարեմազ-թութիւններու . բայց կը միմիթարուիմ , երբ այս մէկ քանի տողերը կ'ուզգեմ , որոնցմով միանգամ ևս կը յայտնեմ թէ Զեղ սրտանց կը սիրեմ :

Ձեր երջանկութեան կը փափաքիմ միշտ և կը մաղ-թեմ Զեղ անտախտ և անլիշտ երութիւնն մը :

Զենէ հեռու ժամանակը ինձ երկար կ'երեմ , շատ



երկար. կը յուսամ քիչ տաենէն զ Ձեղ տեսնել և եռանշ
դով գրկել: Հիմա ուրիշ բան չունիմ Ձեղ յդելու, բայց
եթէ սիրոյս համբոյրները :

[Թուական]

Զ Ձեղ շատ սիրող հնագանդ որդի

* * *

2. Նոյն նիւք

Ամենասիրելի՛ ծնողք իմ,

Նոր տարւոյ սեմին վրայ դեռ նոր ոսղք դրած՝ կը
չուարիմ թէ ի՞նչ բառերով հիւսեմ երախտագէտ սրտիս
տկար մտքովս չափել Ձեր նուիրած : Ո՞հ, չեմ կրնար
բարիքները բոլոր, Ձեր սիրոյն մեծութիւնը : Ձեր
այս միակ արձագանդը ունին այնքան՝ հոգւոյս մէջ
մի՛ շու երախտագիտութիւն :

Սիրելի՛ ծնողք իմ, ապրեցէ՛ք դուք ուրախ և զը-
ւայելեն երկար շատ երկար տարիներ Ձեր քաղցր հո-
րան, մինչև որ ողջունէք խաղաղ ծերութիւնը, շը-
պատուած սիրելիներով :

Պատուակա՞ն ծնողք իմ, Աստուած որ վերէն կը
հսկէ միշտ մեր վրայ, օրհնէ՛ մեր տունը, ուր Ձեր որ-
դիք իբրև ընտանեկան դրախտին հրեշտակները երգեն
միկ տարիներու :

[Թուական]

Ձեր անձնուէք որդին

* * *

3. Թոռան մը նամակը իր հաւուն :

Սիրելի՛ պապիկ,

Այս պահուն ուրախութեանս հետ խառն է ախրու-
թիւնս . տիսուր եմ, որովհետեւ հեռու եմ Ձենէ. ուրախ՝
որովհետեւ ունիմ շատ բարեմաղթութիւններ Ձեզ ուղ-
ղելու : Ի՞նչու այս օրը մանաւանդ զուրկ ըլլայի Ձեր
անոյշ գգուանքներէն : Թող այս նամակս յայտնէ սըր-
տիս խանդաղատանքը. բայց կը վախնամ որ գուցէ՛ չի-
կրնայ յաջող թարգման ըլլալու . այս մասին դատա-
պարտեցէք գրիչս, բայց, կ'աղաչեմ, մի՛ կարծէք զիս
Ձեղ նկատմամբ անստարեր :

Նամակիս կը կցեմ ստացած թիւերս, երջանիկ եմ,
վասն զի գէթ այս կերպով կը փոխարինեմ այն երախ-
տեաց, զոր Ձենէ ընդունած եմ :

Ընդունեցէք կ'աղաչեմ, սիրելի՛ պապիկս, սիրալիր
և անկեղծ բարեմաղթութիւններս :

4. Աղջկան մը նամակը իր մօրը :

Սիրելի՛ մայր իմ,

Նոր տարւոյ այս օրն բարենշան է ինձ, վասն զի
վաղուց ի վեր սահմանուած է այն սիրոյ և գորովան-
քի փոխանակութեան մը, բան մը՝ որ ինձ շատ հաճելի-
է . որովհետեւ միանգամ ևս սէրս յայտնելու պատեհու-
թիւնը կ'ունենամ : Անշուշտ զիտէք թէ ի՞նչ կ'զգամ

Զեզ նկատմամբ . բայց քաղցր է ինձ հաստատել դայն
այս առթիւ ալ : Մեծ հաճոյքով կը կարդամ Զեր նա-
մակներն , և չեմ արակուսիր թէ դուք ևս միւնոյն
զգացումով կը կարդաք :

Հեռաւորութիւնը ինձ դառն է միշտ . ո՞հ , չկրցայ
վարժուիլ բաժանման վշտերուն :

Սիրելի՛ մայր իմ , աներկմիտ եղէք թէ իմ ընթացքա
պիտի համապատասխանէ Զեր սիրոյն և հոգածութեան,
զորս առատօքն վայելած եմ կեանքիս առաջին օրէն :

Անհամբերութեամբ կ'սպասեմ Զեր նամակներուն .
մինչ հեռու եմ Զենէ , անոնք են իմ ուրախութիւններս
կեանքիս մէն մի օրը կ'աճի ու կ'աւելնայ Զեզ նկատ-
մամբ ունեցած սէրս :

Ընդունեցէ՛ք , սիրելի՛ մայր իմ , նոր աարւոյ առ-
ներն :

[Թուական]

Հնագանդ դուստրդ

* * *

5. Փոքրիկ աղջկան մը նամակը իւր հօրը:

Սիրելի՛ հայր իմ ,

Ի՞նչ ուրախութեամբ կողամ այսօր և կ'ըսեմ դարձ-
եալ Զեզ թէ սիրոս վէ Զեզ նկատմամբ ունեցած սի-
րոյս և երախտագիտութեանս զգացումներով : Բարե-
բառդ եմ որ հեռու ըլլալով հանդերձ կրնամ զգաց-
մանցս արտայայտութիւնն ընել : Այո՛ , պիտի ջանամ
սէրն :

Կը փափաքիմ տեղեկութիւններ առնուլ Զեր որպի-
ութեան մասին , որովհետեւ սրտիս պէտքն է ապրիլ
Զեզ հետ և գիտնալ թէ զո՞հ էք և երջանիկ :

[Թուական]

Հնագանդ դուստրդ

* * *

6. Նամակ կնիքահօր մը ուղղուած :

Սիրելի՛ կնքահայր իմ ,

Եթէ այս պահուն Զեզ կ'ուղղեմ չերմազին բարե-
մազթութիւններս , ոչ թէ սովորութեան մը հարկը
վճարելու համար է , այլ սրտիս պէտքը կատարելու :
Դուք իմ հայրագիրն եղած էք և ինձ սիրելի է յայտ-
նել միշտ Զեզ երախտագիտութիւն :

Սիրելի՛ կնքահայր իմ , կ'աշխատիմ հաստատամը-
տութեամբ . ներխակեալ թիւերը կը ցուցնեն թէ ջա-
նացած եմ միշտ Զեզ երախտեաց արժանի երեալու :
Երախտագիտութեանս արտայայտութիւնը ըլլայ թող
աշխատասիրութիւն :

Ներկայ երկտողովս բարեմազթութիւններս կը յղեմ
Զեզ և վատահ եղէք թէ անկեղծ են անոնք , որովհե-
տեւ գիտէք Զեզ նկատմամբ ունեցած սէրս :

Կ'ողջագուրեմ զԶեզ սրտազեղումով , միենոյն ժա-
մանակ յայտնելով զիս

[Թուական]

Զեր երախտագէտ սանը

* * *

7. Նամակ կնիքամօր մը ուղղուած :

Սիրելի՛ կնքամայր իմ,

Մեծ ուրախութեամբ կուգամ այսօր և կը յայտնեմ՝
յարդանացս, սիրոյս, երախտագիտութեանս հաւասա-
տիքն, որովհետեւ բարեպատեհ է այսօրն իմ զգացում-
ներս յայտնելու համար Զեղ իբրև իմ երկրորդ մօր ։
Զալիսի մոռնամ Զեր քաղցր և անշէջ սէլն, որուն պի-
տի ջանամ յաւետ արժանանալ։
Վասահ եղէք, սիրելի՛ կնքամայր իմ, խօսքերուտ
անկեղծութեան և հաւատացէք ջանքերուս՝ որոնցմով
պիտի պսակեմ Զեր բոլոր իղձերը։

[Թուական] Զեր խոնարհ և անձնուեր դուսարը

* * *

8. Նամակ հօրեղբօր մը, հօրացրոց մը, եւշ. ուղղուած։

Այս տարի շատ հեռու եմ, որպէսզի շուրին ի շուրին
սիրոյս արտայայտութիւնն ընեմ Զեղ։ Ուստի ստիպուած-
ուակ իր տկարութեան պիտի յայտնէ բոլոր իղձերս ։
Համար :

Հաճեցէք ընդունիլ զանոնք, որոնք այնքան ան-

[Թուական]

ԶԶեղ սիրող

* * *

9. Բարեկամի մը ուղղուած :

Սիրելի՛ բարեկամ,

Որոշած էի անձամբ գալ և մատուցանել բարեմազ-
թութիւններս, բայց յանկարծագէս պարագայ մը զըր-
կեց զիս իմ այս փափաքս կատարելէ։ Կ'ուզէի Զեր
ուսքը նեստուիլ և իմ սիրոս բանալ։ բայց հիւանդ եմ
և բժիշկը կ'արգիլէ ինձ դուրս ելնել։

Լաւագոյն օրերու կ'սպասեմ ինձ համար, որպէս զի
բարեկամական այս հարկը մատուցանեմ Զեղ։ Իսկ առ-
այժմ ուրախ եմ որ գրիս կարող կ'ըլլայ փոքր ի չա-
տէ այս պարագս կատարելու և մաղթելու Զեղ երջա-
նիկ տարիներ :

Կը ցաւիմ որ այս անկենդան թղթով կը յայտնեմ,
ինչ որ կենդանի բարբառով պիտի ուղէի արտայայտել։
Ընդունեցէք, սիրելի՛ բարեկամս, նոր աարւոյ Զերմ
շնորհաւորութիւններս :

[Թուական]

* * *

10. Բարեկամի մը ուղղուած :

Սիրելի՛ բարեկամս,

Հարկ չիկայ սովորական բանաձեռ գործածել,
մինչ կը գրեմ Զեղ։

Մեր վաղեմի և հաստատ բարեկամութիւնը իրա-
ւամբ չաձիր ասոր։ Սակայն կը փափաքիմ ըսել թէ
հեռաւորութիւնը զիս շատ կը տիրեցնէ։

Գործերս կ'սափակեն զիս հեռու մնալ տակաւին իմ
ծննդավայր քաղքէս : Առաջին անգամ է որ հեռու
կ'անցունեմ նոր տարւոյ այս օրն, հեռու Ձենէ, հեռու
իմ բոլոր բարեկամներէս: Ուստի բարեմաղթութիւններս
կը ծրաբեմ թղթիս մէջ և կը մաղթեմ Ձեզ երջանկու-
թիւն :

[Թուական]

Զերդ

* * *

11. Պաշտպանի մը ուղղուած :

Տէ՛ր,

Զեր բարեարտութիւնը ոչ միայն այսօր, այլ յաւէտ
ինձ, քաղցրակոյն պարտք երախտադիառութիւնս յայտ-
նել Ձեզ այս երջանիկ առիթով :
Հաճեցէ՛ք ընդունիլ, Տէ՛ր, կանխայալու բարեմաղ-
թութիւններս Ձեր և Ձեր աղնիւ ընտանեաց բարօրու-
թեան համար: Ձեզ համար տածած զգացմունքս են
նիքը :

[Թուական]

Ձեզ երախտադէտ և անձնուէր

* * *

12. Եամակ ընկերուհիի մը իր ընկերուհիին ուղղուած:

Սիրունիկս,

Ե՞նչ գրեմ, չգիտեմ, քի՞զի՝ որուն կը թուչին միշտ
զգացումներս, շատ սովորական է գրչիս ըսել թէ կը

սիրեմ զքեզ : Սիրոս ատովլ չգոհանար . կ'ուղեմ մա-
նաւանդ գրել . կը պաշտեմ զքեզ : Այս բացատրու-
թիւնն ալ կամաց կամաց կը հիննայ . աւելի հրեղէն ոճ
մը կ'ուղեմ . բառեր չեմ ուզեր, այլ կայծեր, որոնց
վառարանն է սիրոս, բայց թղթի մէջ չեն կրնար ծրաբ-
ուիլ անոնք : Ինչո՞ւ հեռու ըլլամ քենէ, հեռու ըլլալ
ինձ համար տանջանք մ'է : Կը փափաքիմ որ գրկաց
մէջ ըլլաս, Ձերմ համբոյրներս դրոշմեմ փայլուն ճակ-
տիդ, և երջանիկ ըլլամ :

Թող անսուրերն ըսէ . ի՞նչ յիմար փափաքներ . բայց
դուն, քո՛յր իմ, կ'աղաչեմ արգահատանքով նայէ՛
զգացումներուս, սրտի՛ս՝ որուն սլաքը ուզգուած է
միշտ քեզ : Բիւրիցս կը գրեմ զքեզ և կ'աղաչեմ որ
համակներդ սուէպ ուզգես . ի՞նչ փոյթ, ընտրէ՛ քեզ եր-
կարաբան ոճն և ես յափշտակութեամբ պիտի կարգամ
ինչ որ գրես :

Նոր տարւոյ բարեմաղթութիւններով՝

Քոյդ

[Թուական]

* * *

3. Մօր մը անուան տօնը շնորհաւորելու նամակ
որդուոյ մը կողմէ :

Ա. Անասիրելի՛ մայրիկս ,

Մի՛ հարցուներ սրտիս թէ ինչո՞ւ կը բարախէ այս
պահուն . ուրախութիւնն մըն է որ քնարի մը պէս զայն
կը թթթուացնէ : Ո՞չ, ո՞չտափ երջանիկ եմ այս վայր-
կեանին . կարծես թէ հոգիիս մէջէն երգեր կը լսեմ ,

որոնք սիրելի անուն մը կ'երգեն, անուն մը՝ որ մեր
տան մէջ ուրախութիւն կը տարածէ, նոր նոր երջան-
կութիւն կը պարզեցէ: Ուրեմն ինչո՞ւ ես ալ այդ ա-
նունին չսուլինմ իմ մանկական թոթովանքս, հիացումո-
և սէրս:

Քո՛ւկդ է այդ անուն, ո՞վ սիրելի մայրիկս, անոր
տարեդարձն է որ ինձ ուրախութիւն կը պատճառէ, և
ես որչափ ալ փափաքիմ չնորհաւորութիւններ ընել,
խօսքիս տկարութեան վրայ ցաւած կը յուղուիմ, համ-
րի մը նման՝ որ միայն անիմաստ ձայներ կը հանէ և
չկրնալով իր զգացածին լեզու տալ, կը տանջուի ու
կուլայ: Սակայն եթէ լեզուս կը լոէ, բայց արդէն
սիրաս մաղթանքներու հեղեղ մը կը պոռթկայ սիրելի
րիս ուրախ ու դուարթ և մեր տուն ըլլայ դրախտ մը՝
Ասոնք են անկեղծ և սրտագին բարեմաղթութիւն-
այս տարեդարձն առթիւ ուրկէ կը ցաւկոմ որ բացա-

Ասոնք են անկեղծ :

Ներս քեզ ընծայուած, ո՞վ սիրելի մայրիկս, անուանդ-
այս տարեդարձն առթիւ ուրկէ կը ցաւկոմ որ բացա-

Միշտ հաւաղանդ և երախտագէտ որդիդ
[Թուական]

* * *

14. Աղջկան մը նամակն իր հանիին:

Սիրելի՛ մեծ մայրս,

Սրտասուեցիր դուն և ես բաժնուեցայ. գացի դըպ-
լոց: Այն ատեն զգացած վիշտ նուազ էր, երկար ու-
ղեւորութեան մը հեռանկարը, մեծ քաղաք մը տես-

նելու գաղափարը, նորագոյն մտերմուհիներ գտնելու
յոյսը, այս ամէնը կը չափաւորէր ախրութիւնս: Մինչ
դուն կը հառաջէիր, ես մաքովս իրբե թռչուն կը թռչէիր

Եւ այսպէս մեկնեցայ, կրթարանին մէջ: Հոս քանիցս կը յի-
շեմ մանկութեանս նուիրած խնամքներդ, և ի՞նչ ու-
շաբախութեամբ կը նայիմ դէպ ի անցեալն: Կը լսեմ կար-
ծես ձայնդ՝ որ հօրմէս ներում կը խնդրէ մէկ յանցան-
քիս համար և միենայն ժամանակ բարի խրատներ կու-
տայ: Ո՞չ, չեմ մոռնար երբեք, ո՞չ տքնութիւններդ-
անկողնոյս սնարն, երբ ես հիւանդ եղած եմ, ո՞չ այն
գիշերներն, երբ ինձ համար բարենք չըլաղգեստ մը կը
պատրաստէիր, ո՞չ այն ամէն խնամքներն՝ որ քեզ կը
պատճառէին այնքան յոդնութիւն և նեղութիւն:

Այն ատեն կարող չէի սիրողդ մեծութիւնը հասկը-
նալ. բայց այսօր կ'ըզդամ զայն, եւ այս պահուն մինչ
ամէն ոք կը բերկրի, կը մտածեմ քու վրադ, սիրելի՛
մեծ մայրս, և երախտագիտութեամբ լի չնորհակալու-
թիւն կը մատուցնեմ Աստուծոյ և կ'աղօթեմ Անոր-
որ սիրագեւէ քեզ խաղաղիկ անլիշտ օրեր:

[Թուական]

* * *

15. Նամակ Տիկին Ակվիլեէկի . . . կոմսին ուղղուած:

Չնորհաւոր նոր տարի, սիրելի՛դ իմ կոմս, թող այս
տարին անցեալ տարիներէն աւելի բարեբաստիկ ըլլայ
ջեզ. թող ջեր վայելքներն ըլլան անդորրութիւն,
հանգիստ և առողջութիւն, վերջապէս թող ջեր օրերն
այսուհետեւ հիւսուին իրբե ոստայն ոսկեթել և մետաք-
սեայ:

(Թարգմ.)

16. Նամակ աղջկան մը իր մօր ուղղուած :

Սիրելի՛ մայրիկ, ընկերուհեացս հետ նոր տարւոյ առթիւ այցելեցի այս տան պատկառելի հիմնադիր Տիկամաշնորդեցին զմեղ : Զգացում մը աւելի քաղցր, վասն զի կենացս հետ պիտի վերջանայ միայն, զիս մաղթեմ առողջութիւն, Զեղ կը օրեր, կը մաղթեմ ամէն ինչ որ. Զեղ փափաքելի է. այսօր կ'սպասին շաքարներ, ո'րչափ միայն յարգանք կը մաղթեմ զեղ այնչափ տարիներ, առաջ միայն յարգանք կը մատուցանեմ, հաւաստելով Զեղ մար երջանկութիւն չիկայ առանց Զերինին. առանձ հանութեան ձանձրութիւններուն և հեռաւորութեան կը ցանեմ, և օր մը աղջկանց ամենէն երախտագէտը, գտնէք :

(Թարգմ.)

17. Հօր մը անուան տօնի շնորհաւորել :

Սիրելի՛ հայր իմ,

Քեզ՝ որուն սրտէն կը բղխին միշտ ինձ անհուն բառեան սիրոյդ գանձերը, քեզ՝ որ կը պարգեւես քուկիններուդ յաւիտուղդ սիած ծաղկի մը պէս կը ինաւիւն իրու միր պար-

ախզպան, քեզ կ'ուղղեմ այս մի քանի տողելա, երջանկութեան մաղթանքներով լեցուն :

Հայր իմ, սիրելի անուանդ այս տարեգարձին առթիւ շատ քիչ է ինչ որ գրեմ: Ի զուրը միտքս կը տանջեմ, անուշ խօսքերով հիւսելու այս երկասոզ: Թէե չունենամ այդ համոյքը, բայց ես գո՞ն եմ որ փոխանակը բանաստեղծութիւն նուիրելու քեզ, սէ՛րս կը նուիրեմ. ահա միակ հարստութիւնս, միա՛կ բաղձանքս :

Հայր իմ, իրբե ամէն բարի հայրերու օրինակ ապրիս երկար և երջանիկ. անով քուկիններուդ ուրախութիւնն ալ պիտի ըլլայ անվերջ :

Կրկնելով սրտագին և անկեղծ չնորհաւորութիւններս՝ կը համբուրեմ պատուական ձեռքերդ :

Միշտ երախտագէտ որդիդ

[Թուական]

18. Հօր մը անուան տօնի ուղերձ (ուսմանոր)

Ո՛ հայր, դեռ թաց արշալուսի արցունքով կ'ուղեմ շարել թարմ ծաղկիններ քովէ քով, Ու այդ փունջն՝ անհուն սիրոյս նըշան ցոյց տալ քեզ, Սակայն խորհիմ, թերլթերն խամրին փութապէս:

Ահ, ուանայի իցիւ երկինքն դէսի ի վեր, իր ամպին վրայ հանգչող արծիւ անվեհեր, Սիրուն ճակալիդ կազմել պըսակ բոցեղէն. Սակայն չէ որ մարին լոյսեն այդ ամէն :

Կամ թռչէի իրրե թռչուն երգեցիկ ,
Որ ընութեան երգիչն է շատ գեղեցիկ .
Համար քեզ համար յօրինելու երգ սիրուն .
Սակայն ո'չ , ո'չ , անդան երգիչ մ'է թռչուն :

Ահ , քեզ համար ծաղկի նըման վաղանցուկ
Չէ բնաւ սէրըս , հոսի աչքէս միշտ արցունք ,
Եւ կը դիւթեն սիրուս չքնաղ քու ձիրքեր .
Ամբիծ հոգւոյս մէջ կը փայլի քու պատկեր :

Եւ ես կ'ուզեմ միշտ ներըողել քու անուն ,
Սրտանց մաղթել քեզ շատ բարիք , մեծութիւն ,
կ'ուզեմ , կ'ուզեմ քու կեանքդ միայն և քու սէր ,
Թող կեանքիդ ճրադ՝ անչէջ պահեն վառ լոյսեր :

19. Նոր սարւոյ ուղերձ փոքրիկ մանկան մը կողմէ
իր ծնողին (ուսմանոր)

Իրրե թեթե թիթեռնիկ
Կամ ինչպէս զըւարիթ մէկ թռչնիկ
Թռչէի ձեր մօտ միայն ,
Մ' իմ ծընողքս անհլւան :

Ձեր սէրը լոկ յուղէ զիս ,
Զեղմով բերերի միշտ հոգիս ,
Եւ մեր տունն է իմ դըրախտ ,
Ուր սոսկ ըլլամ բարերախտ :

Այսօր ահա նոր տարի ,
Թող այն տայ մեզ շատ բարի .
Կեանք երջանիկ և զըւարիթ ,
Զունինանք փուշ , քաղենք վարդ :

Լըսէ՛ աղերսս , մ'վ Աստուած ,
Որ սուրբ սրտէ մ'է բղիսած .
Օրհնէ՛ մեր տուն յաւիտեան ,
Ծըսէ՛ զայն տուն քաղցրութեան :

Ուր միշտ տեսնեմ ձեզ , բերկրիմ ,
Ո'վ բարեգութ ծընողք իմ .
Շատ տարիներ դուք ուրախ ,
Ապրիք մեր տան մէջ խաղաղ :

20. Մօրեղբօր մը անուան տօնը շնորհաւորել :

Սիրելի՛ մօրեղբայրս ,

Անուանգ՝ զոր շատ սիրելի ըրած ես ինչպէս ինձ ,
Նոյնպէս շատերու չնորհիւ այնքան չքնաղ ձիրքերուդ ,
Կը փութամ տարեգարձ չնորհաւորել ահա ու բիւր երա-
ջանկութիւններ մաղթել Զեզ : Ինչ որ գրեմ , կ'զգամ
թէ շատ տկար տողեր կուգան գրչիս տակ . այնչափ
մեծ է միշտ հիացումս և սէրս Զեր մասին : Իցիւ Զեր
օգտակար կեանքը սահի յաւէտ յաջողութիւններով
պատահած և Զեր տուն երկնային օրհնութիւններու
բոյրերով լցուած :

Սիրելի՛ մօրեղբայրս , միշտ երախտապարտ եմ Զեզ:
Ուստի պէտք չէ ուղղեմ Զեզ պարզ եւ սովորական

մաղթանքներ, այլ անվերջ սիրոյս պարագը լիուլի հաստուցանեմ : Ո՞հ, իմ երազս է տեսնել Զեր կեանքը երկար և երջանկութիւններով լիցուն, ինչ որ ինձ համար անսպառ ուրախութիւն է :

Համբուրելով Զեր պատուական ձեռքերը՝

Մնամ Զեր հնազանդ քեռորդին

[Թուական]

* * *

ԸՆԴԿԱՅՑՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Նոր տարի մաղրել կենամօր մը . — Նոր տարի մաղթեցէք . յայտնեցէք ձեր սէրը . — Զեր ընտանեաց վրայով լուրեր հաղողեցէք : — Վերջարան :

2. Մատաղ դուսար մը իր հանիքին . — Մատաղ աղջիկ մը իր նոր տարւոյ բարեմաղթութիւնները կ'ուզզի իր հանիքն . — Նոր տարի մը ի վեր իր հանիքն բաժնուած է . — Անցեալ կեանքի յիշտաներ : — Այս աղջիկը՝ որ մայր չունի, հանիքն ինամքները վայելած է :

3. Մեր հօրը . — Մեր հայրը ուղեւորութեան մէջ է, կը շնորուած տնախարժութիւնը մեզի ուրախութիւն չպատճառեր, որովհետեւ

4. Պատախան նոր տարւոյ բարեմաղթութեանց . — Դըժար է ինձ պատախանել սիրոն բարեմաղթութեանց : Նոր տարւոյ մէւերը այնքան կը գործածուին, այնքան կը կրկնուին, որ մարդ կ'ուզէ զաննը բոլորդին փոփոխել, բայց ինձ համար գարձեալ բազցը է երջանկութիւն մաղթել անոր՝ որոն կը պատախանեմ :

5. Ուրուի մը իր մօրաբրոցը՝ որ զինք մեծցուցած է . — Անուան շնորհաւրութիւն . — Կը ցաւի որ անցեալ տարւուան պէս իդերը մինար յայսնել կենդանի բարբառով . — Փորրիկ աղջիկը միշտ հլու չէ եղած . — Այս տարեգարձին առնիւ կ'որսչի հնազանդ ըլլալ . — Երկամթուզոյ միջցան նույի մը կը զրկէ . — Սրճակուրդի

ԳԼՈՒԽ Բ.

ՆՅՈՒՅՆԱԿՈՂՈՒԹԵԱՆՑ, ՆՅՈՒՅՆԱԿՈՂՈՒԹԵԱՆՑ,

ՅԱ. Ի Ա. Կ Յ Ա Ի Թ Ե Ա. Ն Ց, ՅԱ. Ն Զ Ն Ա. Ր Ա. Ր Ա Ի Թ Ե Ա. Ն Ց

Ն Ա. Մ Ա. Կ Ա. Ն Ի Բ

Դիտաբուրիւն . — Շնորհակալութեան համակներու ոնին զրլաւու հիմն է ըմդիմեապէս մատուցուած ծառայութեանց համաեւախազիւսուրիւն յայտնել . ուստի այս զգացումը պէտք է արտայսուի թէ անկեղծութեամբ եւ թէ փափկութեամբ : Սակայն (որչափ ու ալ զովենի, ինչ է այն անձն՝ որ իր համակարգական դասուց մէջ այս մասին եւախազիւսութեան իր վրայ դրած պարտերը լիովին իր կատարէ :) Սակայն, կ'ըսեմ, ատիքնաներ եւ սամինաներ կան, զորս պէտք է հարսան կենցով պահէն : Անկարիկի է հոս որու սամինաներ տալ թէ ո՛ր պարագաներուն մէջ ի՞նչ ո՞ն պէտք է գործածել . այս մասին սիրտն եւ ողջմուրիւնը կրնան առաջնորդ ըլլալ . սակայն չմունանի բակրու թէ բնդիմուր առմամբ ընունակալութիւն յայտներու համար հանրէ կ սոտին ոնի խոյս տալ, իր արժանապատուութիւնը չք կորսցնել . եւ մանաւանդ իր ասացուածիք մատուցուած ծառայութեան տեսակին համեմատել : Ո՛մ մը, այս տեսակէտով, կատարեալ եւ հրապուրիչ կրլալ, եթե եւախազիւսութիւն յայտնուի առանց ըորունքութեան, եւ երբամուրիւնը զուարբութիւն մը տայ այս տեսակ համեմակներու որոնի ի բնի բաւական չոր կ'ըլլալ : Անսարակոյս պէտք է ընորհակալ ըլլալ զինք եւախասայս ընող անձանց, բայց նույ պէտք է զգոյն մեալ, որ փիխանակ անօնց հանոյի պատճառելու, անձնց աւելի ծանծերոյր չպատճառելու :

1. Բարերարի մը :

Մեծանուն Տէր ,

Դժուարին է ինձ գտնել այնպիսի բառեր՝ որոնք յայտնեն երախտագիտութեանս խորին զգացումներն Զեր նոր բարեգործութեան համար՝ որով հաճեցաք զիս պատուել : Դուք իմ գերազանց խնամակալն էք, վասն զի ամէն դժբաղդ պարագայի մէջ ինձ ձեռք կը կարգանք : Յիրաւի Դուք իմ երախտագէտ սրախն համար այն էք, ինչ որ արեւուն լոյսը այն նաւաստիին՝ որ մրրկէն է աղատած :

Դոհութիւն երկնից, վասն զի ամէն դժբաղդութեանց մէջ զՁեղ ունիմ, ամէն առթիւ կը սիրեմ պատագին նայուածքս Ձեղ ուղղել, մեծահոգի բարերարիդ, որուն քով թշուառութիւնը սփոփանք կը գանէ:

Տէ՛ր, իցիւ երախտաւորիդ կեանք յաւէտ թռչի տուն և գերդաստան վայլի աւելի պայծառ, և Դուք Զեր սիրելիներով շրջապատուած՝ կարող ըլլաք միշտ բուժ այդ է միայն Զեր սրախն պէտքը, Զեր քաղցր հաճոյքը :

Խորին մեծարանոք առ Ձեղ
Ամենախոնարհ և ամենահնապանդ ծառաց
[Թուական]

* * *

2. Դասիարակի մը :

Ազնիւ դաստիարակս ,

Այս պահուն երբ չնորհակալութեան մրմունջներ կ'արձակեմ, մտքով կը շրջիմ այն երջանիկ ժամանակ՝ ներուն մէջ, մինչ Զեր Ազնուութիւնը, դաստիարակ անունին գերազանցապէս արժանի՝ օգտակար դասեր կ'աւանդէիք : Զէի զգար այն ատեն մեծութիւնն այն գործոյն՝ որուն նուիրուած էր Զեր կեանքն, այլ կ'ուրախանայի միայն զի երկինքն ինձ պարզեւած է դաստիարակներու ամենէն պատուականն, գորովալիցն, որ իր պաշտօնի մեծութեան հաւասար ունի հոգւոյ մեծութիւն :

Տէ՛ր, յաւիտեան չպիտի մոռնամ Զեր երախտիքն . Ես ծնողական բունին վրայ աճած տկար ոսա մ'էի, Դուք, յաջողակ' պարտիզպան, ամէն խնամք նուիրեալով պաղալից բարունակ մը ըրիք զիս :

Ցիշողութիւնն հաւատարմաբար կը պահէ ձեր խօսքեր՝ զորս աննախանձաբար կ'ուղղէիք ինձ, բարոյականի այն պատգամները, սկզբունքներ՝ զորս կը սերմանէիք հոգւոյս մէջ և կը բանադառէիք ինձ ունենալ մտքի և սրտի ազնուականութիւն: Մանկական հասակի յիշատակները դիւրաւ կը ջնջուին, բայց Զեր յիշատակները ատոնցմէ չեն . անջինջ են անոնք, այսօր եւ յաւիտեան :

Ինչո՞ւ . — որովհետեւ Զեր դասախոսութիւնները, հայրական սիրան անհնար է որ մոռացութեան մատնուին : Իսկ եռ, սիրելի՝ դաստիարակս, պիտի ջանամ Զեր խրառներուն արժանի ըլլալ, պատուաւոր դիրք մը շահիկ ընկերութեան մէջ, որով այն ատեն մանաւանդ պիտի համարձակիմ կոչուելու :

Զեր երախտագէտ սահը
[Թուական] * *

3. Գրագետի մը ուղղեալ՝ անոր գրական գործունեաւ-
թեան մասին շնորհակալութիւն :

Տէ՛ր,

Ներուի ինձ համարձակութիւնն՝ որով կուգամ
յայտնել Ձեզ տածած լուռն համակրանքս: Յիրաւի Ձեր
դրիչն մոդական բան մը ունի իր մէջ՝ որով կը դիւ-
թէք զմեզ, անզգալարպ կը հրահանդէք զաշխարհ: .
Երբ կը կարդամ Ձեր նրբիմաստ հրապարակախօսի
դրութիւնները, կը յափշտակուիմ, և կը մտածեմ թէ
Ձեր Աղնուութիւնը անշուշտ այն մեծ մարդոց սերուն-
նուին հոս և հոն ճշմարտութիւններ քարողելու :
Իցիւ երկար տարիներ կատարէք Ձեր հանրօգուստ
դերն, որ որչափ ալ շինիչ և բարոյացուցիչ է, սակայն
աւաշ, ասկերախտ է մեր մէջ :

Բայց Դուք չնայելով ամէն արգելքներու՝ կը դիմէք
Ձեր սուրբ նպատակին, նուիրելով Ձեր անձը հանրու-
միայն կ'արժանանաք ընդունելու փառքի պատկը :

4. Եղբօր մը ամուսնութիւնը շնորհաւորել:

Սիրելի՛ եղբայր իմ,

Համենաբուռն խանողով կը փութամ չնորհաւորել եր-
շանիկ ամուսնութիւնդ և մաղթել նորակազմ տաճա-

այն ամէն բարիքներ, ինչ որ կ'զգայ եղբօր մը սիրուը:
Սուրբ օրներգութիւններով հիւսուած Ձեր պսակը ի-
ցիւ յաւէտ բոլորեն երանութեան մշտաթարմ ծաղիկ-
ներ, ծաղիկներ կարծես երկնալին գրախաէ քաղուած:
Եւ բարի կեանքին այս չէ արժանի վարձքը, այն
կեանքին՝ որուն ի տղայ տիոց նշանաբանը կ'ըլլայ հաս-
տատուն առաքինութիւնը, որուն միակ իտէալը չքնաղ
ձիրքերով զարդարուիլն է: Այսպէս է և քուկդ, սիրե-
լի՛ եղբայր իմ, ուրեմն ես իրաւունք ունիմ հաւատալու
թէ այս նոր կեանքիդ մէջ ալ պիտի տեսնես իդձերուդ
պսակումը, յոյսերուդ իրականացումը :

Ուշախ եմ որ չնորհալի անբաժան կենակից մը պի-
տի կրնայ երջանկութեան երազդ իրականացնել և տալ
քեզ սուրբ վայելքներու ճաշակը: Աստուած օրնէ
միշտ Ձեր սուրբ և իր հովանին ըլլայ Ձեր առաջնորդը
կեանքի՛ դժուարին ճամբան վրայ :

Համբուրելով Ձեր երկուքին ալ նորապսակ ճակատ-
ները՝ մնամ միշտ Ձեր երջանկութեան բարեմաղթու

5. Հարսանեկան շնորհաւորագիր :

Ազնուաշուք Տէ՛ր և Տիկին,

Ձեր չնորհաչուք դատեր հարսանեաց հրաւիրագիրն
պատիւ ունեցայ ընդունիլ :

Շնորհակալութիւնն այն պատուոյն համար՝ որով հա-
ճած էք և զիս ինդակից ընել Ձեզ: Եղուկ, զիս հար-
կեցուցիչ պարագայ մը հետու կը պահէ զիս այդ չքեզ
հանդէսէն :

Սրդ ի հեռուստ կը խառնեմ տկար ճայնս հանդի՛
սականացդ զուարթ ճայներուն հետ, մաղթանքս՝ ա-
նոնց մաղթանքին, հոգիս՝ անոնց հոգիին, հայցելով
երջանկագոյն կեանք մը այս նորապատկ ամուսիններու-
համար :

Ահա նոր յարկ մը ևս կը բարձրանայ նման այն
բոյնին՝ զոր գրաւիչ երգերով կը դնէ ծիծառնը գար-
նան ծաղկիներու, սիւքերու, շաղի ու շողի մէջ . անոր
լուսեղին սեմին վրայ կը կանգնի կոյսն մանկամարդ,
չնորհագեղ, ամօթլեած . իր տկարութեան մէջ հզօր
իր երկչոսութեան մէջ դիւցազնուհի մը, իր սրբու-
թեամբ տոմնը տաճարի պիտի փոխէ և կամ դրախտի
մը՝ ուր կը փթթի ծաղիկն, ուր կը փայլի ճաճանչն
ուր կը շողայ և սէրն :

Եւ կայ միթէ աշխարհի մէջ աւելի հմայիչ բան մը:
անկէ աւելի, երբ օր մը զիրար կը գտնեն երկու էակ-
անծանօթներ, որոնք այսօր բարեկամ ու բարեկամուհի
կ'ըլլան, նոյն խակ եղբայր և քոյր, և իրարու հետ կը
բաժնեն իրենց հաճոյքն ու ցաւն, իրենց ժպիտն ու ար-
ցունք, ամէն տենչեր, ամէն յոյսեր, ամէն երազներ :

Եյսպէս ահա Զեր դուստրն ալ կը միանայ օժտեալ
նէ՛ յաւէտ ամէն բարօրութիւն . անոնց ծաղկապատկ
Ահա այս է մաղթանք Զեր մտերմին :

[Թուական]

* * *

6. Քրոջ մը կողմէ իր քրոջ ամուսնութիւնը
շնորհաւորել :

Քաղցրի՛կ քոյր իմ,

Վերը, անհուն կապոյտին մէջ թռչունին
թեւերն ունենայի, համար քու եսեւէդ, ո՞վ
քոյր իմ, որ ահա կը հեռանաս մեր գրկէն : Բայց ուր
որ ալ ըլլաս, դէպ ի քեզ պիտի թռչին մեր սրտագին-
մաղթանքներ, ու ականջներդ երկար ատեն բիւր բիւր
ձայներու մէջէն քուկիններուդ ձայնը պիտի լսեն, քու
երջանկութեանդ երգերով թրթռացող անոնց չրթնե-
րուն վրայէն :

Ո՞հ, քաղցրի՛կ քոյր իմ, մինչ կը հեռանաս, գիտե՞ս,
գիտե՞ս արդեօք թէ ի՞նչ պարապութիւն կը բացուի հոս-
այս մեր ընտանեկան դրախտին մէջ քու մեկնումովէ ։

Թէև հեռու հեռու, բայց երազներու մէջ պարտող
հրաշալի ոգիներու պէս, անուշ տպաւորութիւն մը պի-
տի կաթեցնես միշտ մեր կեանքի բաժակին մէջ . բարի
հրեշտակին պէս զոր մեր աղօթքներուն մէջ կը տես-
նենք, քեզ ալ այնպէս մեր մօտը պիտի կարծենք ու
ժպիտներով պիտի ողջունենք քեզ :

Կարելի չէ կասեցնել ընթացքդ դէպի այն լուսաւոր
ճամբան՝ ուրկէ կ'անցնիս վարդեր կոխոտելով թև թե-
ւի տուած այն ազնիւ երիտասարդին հետ՝ որ քու ա-
ռաջնորդդէ, Տուքիթի պահապան հրեշտակին պէս քու
քայլերուդ հսկող, քու ուրախութիւններուդ ընկեր-
անբաժան : Ուրեմն թող բարին Աստուած վերէն չնոր-
հէ Զեզ իր մեծ պարգեւը, երջանկութիւնը, վարձքը
Զեր ազնիւ կեանքին, մըցանակը Զեր առաքինութեան:

Ահա սրտագին մաղթանքս, անկեղծ սրտիս անկեղծ
չնորհաւորութիւնը քեզ, ովք քոյր իմ քաղցրիկ :

[Թուական]

Միշտ քուկդ

* *

7. Աղիս հիւանդի մը՝ որ այն ինչ ապահինած է,
շնորհակալուրեան նամակ իր բժշկին :

Գերադնի՛ւ Տէր,

Եթէ մարդասիրութիւնը մեր ընկերական պարտա-
կանութեանց առաջինն է, եթէ քաղցր է մեր արցունք-
ւորութիւն մը՝ որ մեր արցունքը կը սրբէ, և կ'ըսէ.
Պարտ է մեզ երախտագէտ ըլլալ այն չնորհներուն,
զորս յանուն մարդասիրութեան կ'ընդունինք, այն բա-
րիքներուն, որ մեզ կ'ընծայուին առաստաղէս :

Տէր, դեռ նոր աղատած հիւանդութեան տագնապ-
ինամքին պարտք կը նկատեմ ինձ Ձեր անձանձիր
Ձեզ կը պարտիմ. նուազուն աչքերով կեանք
ինչպէս կը մաքառէիք չարագուշակ ախտին դէմ, որ
իմ էութիւնս քայլայել կ'սպառնար, ինչպէս ոզի ի
անոր ամէն հնարքները, և ամէն օր, ամէն ժամ նոր
յոյս կը ներչնչէիք ինձ. Ահա անցան զացին կենաց
կը վերասանամ: Իրաւ է որ հիւանդութեանս մէջ այն-

քան չէի սոսկար մահուանէ, բայց այժմ կ'զգամ թէ
ի՞նչ պարապութիւն պիտի թողուի մահուամբս մեր տան
մէջ, զի տնիմ հայր ու մայր, որոց անմիջական նեցուկն
եմ և որոց համար դառն է իրենց ձեռօք վակել օրհասի
վայրկեանին մարած աչքերս: Բժշկութիւնն անհրա-
մեշտ պէտքի մը, կենաց պահպանման ծնունդն է, այն
միջոց մըն է վերին Տեսչութեան՝ որ մեր քայլերուն
առջև սփառած է ծաղիկ, տունկ, բոյս մեր ցաւերուն
և ախտերուն իրեւ դարման և ասկէ յայտնի է թէ եր-
կինք անգամ չհաճիր տարաժամ մահերու:

Ուրեմն յաւէտ օրհնութեանց արժանի էք Դուք, ո՛
Գերազնիւ Տէր, երբ կը կատարէք աստուածային գործ,
երբ մանաւանդ ինձ նման աղքատ հիւանդներու կեանք
կը բաշխէք ասանց որեէ շահու ակնկալութեան:

Երբեք չպիտի մունամ Ձեր այս ծառայութիւնն և
միշտ Ձեր արեւշտութեան չերմ իղձերով պիտի մնամ
Ձեզ՝

Երախտագէտ և ամենախոնարհ ծառայ
[Թուական]

8. Մանկան մը ծննդեան առիւ շնորհաւորական
նամակ :

Տէր,

Ո՞րչափ կը բերկրիմ այս պահուն, մինչ աստուածա-
յին չնորհք կը զեղու Ձեր տան մէջ, մինչ նորածին մը
կարծես լուսափթիթ ամպոց կողերէն վրթած ճառա-
գայթ մը կ'ողողէ Ձեր տուն ուրախութեամբ, կը բերէ
Ձեզ երջանիկ հանդէս, որ իցիւ սկիզբն ըլլար շատ մը
երջանկաւէտ ասիթներու: Ցարդ այս մանկիկ հրեշտակ

մ'էր , երկնքէ երկինք թռչառող , այժմ որդի կ'ըլլայ Ձեզ , ցարդ ծաղիկ մ'էր երկնային դրախտին , այժմ կը ծվի Ձեր բուրաստանին մէջ՝ քաղցրիկ բոյրերով և չնորհագեղ տեսքով : Եւ հիմայ մտքով կը մտնեմ այս երախայի փառաւոր ապագային մէջ , կը տեսնեմ աճած հասակով և իմաստութեամբ . ամենքն երանի կուտան իր ծնողքին , մինչ փառքով պսակուած կ'երեւի աշխարհի առջեւ . իր պայծառ ճակատը կը թրջուի բարի հօր և մօր սիրակաթ համբոյրներով և առաքինութիւնը կը վարձատրէ զանի անմահ դափնիներով :

Այո՛ , դեռ փափկիկ և տկար է , բայց այդ քնքուշ մարմնոյ մէջ մեծ հոգի մը կը բնակի , և սրտիկը կը բարախէ սրբութեան և անմեղութեան համար :

Արդ անոր և Ձեզ միշտ երջանկութիւններ մաղթելով՝

[Թուական]

Եմ

Ձեր խոնարհ ծառայն

* * *

9. Շնորհաւորական նամակ մեծ հօր ուղղուած :

Ամենասիրելի՛ մեծ հայր իմ ,

Չունիմ տարբեր բան մը յայտնելու Ձեզ , այլ ինչ որ յաճախ , գրեթէ ամէն ժամ կ'զդամ , ինչ որ միտքու մամբ սէր և երախտագիտութիւն , ինչ համար տառու ամէն օրն է , վասն զի ամէն օր , ամէն ժամ Ձեզ մով կ'ուրախանամ . Ձեր սիրով կը բարախէ սիրոս :

Ուրախութիւն է ինձ ունենալ մեծ հայր մը , մեր գերդաստանի փառքն :

Մայս շատ անգամներ ինձ խօսած է Ձեր աղնիս ձիրքերուն մասին . ո՞հ , ի՞նչ բերկրութիւն ինձ , եթէ ունենամ Ձեր սրտի բարութենէն կայծ մը , Ձեր աղնուութենէն ճառագայթ մը :

Իցիւ կարենայի աւելի հրապուրիչ ոճով բացատրել զգացումներս . դեռ խօսելու անգօր երախայ մըն եմ կարծես . նաև որ միայն իր տպաւորութիւնները արցունքով կամ ժամանով կը յայտնէ : Կ'ուղեմ խօսիլ , բայց գաղափարիս թուիչ տուող բառեր ինձ կը պակսին :

Սակայն Ձեր ներողամտութեամբ քաջալերուած այս մի քանի տողերով կը յայտնեմ Ձեզ ջերմագին բարեմաղթութիւններս :

Հաւատացէ՛ք , սիրելի՛ մեծ հայրս , Ձեր նկատմամբ տածած զգացմանց անկեղծութեան և անլերջ սիրոյն և ընդունեցէք , կ'աղաչեմ , զիս՝

[Թուական]

Ձեր չնորհապարա դուստր

* * *

10. Շնորհաւորութիւններ բարեկամուհիի մը ուղղուած :

Սիրելի՛ իմ Գոհար ,

Կը յիշե՞ս այն օրն , երբ ի միասին կը շրջէինք Պէօյիւքտէրէի քարափանց վրայ , տեսանք ծերունի մը որ մենէ ողորմութիւն խնդրեց : Հէքն բոկանի էր , տժգոյն , ողորմուկ և վաստակաբեկ : Աւա՛զ , մեր նըսպասն ի՞նչպէս կարող էր սիրովել թշուառին այնքան

տառապանցնքն : Տիրութեամբ կը դիտէիր ծերունիին հեռանալը , և սպարապ քսակդ ինձ ցոյց տալով , կը ցաւէիր որ չես կրնար աւելի սփոփել թշուառներն : Այն ատեն արտասուալից էին աչերդ և սեղմելով ձեռքս , լաւ կը լիշեմ թէ այսպէս ըսիր . « Ա՛ն , ինչու հարուստ չեմ » :

Անշուշտ բարերար ոգի մը լսեց քու ճայնդ , երկինք սպակեց իզձերդ , որովհետեւ դու այսօր հարուստ ես դեռ նոր ստացած ժառանգութիւնովդ :

Ասով կը չնորհաւորեմ քաղաքիդ աղքաները , զորս երջանկացնելու ամէն դիւրութիւններով օժառած ես հիմայ : Շատեր սպակի օրհնեն քեզ . Ենչ փոյթ թէ երախսիք ապերախտներու սպատահին :

Շնորհակալութիւն , սիրելի մտերմուհիդ իմ , վասն զի հաճած ես առաջին առթիւ տեղեկացնել ինձ քու երջանկութիւնու :

[Թուական]

* * *

11. Շնորհակարուրին լնկերուհիի մը կողմէ իր ընկերուհիին :

Քաղցրի'կդ իմ ,

Դու ես ականատես եղար այն ցնծութեան , երբ գլորոցէս հրաժարեցայ :

Արդարեւ չատ երջանիկ էի , վասն զի նորէն սպակի կը գեղեցկանան : Հրձուանքս կատարեալ էր , վասն զի նոյնպէս գոնէ էի որ վերատին կը դանէի իմ սպիտակ

կը բարեյարդար սենեակս , վասն զի ալ չափակի լուծէի ինդիրներ , չպիսի գրէի շարադրութիւններ , և նու Անչափ գոնէ էի , որ պահ մը մտածեցի լճակը նետել գրքերս , տեսպերս , վերջապէս ամէն բան՝ որ ինձ կը յիշեցնէ դպրոցական կեանքը :

Ե բարեյարդար սենեակս , վասն զի ալ չափակի լուծէի ինդիրներ , չպիսի գրէի շարադրութիւններ , և նու Անչափ գոնէ էի , որ պահ մը մտածեցի լճակը նետել գրքերս , տեսպերս , վերջապէս ամէն բան՝ որ ինձ կը յիշեցնէ դպրոցական կեանքը :

Բայց հիմա այս նախկին եւանդս նուազած է : Ո՞հ , կը սիրեմ տակաւ մտածել դպրոցին վրայ , ուսուցչացու վրայ , ընկերունեաց վրայ՝ որոնց հաճոյքին և վշահերուն մասնակից էի . ընկերունեներուս՝ զորս գոյցէ յաւէտ չտեսնեմ , որովհետեւ ո՞վ գիտէ թէ ապագան մեղ ո՞ւր պիտի տանի :

Երբ այս ամէնը կը յիշեմ՝ հոգիս կը վրդովի : Կը վայելեմ ծնողքիս տեսքը , բայց կը ցաւիմ կորուսանել վրայ , և կորուսաներս ասոնք են , ուսուցիչներ բուս վրայ , և կորուսաներս ազնիւ ընկերունեներ , Դուք . Վերեւ ուսուցչունեներ , ազնիւ վերջանեներ , Չապէս կը խառնէ :

Ի՞նչու կատարելապէս երջանիկ չենք կրնար ըլլալ : Ա՞հ , և թէ հեռաւորութիւնները կը բաժնեն մեզ , թող Ա՛ն , սիրելի մեր նամակները մերթ ընդ մերթ զմեզ իրարու մօտեմեր նամակները մերթ ընդ մերթ զմեզ իրարու մօտեմեր նամակները , որպէս զի կարելի եղածին չափ կենդանացնենք ցընեն , որպէս զի կարելի յիշատակները :

Շնորհակալութիւն այն չքնաղ նուերին համար՝ որով կը յիշեցնես ինձ մշտավառ սէրդ : Ես կարող չեմ կենդանի բացարութիւններով յայտնել ինչ որ կ'զգամ քեզ նկատմամբ :

Մնա՛ս բարով , սիրելի՝ մտերմուհիս , դուն ալ փառքէ՝ ընտանիքին ծոցը վերադառնալուդ , բայց յիշեմ՝ վարդար թողլով ուրիշ տեղ վնասուես երջանը երբ գորոցը թողլով ուրիշ տեղ վնասուես երջանը , սպակի հրաժարիս նաև չատ մը ուրախութիւն , որոնց վրայ սիրագ ուշ կամ կանուխ սպակի թիւններէ , որոնց վրայ սիրագ ուշ կամ կանուխ սպակի :

[Թուական]

12. Կեմակօր մը նամակն իր սանուհիին՝ որ դեռ
նոր աւարտած է դպրոցական շրջանը :

Սիրեցեա'լդ իմ,

Եթէկ ընդունեցայ նամակդ՝ որ ինձ մեծ հաճոյք
ապատճառեց, որովհետեւ անով հասկցայ թէ գիւղական
աշխատութիւններ քեզ չեն մոռցուցած դպրոցը : Կը
ԱՇ, ես սպասուհի մ'եմ, որ խոհանոցի գործեր տես-
ուրկէ շատ մը անփուսափելի աղետքներ յառաջ կու-
թեան վրայ, զոր թէ՛ բարւոք ընթերցումներ կը պատ-
ճառեն և թէ՛ գրութիւնք՝ որոնցմով մեր մտածումնե-
մեծ մեծ բարիքներ յառաջ կը բերէ : Որովհետեւ զո՞ն-
ոգի ունիս, հարկ կը համարիմ քեզ չօշափելի օրինակ
թեան :

Հօրս կալուածներուն մէջ կան երկու բաւական կա-
րեւոր ագարակներ : Մին յանձնուած է Պետրոսի՝ որ
կ'ըսէին թէ թէպէտ չունի հարսաւութիւն, սակայն իր
դասերէն օգտուած է . միւս կալուածն կը յանձնանձէ
մեծ հարսաւութեան մը տիրացած է :

Երկու վարձակալներն ալ հաւասարապէս մտացի են,
աշխատասէր, և պարկեշտ. ուրեմն ինչո՞ւ համար Պետրոս

Հյառաջդիմեր, մինչ Գրիգոր լաւ դիրքի մէջ է և մտա-
դիր է արդէն փոքրիկ գաշտ մը դնել : Միոյն բախտն
յաջո՞ղ է և միւսին ոչ : Արդեօք կարկուտը և եղեամը
միոյն կը խնային և միւսը կը հարուածեն : Ո՛չ, բայց
Աստրինէ, որ գիտէ կարդալ, գրել, հաշուել, կանոնաւո-
րապէս կը բանէ տեսորակներ, առուծախի հաշիւներ, և
բապէս կը բանէ տեսորակներ, առուծախի հաշիւներ, և
ոչ ոք կարող է զանի խարել: Երբ օր մը ծախքը մուտ-
քէն աւելի ըլլայ, ամէն ինսայողութիւն ի գործ կը դնէ
որպէսողի հաւասարակշռութիւն պահուի. ամէն ինչ կար-
գին է հոն, ոչ գրամ կը կորսուի և ոչ շուայութիւն
կ'ըլլայ: Մանաւանդ երբ ամուսինն և ծառայք երեկոյին
առուն դառնան, օրուան աշխատութիւններէ յոդնած, ե-
րիտասարդ վարձակալուհին կը կարդայ անձնյ շահա-
գրգիւս և զբօսուցիկ գիրք մը :

Ամէն ոք կ'ունինդրէ Աստրինէի և ոչ ոք գինեսուն
կ'երթայ: Ասով նա գիւրութիւններ գտած է քաղաքին
մէջ վարկ բանալու իր ամուսնոյն համար, և Պետրոս
այս դասերէն իրաստուած օր աւուր կը բազմացնէ իր
հարսաւութիւններն, ընդհակառակն Գրիգոր որ և է օգու-
մը չքաղեր իր կնոջ գիտութիւններէն, ոչ մէկ գիւրու-
թիւն կը գտնէ իր տան մէջ:

Թէպէտ անոր կինը Սիրաբիի մեծ դրամօժիտ բերած
է, սակայն օրէ օր կը ծախսուի այն, աղախիններ, ծա-
ռաններ կը վարուին իրենց ուղածին պէս : Երեկոնները
փոխանակ ընթերցումներ մտիկ ընելու, կը կանչէ դրա-
ցիններ, կ'արբենան, կը խաղան և դրամը կը վատնուի :
Ագարակին հասովթը տարուէ տարի կը նուազի, և վար-
ձակալը նորանոր պարտքեր կ'ունինայ: Ահա թշուասու-
թիւն : Այսպէս կը տեսնես, սիրելի՛դ իմ, մէկ կողմէն
տղիտութիւն և աղքատութիւն, և միւս կողմէն գի-
տութիւն և բարեկեցութիւն :

Աշխատէ՛, աղջիկս, օգտուե՛ այն դիւրութիւննեռէն՝ որո՞նք քեզ ո՞չ թէ գիտուն մը, այլ ուսեալ մը պիտի հանդիսացնեն : Դարոցը քեզ սորվեցուցած է կարդալ, գրել, քերականութիւն, հաշիւ . խորհէ՛ անոնց վրայ որ քեզի ըսած են, և անոնց՝ զրոս գուն աչքերով պիտի տեսնեն : Աւելին չեմ պահանջեր : Քեզ իբրև քաջալեր՝ ընթերցման մի քանի դրքեր կը յղեմ : Գրէ՛ ինձ մերթ ընդ մերթ, որպէս զի քու յառաջդիւմութեանդ տեղեկանամ :

Ծնորհաւորութիւններս դպրոցական շրջանն յաջողապէս աւարտելուդ համար :

[Թուական]
(Թարգմ.)

* * *

13. Հօր անուան տօնի առիւ աղջիկան մը նամակ :

Բաղմերա'խտ հայր,

Ո՛չ, սոսոերի մէջ չպիտի նիրհէ յիշատակու, սոսութք և պաշտելի յիշատակու, որ կենացս առաջին բուլէին մանկական խոլ ժամաներուս ու արցոննքներուս մէջէն երեւցաւ : Բարւոյն դէմքն եր այն, արդարի դէմք, որ որրանիս վերև ցողացաւ :

Ո՞վ քաղցրիկ երաղ մանկութեանս :

Դու, ո՞վ սիրելի հայր, խունկեր ցանեցիր այն մթնոլորտին մէջ՝ ուր արե տեսաց, մեղք լեցուցիր կեանքիս բաժակին մէջ, երջանկութիւն ինձ նուիրեցիր:

Նորափթիթ կեանքիս ամբողջ ախնը և սէրը կը նուիրեմ քեզ . ո՞չ, ամէն ժամ խանդ մը կը հրդեհէ

նոգոյս մէջ, երախտագիտութեան կրակը զիս կը լափէ :

Յաւէտ օրհնութիւն քեզ :

Սիրելի հայր, թէպէտ հետո, բայց կուգամ ձայնս խառնել անուանդ չնորհալի հանդէսին մասնակցողներու բարեմազթութիւններուն և կ'ալջեմ որ ընդունիս ջերմ զգացամներս թանկագին կեանքիդ երջանկութեան և երկարութեան համար :

Միշտ

[Թուական]

Ամենահլու դուստրդ

* * *

14. Դասիարակունիի մը հրաժեշտին առիւ իր սանուհեաց շնորհակալութեան նամակ :

Ծնորհաշութք Դաստիարակունի,

Մինչդեռ զուարթ մանկութիւնը ժպիտներ կը չարէ մեր ըրմէներուն վրայ, մինչդեռ մեր անտիական կեանմեր շրմէներուն վրայ, մինչդեռ մեր ներչնչէ, բայց ահա, քը մեզի արախտութիւններ կը ներչնչէ, բայց ահա, ի՞նչ փոփոխութիւն, կը մոռնանք այս պահուն այդ ամէնը և յանկարծ տիպութիւն մը մեր նայուածքները կը վարագութէ :

Ամսէ մը ի վեր մեր խօսակցութեան միակ առարկան Դուք եղաք . ամէն աշակերտունի արտասուելու կան Դուք եղաք . ամէն աշակերտունի արտասուելու չափ յուղուած չեշտով մը սա բասերը միայն կ'արտաշատի յուղուած չեշտով մը սա բասերը միայն կ'արտաշատի յուղուած չեշտով ներէին, շատ բաներ կ'ուզէինք եթէ մեր յոյզերը ներէին, շատ բաներ կ'ուզէինք վախարէին պիտի ամանդամայն թէ Զեր նոսիլ, բայց քաջ գիտնալով միանդամայն թէ Զեր աչակերպափուուկ սիրան աւ արդէն չպիտի տուլար Զեր աչակեր-

'

առնեներու վերջին խօսքերուն, ուստի բայ. կը համարինք լոկ ակնարկ մը նետել Զեր յիշատակներուն վրայ:

Դուք, ո՞վ սիրելիդ մեր, մեր երեց քոյրն, մեր կաթողին մայրն հանդիսացաք այսքան տարիներ. այս սրան՝ որուն ամպիոնէն մեր բարեկրթութեան պատգամներն արձակեցիք երկար տան, ցնծութեամբ տեսաւ զջեղ անձնուէր դաստիարակունի, զջեղ սանունացոց բարի ուղևոցց, զջեղ, սիրոյ և գորովանքի քաղցր առաքելունի, ու հիմայ կը թողուք զեր բեմը, կը թողուք զեր սանունիները, ու մենք մեր անզօր թեւերով զեր ընթացքը կասեցնելու անկարող, կը զնենք ահա զեր ոտքը մեր անհուն չնորհակալեաց, երախտադէտ զգացումներու փունջը, ու կը գոչենք երջանկութիւնը զեր տունը:

Միշտ զեր չնորհակարա սանունիք
[Թուական]

15. Քրոջ մը նամակը իր եղբօր ուղղուած. —
Անուան շնորհաւորութիւն:

Խանդակաթ եղբայր իմ,

Սովոր պատեհագոյն է ահա, սիրելի անուանդներ, որ կը նորոգէ հոգւոյս մէջ ջերմագին զգացումը բարեմաղթութիւններս. բայց զորոցական կեանքը զիսդուն պանդուխտ, ևս պահէ: Նմանալիշտ ևսք երկուքս ալ, բայց գուն ինձէ

աւելի ժրաշան մեղու մըն ես աշխատութեան վեթակին մէջ: Սակայն անշուշտ պիտի անցնին այս տարիներ, և սիրալիր սիրազ պիտի գանէ դարձեալ իր ընտանեկան վառարանը, անոր շուրջ խմբուած իր հոգւոյն հատորները, հայր, մայր, և քոյր. հոն պահուած մեն իմ ուրախութիւններս, իմ երջանիկ ժամերս:

Սիրելի՛ եղբայրս, այս տարի ինձ համար խորհրդաւոր կերպով կը ներկայանայ անուանդ տարեղարձը, վասն զի աւելի քու սէրդ սրտիս կը խօսի. կ'զգամ թէ ինձ փառք է քեզ նման եղբայր մը ունենալ, օժտուած այն բարձր ձիրքերով՝ որոնք եթէ պատիւ են մեր տան, մանաւանդ ինձ երջանկութիւն են:

Ո՞հ, քաղցր է ինձ մաղթել որ ապրիս երկար և երջանիկ, և անուանդ միշտ փառքով հնչէ աշխարհի առջեւ:

Յաւէրժ անձնուէր քոյրդ

[Թուական]

16. Քրոջ մը իր եղբօր ուղղած շնորհաւորագիր:

Եղբայր իմ,

Ի՞նչ մակդիր կցեմ եղբայր բառին, որ ինձ համար քաղցրագոյն անունն է, և այն ինքնին կը բացատրէ ամենասիրելի որակականը:

Բայց քենէ հեռու տարիիլ, չվայելել քաղցրիկ տեսքը, շատ դառն էր ինձ, և ահա սահեցան գացին պանդխտութեան տարիներ, որոնց մէջ չնորհիւ անխոնջ աշխատութեան տանդ ուրախութիւնը և զիսդերդաստանիդ պատիւը աւելցնելու դիրք մը շահեցար, բազմա-

թիւ մրցակիցներու մէջէն յաջողեցար և դու բժշկական վկայագիր ընդունիլ . վկայագի՞ր՝ որ քու անհնման ձիրքերուդ գրաւոր երաշխիքն է . ոհ, ի՞նչ ուրախութիւն, մանաւանդ թէ ի՞նչ երջանկութիւն քրոջդ համար՝ որ միշտ իր ալոթքներուն մէջ կը խնդրէր երկրնքէն գերազանց յաջողութիւնդ :

Եւ հիմայ մաքովս կը շրջիմ այն վայրերն՝ ուր սփոփանք պիտի սփուռի ընդհուպ, յուսահատ հիւանդին անկողնոյն մնարը կանգնած՝ կեանք պիտի բաշխես անոր, պիտի սրբես շատերու արցունքը և զքեղ սիրելի պիտի ընծայես, որովհետեւ ճարտար բժիշկ մը օրնութիւն է մարդկութեան : Երբ կը մտածեմ թէ քու թանկագին ըին օրնութեանց, ամէն շրթներէ ներբողներ պիտի

եղբա՛յր իմ, ժամէ ժամ՝ կ'սպասեմ յանկալի դար-

ձիդ : Ահ, ո՞րքան մեծ ուրախութիւն պիտի սպասառէ մեր տան փառաւոր դարձդ . երկարատես բացակայութնդունիլ :

Համեսուրելով զքեղ կարօսոյ շրթներով՝

[Թուական]

17. Նամակ Տիկին Տը Սիմիանի :

Կը փափաքէի իմ երախտագիտութիւնս յայսնելու եղանակ մը գտնել՝ որ յարմարի և համեմատ ըլլայ այն մէջ ունի՛ խեղճ փռքրիկ Բեռնարին Զեր կողմէ եղած

բարւոյն համար : Դուք անոր լնիթացքէն դո՞ւ պիտի ըլլաք, աղէկ տղայ մըն է . նա Զեր բոլոր բարութեանց համապատասխան խանդ ցոյց պիտի տայ, որով մեր ամենուս ալ երախտագիտական պարտուց դոյզն ինչ բան ըրած ըլլայ . լաւ համոզուեցէք, եթէ հաճիք, որ ապերախտ կնոջ մը բարիք ըրած չպիտի ըլլաք և Զեր բարութիւններ այնպէս կ'աղդեն ինձ, որ բոլորովին Զեր կը նուիրուիմ :

Եթէ այսու հանդերձ վառանձ նաւու գրագիր կարգուի, չգիտեմ այլ ևս ի՞նչ ընել: Իմ մամս (Տիկին Սեղիննեէ) կ'ըսէր այսպիսի գէպքի մէջ թէ՝ երբ մարդ այս աստիճան երախտանու ըլլայ, ապերախտութիւնը միայն կրնայ ամէն բան թօթուել: Զեր մասին այս կերպ խորհուրդու զգացում մը չունիմ, ևայն :

[Թուական] (Թարգմ.)

18. Նամակ Վ . . . ի

Տէ՛ր,

Զեր ո՛քափ պարտական ըլլալուս վերահասու եղայ: Դուք չէք այն մարդոցմէ՝ որ իրենց բարեկամաց բարիք միայն կը մաղթեն, այլ դուք բարիք կը գործէք իսկ: Եթէ ուրիշներն ըլլային, պիտի ըսէին. Խնչայես եղնեղու ի ասոր մեցին: Եւ երբ մարդոց վրայ արդահասովի հարկ ըլլայ, կը թողուն զայն և իրենց ձաշին կ'երթան: Իսկ դուք ամէն բան կը կարգագրէք, և յոյժ արագ և յոյժ բարուոք, և ըստ ամենայնի ծառայութիւն կը մատուցանէք բարեկամաց :

(Թարգմ.)

19. Նամակ Տիկինն ըլ Մէկերընոնի առ Օր. . . . :
 Շատ ուրախ եմ Զեր տունորութեան համար : Անո
 որ Զեղ հետ կ'ամուսնանայ, շատ յարդելի անձ է. նա-
 խամեծար կը համարի Զեր առաքինութիւնն այն հա-
 բաստութիւններէն՝ զորս կրնար գունել և Դուք իւր
 վայելէք իրեն հետ : Այսպիսի զգացումներով ամուս-
 նութիւնն մը երջանիկ միայն կրնայ ըլլալ : Ասսուած-
 պիտի օրհնէ երկու ամուսիններ՝ որոնց յօդակապն է
 և պիտի յիշեմ յարաժամ որ սիրելի եմ Զեղ .

(Թարգմ.)

20. Առ օրիորդ մի՝ նորա նշանաւութեան առքիւ :
 Օրի՛որդ,

Այնքան բուռն է իղձս Զեր երջանկութեան համար,
 որ կը կարծեմ թէ անհար է որ ինձ չափ ուրիշ մը
 երկրի Զեր նշանաւութիւնը լսելով : Վաղուց արժանի
 խոնային ալ մշակեալ մտքի մը հետ կը կրէ բարի
 սիրու . ի բնէ քաջատոհմիկ է և այնպիսի ձիրքեր ունի,
 կեան, երբ թողլով հայրենի սունը պիտի երթաք Զեր
 ճակատագրին ետևէն . հզօր ճայն մը կը հրամայէ Զեր
 հետանալ ծնողական դրկէն իբրև նոր Ռեքեկա մը՝ ու-
 նա ըստ . կ'երթա՛մ :

Ուրեմն գնացէ՛ք և գուք, Ազնի՛ւ Օրիորդ, գնա-
 ցէ՛ք ողջունել երջանիկ կեանք մը ձեռք ձեռքի տուած-
 քնարեալ երիտասարդի մը հետ :

Այսպէս կը մաղթէ ի սրտէ Զեր աղգական՝

[Թուական]

Ց Ա. Ի Ա. Կ Ց Ա. Կ Ա. Ն Ե Բ

Դիտողութիւն. — Այս տեսակ նամակաց մէջ ամենէն կարեւոր կէտն է զգոյն կենալ սերեւրեալ ոնի մը պահանջումներն ու ոգին գործածելէ (Նամակներ՝ որոնց նպատակն է բա տվորութեան ազգականի մը կամ բարեկամի մը մահուամբ դիւրազգած անձանց հոգւուն մէջ միսիրաւանի ներեցիլու նզիլ) : Այդպիսի ասացուածոց պշրանք մը խիս ծաղրելի եւ անյարմաք կ'ըլլայ, որովհետեւ այդ եղանակաւ նամակագիրն ցոյց պիտի տայ աւելի մասցի նամակ գրելու նպատակ ունենալին հան ուրիշ ցաւոց կարեկից ըլլալն : Այս տեսակ նամակաց մէջ երեմն կը պատճենի կրօնական գաղափարներ ալ խառնել, մեր ոչնչութիւնը մեր աշխին առցեւ ունենալով աւելի մեր խորհրդաւու-
 թիւնեները կը գարձունենի Կեակոյն Էսակին օրութեան և մեծու-
 թեան վրայ : Մեր մածմուննի դաշտովի մը տեսնով աշխարհային կա-
 պեր լազերով կը պահայ անսանմանելի ապագայի մը բնագաւառները,
 անմանութեան անհուն դաշտեր, այս աշխարհի մէջ մեր յարգած եւ
 մեր խնկարկած ամէն ինչ մեզ կ'երեւի իբրեւ ծաղրելի խաղալիկնե-
 րու կոյն մը . . . : Այսպէս մի բանի երկիրդած եւ վիվիտիայական
 պարզ խորհրդաւութիւններ, անոնց ներ համգուցիւլով գովեստը կը մեղ-
 մացնեն մարմաններ : Նամակագիրն այս կերպով նոր արցութեներ կը
 խէ իր սրաւած եւ մելամազն զովաբանութեամբ եւ կը ծնուցան:
 վեսի մէջն իսկ ներկին բերկրան զգացնոյն երապոյր մք : Նամակառու-
 խանդականօֆ կը կարգայ եւ այդ թթերցման գործածած ժամա-
 նակն տեսակ մը սփոփում է իր վեսին : Միւս կողմէ շմունանի բան-
 լու որ մարդ իր ժամանակն ի զո՞ւր կ'անցուն : Կարգալով յանափ-
 արարողական այն սին ձեւերն ու կը գործածուին այնպիսի գրու-
 թեանց մէջ, յոր հեմարիս ցաւը երեք չերեւիր իր կինը կամ իր ա-

մուսինք կրցանցնող անձին ուղղուած ցաւակցական նամակին ւէջ : Բայց տնօւրանալի է որ հօմարի բարեկամներու չափ չեն տիրիք պարզ ճանօրներ, կը բաւէ որ այդ գրովներէն միայն մին անկեղծանամակներ, որոնց մէջ արարուական ձեւեր միայն ի նկատի կ'առաջ Զեզ ցաւակից ըլլայ, անա այդ բարեկամն է որ չգրեր այնպիսի նուին, այլ նա կը խառնէ՝ իր արցունեներն Զեզ արցունին : Այս կազիրն պատրասէլ ցաւակցական ամէն տեսակ նամակներու ու ուստուրեան, փուրանէ այժմ այս նիւրերուն վրայ օրինակներ տալ :

21. Ցաւակցական նամակ տիկնոց մը ուղղուած իր ամուսինյն մահուան առրի:

Տիկին,

Ծանրաթախիծ սպով իմացայ Զեր ամուսինյն մահուան գոյժը: Դեռ այնքան մատաղ, իրեն հետ կը թաղակին գեղեցիկ յոյսեր, իր բարեկամնութիւններ և աղթիւն: Կորսնցուցիք զանի, հազուադիւտ ընկեր մ'էր, ալ ստիպուած ենք մէկմէկու ըսկել յաւիտենական միասներուն հետ: սակայն միթէ անհնա՞ր է չմիսիթարուիլ: Եթի չմիսիթարուիլ: Անկարելի է մունալ իր կորուսոն, բայց անկարցունքու աչքիրը, ձայն մ'ունի, որ մեր կը հնչէ այսպէս: Միթարուեցիք, ես եմ որ կ'երջանային, Զերին, Զեր ամուսինն այնքան ստաքիցիք և երշ:

կիւղած՝ կը վայելէ այժմ Աստուծոյ սիրելեաց պահուած երջանկութիւնն . Յիշենք թէ աստ մենք վաղանցիկ, կարձատեւ դեր մ'ունինք . որրանէ սկսեալ մահուան կը դիմենք, բայց առաքինիին համար կայ ուրիշ կեանք մը, որ կը վարձատրէ զանի իր բարիքներուն համար: Այն երկնալին օդեւանին մէջ արդարներ պիտի գըտնուին . Զեր ողբացեալ ամուսինն զիսաւորաբար կը նուին . Զեր ողբացեալ ամուսինն զիսաւորաբար կը քաջալիրէ զերէ արիալար տանիլ ամէն վշտաց: Այս սուհետեւ ստանձնեցէք Զեր որդւոց վրայ մօր եւ հօր կրկին պարտաւորութիւններն : Այն անմեզ էակներն զջեզ ունին նեցուկ. անոնց վրայ կը գանէք իրենց հօր գծերը . թող անոնք թանկազին ըլլան Զեր մայրենի զթոյն սացէւ:

Յանձնելով զերէ Հոգւոյն Սրբոյ սկսականքին՝ պատիւ ունիմը ըլլալու, Տիկին,

Զեր հնաղանդ և ցաւակից

Ծառայ

[Թուական]

*

*

22. Պատասխան ցաւակցական նամակի՝ տիկնոց մը կողմէ ուղղեալ:

Աղնուազա՛րմ Տէր և բարեկամ,

Ներեցէք նամակիս կարձառօտ ո՞նին . անագորոյն կացութիւնս զիս կը չքմերացնէ անշոշաւ: Զեր սիու կացութիւնս զիս կը չքմերացնէ անշոշաւ: Զեր սիու կացութիւնս բայ ազդեց ինձ: Երախտապարտ եմ Զեր, փանքն ի խոր ազդեց ինձ: Երախտապարտ եմ Զեր, զի կը ջանաք վշտաց բեռը թեթեցնել: Կը յուսամ զի կը ջանաք վշտաց բեռը թեթեցնել: Կը յուսամ թէ կրօնական զգացմունքս և որդւոցս սէրը մորմաքս կը նուազեցնեն :

Սակայն այս վշտացս մէջ քաղցր է ինձ մտածել թէ ունիմ բարեկամ մը՝ որ կը յուզուի իմ տառապանքիս վրայ : Կ'զգամ Զեր միմիթարութեանց արժէքն, և շը-նորհակալութիւններս կը յայտնեմ Զեղ, վասն զի այն-քան զգայուն սրտով կը հաճիք ցաւակից ըլլալ իմ դժմադակ կացութեանս :

Կ'աղաչեմ որ ընդունիք այս առթիւ խորին մեծա- րանացս հաւասարիքն, որով պատիւ ունիմ ըլլալ

[Թուական]

Զեղ անձնուէր

* * *

23. Յաւակցական նամակ հայրակորոյս որդուոյ մը
ուղղեալ :

ՏԵՌ,

Զեր պատուական հօր տարաժամ մահը զիս շատ խորին տրտութեան կը մասնէ . ապահով եղէք թէ մտքիս առջե կուզայ այն աղնիւ քաղաքացին, և ինք- զեմ Զեր սուզին մեծութիւնը նուազեցնել, զի օրինա- ռոդիական սուրբ հարկ մ'է այդ . ւացէք Զեր կեանքի հեղինակին վրայ, սուք պատիւ են Զեղ, և կ'ապացուցանեն Զեր զգա- նողին վրայ՝ ուր կ'ամփոփուի սոկրոտին որդեսէր հօր :

ՏԵՌ, այժմ առիք կենաց տիսուր փորձն . մեր ձա- կատագիրն այս է, հետզհետէ երթալ դէպի լուս զե-

րեզման, բնակիլ շիրմին գիշերին մէջ : Զեր որդին իսկ մի օր պիտի մատուցանէ որդիական հարկն Զեր գե- րեզմանին վրայ : Երանի՛ Զեր հօր, վասն զի իր առա- քինութիւններ կ'ըլլան Զեղ ժառանգութիւն : Եղի՛ք անոր նմանող . անոր հոգին կրելով երեւցիք աշխարհի առջեւ :

Զեր կացութիւնը կը յուզէ զիս, եւ կը ցաւիմ որ կանուխէն կ'ուսնիք տառապիլ, սիրելիններու կորուստ- ներ տեսնել, նկատել շուրջն պարապութիւն մը՝ որ կը տիրեցնէ իրաւամբ :

Այսու հանդերձ կ'աղաչեմ որ արիանաք Զեր մոր- մոքին մէջ և ընդունիք զիս

[Թուական]

Զեղ սգակից բարեկամ

* * *

24. Յաւակցական նամակ :

Աղնի՛ւ բարեկամ,

Ո՞ւր է նա, չքնաղաձիր քոյրդ, որ դպրոցի գրա- սեղաններուն վրայ իսկ՝ կը վայելէր գելեցիկ համբաւ :

Նա քեզ եղբօրդ հրճուանքն էր, ծնողքին ուկեղին երազն : Ա՛ն, ինչո՞ւ խամրեցաւ այն ծաղիկն, ո՞ւր երազն :

արդեօք սլացաւ այն նորավետուր թռչուն :

Իր անմեղի կեանքն ի՞նչ հմայք կը ներշնէր . իր սուրբ պատկերն ի՞նչ խոկումով մը կը յափշտակէր սիրան, ինքն իրը ժիր և զգաստ աշակերտուհի մը ի՞նչ նախանձելի տիպար էր իր համատի բնկերունիներուն :

Արդեօք նա մին էր այն իմաստուն կրյսերէն, որ ի- րենց լապտերները վառելով գացին երկնային հարսնիքն:

Դեռ կենաց գարնան մէջ կը ծաղկէր սիրուն, ծաղկի մը քնքուշ տեսքով, թոյրով ու բոյրով լի, հեղահամբոյր, բարեմյն, յուսալից էակ մէր, ընդհուպ պիտի պսակուէր չըջանաւարտի պսակով ի փոխարքնիր այնքան չքնար աշխատութիւններուն և յաջողութիւններուն :

Աւազ՝ վորսան այդ պատկին ծաղկելիներ ծածկեցին իր թօնեալ ձակառն, իր դառագ.

Եւ ապկայն ափոխուէ՛, ազնի՛ւ բարեկամ, նա կ'ապշի գեռ իր անմեռ յիշատակով։ Նա յաւէտ պիտի մնայ կենդանի սիրելեաց արտերուն մէջ։ Եւ երբ ամբէն գարուն ծաղկին չուշան եւ մանիշակ, պիտի յիշեցնեն մեզ վաղամեռիկ քրոջդ, այն անլիիծ կուսին չնորհք ներն եւ զգասա ողին։

Հայցելով քեզ և ընտանեացդ թաղծեալ սրբին բազմութեան ք

[ସମ୍ବଲପିନୀ]

61

25. Յաւակցական և պամայ,

St. n.

Զեր քրոջ Տիկին վիլատուայի մահն իմացցայ, և այժմ
աւելի կը ցաւիմ Զեր քով չգանուելուս, որովհետեւ
ուրախութիւնն այնքան սրատղեղութեան պէտք չունի,
որքան տիրութիւնն , և բարեկամութիւնը շատ աւելի
թանկացին է վշտի քան թէ հաճոցքի մէջ : Ո՞րքան
մանկանացուներ արդահատանքի արժանի են, որ մըշ-
տատեւ սիրով կը կապուին իրարու հետ : Ահ , քանի

որ հարկ է անցումնել կեանքն լալով , մեր սիրելինեւ բռնն , մեր ննջեցեալներուն վրայ , և անոնց՝ որոնք արժանի չեղան ապրելու , ո՞րքան ցաւալի կը դանեմ կեանքը ամէն տեսակէտով : Մեսնողներն ապրողներէն երջանիկ են , ոչինչ ունին ողբալու : Այս խորհրդածութիւններն սովորական են . ի՞նչ փոյթ , ատով միթէ նուազ զ բնական են : Այս խորհրդածութիւններն ընտղը այնպիսի մէկն է որ աւելի դիւրաւ կը միտի վշտանաւայն իր բարեկամաց հետ քան թէ դանոնք սիրվելու , և որ կ'զգայ իր վշտերուն իսկ դայրանալը , երբ կը վշտակցի իր բարեկամաց վրայ :

(Purqu.)

26. Յաւակական և մամակ :

ի՞նչ կորուստ, Աստուած իմ, եւ ո՛րպիսի փոքրձու-
թեանց ենթարկել ուզած է Նախախնամոթիւնը Զեր-
առաքինութիւն, Պարսկա : Այսպէս ահա կը ծաղրէ նա-
այն գաղափարներն՝ որք ամենէն օրինաւոր կը թուին
մեզ : Ցարդ վայելեցիք կենաց բոլոր բարիքները : Եր-
կար եւ յարատե յաջողութիւն մը, կայուն հարստու-
թիւն մը, Զեզի արժանի ընտանիք մը . ահա ինել մը
չորհներ՝ զորս Աստուած ստիպուած չէք Զեզ ընկելու-
և գուցէ Դուք ալ ըստ բաւականին խորհած չէք թէ
միայն իրեն կը պարտիք այս ամէնը : Մարդուն սովո-
րութիւնն է Նախախնամոթեան վերագրել չար բախտը
և կարծել թէ իր անձին կը պարափ բարի բախտը : Սա-
կայն հարկ է որ վաղ կամ անագահ վճարենք մեր
պարտքը և ի մտի ունենանք թէ Աստուած մեզ աշ-
խարհք չէ խրկեր երջանիկ ըլլալու համար :

Նկատեցէք Ձեր վիշտն իրբու քաւութիւն այն յահնացանքին՝ որոնց ամենքնիս ալ ենթակայ ենք այս կեանքիս մէջ : Նկատեցէք զայն իրբու գրաւական մը այն երջանկութեան , զոր Աստուած Ձեզ կը պատրաստէ հանդերձեալ կեանքին մէջ : Որդի մ'ալ ո՞նիք , ամէն հոգ տարեք զանի Ձեզի պէս պարկեշտ մարդ ընելու . մէկ խօսքով , միմիթարուեցէք անով որ Ձեզ կը մնայ և աղօթեցէք անոր համար՝ որ ալ չի կայ :

Թերեւս զարմանաք այսպիսի խորհուրդներ ընդունելով վերտառութիւններ գործէ մը . բայց գոհութիւն երկնից , անոր պատփառ կրած եմ , և ինքզինքս դըժքախտ պիտի համարէի , եթէ պատժուած չըլլայի :

(Թարգմ)

9/5.

27. Յաւակցական նամակ

Տէր ,

Այն խորին ցաւը՝ որով կը կակծայ սիրող սիրելիուամբ , կուգամ բաժնել քեզ հետ : Կորուսն էր այս պատուական կնոջ մը , զոր առաքինութիւնը իրբու իր տեւաբար անմոռանալի է և արդար էր որ ընդհանուր մահուան գոյմի վայրկեանէն :

Այս հարուածէն սասանած և հազիւ զսպած մեր արցունքները՝ հետեւցանք իր դադաղին , աւաղելով միշտ . ծաղկին

պէս է ան , որ թեթև շունչէ մը կը խամրի , խոտին պէս՝ զոր անցորդը կը կոխոտէ ու կ'անցնի :

Ի՞նչ բան պիտի կրնայ լեցընել տիկին Յուլիանէի ձգած պարապութիւնը , սփոփանքի ի՞նչ խօսքեր պիտի կրնան ամոքել քու և աղնիւ տիկնոջդ զգացած վիշտը , մանաւանդ տիկնոջդ՝ որ կորմնցուց անզուգական մայր մը , որուն գովինաոը կը հիւսեն հոս ծանօթ շըթներ :

Ի սրտէ կը մաղթեմ իրեն արիութիւն հանդուրժելու այս մեծ աղէտքին և սփոփուելու հոգւովն քու նաև իրեններուն սիրոյն համար :

Կեանքի ամէն գաւնութիւններէ աղաս պահէ Աստուած Ձեր տունը , ուր ապրի յաւէտ Տիկին Յուլիանէի , այն բարի կնոջ յիշատակը իրբու անաղօտ լոյս մը Ձեր ընտանեկան յարկին :

[Թուական]

* * *

ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԵԱՆՅ ՆԱՄԱԿՆԵՐ

Կիտոյուրիւն. — Եթէ կը յանձնաւարէք բարեկամ մը , ազգական մը , օսարական մը , պատշաճեալ մը , վեցասպէս քուառութեան մէջ զնուող անձ մը , կ'ոզէք միեւնոյն անձին վայելել տալ պեսն էնուրիներ , զար ասինանաւոր անձ մը կրնայ կատարել : Աւորիս էնուրիներ , զար վատանական մը կը գործածէք ի նախաս երկուոդի մը :

Յանձնաւարութեանց բազմորի տեսակներ կան . ուս զգոււսնաւոր է զանոնէ անխորելպարս եւ անխոր կերպով գործածէլէ . ուռվալ է զանոնէ անխորելպարս եւ անխոր կերպով գործելիք . ուռվալ տառի դուք տեսակ մը պատշաճանատուրիւն ստանձնած կ'ըլլայ ձեր յանձնաւարած անձին համար եւ վերջէն նորա գործելիք յանձնաւարած եւ յիմարուրիւններն կրնան ձեր վրայ ծանրանալ , ուսի

պիտք է այնպիսի անձեր յանձնարարել, որոնց վրայ լրա համարում ունիք, եւ որոնց բարոյականին վրայ կանխառ նպաստառը տեղիկութիւններ հաւաքած ըլլաք, որովհետեւ դարձալ կ'ըսեմ. վերջէն նոցա զործելիք թերութիւններ կերպով մը զջեզ մեղակից կ'ընեն: Սակայն հարկ չի կա այդ խմեմութիւնը միջնէն շարակամութեան եւ անձնափրանք հասկրաման հասցեն: Անկենջարար կ'ըսեմ որ յին համար նախապահի է այն անձն որ չափազանց մարդասիրական բնուուրութեամբ անձը կը լիսանգէ բան այն անձն որ այդպիսի ամպատենութենք:

Յանձնարարականի մը զիսաւոր նիւրք է բնդիանցրապէս յանձնարեկի անձին զուինսն, որով կը շարժենք սիրտ այն անձին, որտեւ պատապանութիւն եւ բարեացակամութիւն կը խնդենք:

Աւազի մը, նախարարի մը յանձնարարութիւնն հրաման մ' է զայն բնդուողին համար: Յանձնարարական համակնեւն պատուամեծ առաւելութիւն ունին, որոնց վասանութիւնը կը շանհեցնեն յանձնարարէլոյն:

28. Որք աղջիկ մը յանձնարարել:

Աղջիկ՝ բարեկամ,

Ինձ պատիւ ըրած էք Զեր մաերմութիւնն և թանամէն պարագայի մէջ կը հաւանիք իմ խորհուրդներուս, որոնց գլխաւոր արժանիքն է անկեղծութիւն:

Ուստի պատարար կը յանձնարարեմ Զեր ինամքին և բարեսրութեան՝ Օր. Ողոհէ՝ որ շատ կանուխէն որումն է. իր հայրը պատուաւոր քաղաքացի մ'եղած է, թեան մը դէմ, լերջին չունչը փչած է կոտը և որդւոց համար հառաջելով: Ըստանիքի հայրն այսպէս զո՞ւ-

ուելէ յետոյ հնա՞ր է որ կինն ես ապրի, ան՝ որ ուխտած է անբաժան մնալ ամուսնէն: այսպէս կինն եւս բաժնուած է աշխարհէ՝ թողլով անպաշտպան որբեր:

Ահա այն վիճակ՝ որոն ենթարկուած էր սոյն հեք որբուհին կենաց առաջին օրերէն, և սակայն հակառակ բնական դժուարութիւններուն ստացած է ընտիր դաստիարակութիւն մը, որ իր ուրիշ ձիրքերուն հետ միանալով իր հարաստաթիւնը կը կազմէ: Նա կարող է ըլլալու տան վատահնելի օրիորդ, մանկավարժուհի, ընթերցուհի, եւն: Իր կերպարանքը վեհ է, և շարժումներն կիրթ, այնպէս որ իր տեսքը արգահատանքի հետ խանն գործվ մը կը ծնուցանէ Զեր մէջ:

Կը հաւատամ որ իմ բարեկիրթ և սիրուն պաշտպանելու դուք առաջին պիտի ըլլաք պատուաւոր դիրքի մը մէջ գնելու, այն հաստատ համոզումով թէ այսպիսի օրիորդ մը պաշտպանել Զեր փափուկ զգացումներուն համապատասխան կը գտնէք:

[Թուական]

29. Պանդուխ ուսանողի մը Ա. Պատրիարք Հօր ուղղած համակն անոր պաշտպանութիւնը հայցելու մասին:

Բարձրաշնորհ Արքաղան Հա՛յր, եթէ համարձակութիւն կ'առնում դիմել Զեր բարձր Արքաղանութեան, եւ Զեր ծանրածանը զրազմանց մէջ պահիկ մը ունկնդրութիւն ինսդրել, պատճառն բարձրադոյն դաստիարակութեան մը համար տածած տենչս է:

Աղքափնակ' Տէր, պահազում եմ, ուսման եւ,

գիտութեան սիրով ելայ երկրէս, ուղեւորից ցուսը
ձեռք առի և եկայ հոս, Պոլխա՝ ուր շատ են բարձրա-
գոյն վարժարաններ : Բայց ո՞վ է որ ինձ նուիրէ թան-
կադին պաշտպանութիւն : Կը յիշեմ միշտ թէ, զիւղէս
ելած տոնն մայրս յորդ արցունքներ թափեց, պղափկ
քոյրս քղանցքէս բանեց և ըստ . « Ասո՛մ, քեզ չպիտի
թողում, դո՞ւն ալ պանդուխտ »: Ո՞հ, ասոնք դառն են,
բայց չէի կրնար եղան պէս մեր արտերն ակօսող գու-
թանին լծուիլ և տղէտ մնալ : Կ'զգայի թէ աշխարհ
նոր պահանջներ ունի. ինչպէս արհեստական լոյսեր կը
վառին ամէն կողմ, նոյնպէս ուսմանց լոյսեր ալ կան :

Արդ, Սրբազն Հայր, արտասուազին կ'աղաջեմ որ
Զեր բարձր հեղինակութեամբ պաշտպան կանդնիք ինձ
և բանաք իմ առջև դպրոցի մը դամերն . Զեղմով ըլ-
քրոջս գիրկը նետուիմ, Զեր հօտին միր ոչխարը ըլլամ:

Ակնդէտ ըղձից կատարման
Մնամ Զեր Բարձր Սրբազնութեան

[Թուական]

հնազանդ որդի

ԴՐ

30. Հօր մը նամակն հեռաւոր ծանօթի մը պաշ-
պանութեան յանձնարարել իր որդին :

Տէ՛ր,

Պատիւ ունիմ ծանուցաննել Զեր թէ որդիս քաղա-
քիդ գործարաններէն միոյն մէջ պաշտօն ստանձնած է:
ի բնէ հակում ունէր նա արտեստագէտ ըլլալ, և ես
չուղելով հակառակիլ իր յօժարութեան, ուղարկեցի հոգ:

Սակայն որովհետեւ դեռ այնքան մատաղ է և այն
հասակի մէջ է՝ յորում դիւրաւ կը զեղծանի, ներկա-
յիւս հարկ կը համարիմ յանձնարարել զանի Զեր իննամ-
քին և պաշտպանութեան : Ունիք Դուք ևս սիրասուն
որդիներ, հետեւաբար Դուք և ձեր նմաններ կ'զգան
խնդրանքիս արժէքը :

Որդւոյս տեղեկացուցի թէ նա այլ ևս այդ տեղ
ունի մէկն՝ որ հօր մը աչքով պիտի հսկէ իր վրայ :
Այսուհետեւ մեծ բեռէ մը աղատած կը համարիմ զանձնս,
քանի որ կը դիմում Զեզ : Նա պիտի հնազանդի Զեզ
ամէն առթիւ և զԶեզ պիտի նկատէ իբրև իր մենաորը.
Նա կարօտ է Զեր բարի խրատներուն և պարտաւոր է
իր ընթացքին համարը տալ Զեզ իբրև իր հօրը :

Այսու երախտապարտ կը կացուցանէք զիս՝
[Թուական] Զեր անձնուէր ծառան

31. Կարեւոր անձի մը պաշտպանուրիւնը
ինդրելու նամակ :

Ազնուաչուք Տէր,

Զեր բարեսրտութիւնն այնքան հոչակուած է որ
վլստահաբար կ'ուղեմ Զեզ ներկայս : Ես իսկ խորա-
պէս զգացած եմ Զեր երախտիքն, որոնց միշտակն
այնքան գրաւած է զիս : Ուրեմն թոյլ տուէք ինձ Զեզ
ուղղել իմ աղերսս, և Զեր պաշտպանութիւնն հայցել :

Կ'ուղեմ (պէտք է յայտնիլ խնդիրն յատակօրէն եւ թիջ
բառերով) Զեր չնորհներն և ես վայելել, Զեր հզօր

ազգեցութիւնն ինձ համար մեծ գրաւական յ'է թէ
պիտի յաջողիմ խնդրանացս մէջ և թէ ընդհուպ յոյսերս
պիտի պահկուին : Սաով կը հանդարտի մտահոգութիւնս
ապադայիս համար . այժմէն կ'ստանամ դոհացում իմ
բոլոր վախաքանացս մասին և Զեր պաշտպանութեան
ապահութիւն կ'ունենամ վստահութիւն իմ բարւոք կա-
ցութեանս նկատմամբ :

Պատիւ ունիմ ըլլալու խորին մեծարանօք՝
Զեր ամենախոնարհ և ամենահլու-

[Թուական]

Ծառայ

* * *

32. Որեւէ յանձնարարական նամակ :

Տէ՛ր,

Չունիմ երկիւղ Զեր բարութեամբ զեղծանելու, ներ-
կայացնելով առ Զեր գրամատոյցս, Պարոն թաղէսու ։
Վաղուց ի վեր կը ճանչնամ զինքը ամէն կերպով
վստահութեան արժանի անձ : Սակայն նա կարող չէ
ասլիլ առանց պաշտպանութեան, և որովհետեւ զԶեզ
կը ճանչնամ ամէն բարեսրութեամբ օժտուած, ուստի
Զեր յանձնարարելու չեմ վարանիր զայն որ կը փա-
բար աշխատիլ առանց թերանալու իր պարտքերուն
մէջ, որոնք են ուղղութիւն, աչալլութիւն և հա-
ստարմութիւն :

[Թուական]

Ընդունեցէք, և այն.

9/16
33. Յանձնարարական նամակ :

Տէ՛ր,

Ի՞նչ պիտի ըսէք ինձ համար . դուք Զեր բարու-
թիւներն զգացուցիք ինձ օգտակարագոյն եղանակով :
Գոզգես Դուք միայն երախսագիտութեան զգացումներ
կ'ազգէք ինձ, և տակաւին պէտք է որ ձանձրացնեմ
զԶեզ : Ո՛չ, մի՛ կարծէք զիս բաւական համարձակ .
Քայց ահա իրողութիւնն . կորովի, մտացի և լաւ տա-
րայց սիրող երիտասարդ մը չգիտնալով ի՞նչ ընկեն՝ չեմ
գիտեր ի՞նչպէս . կը մտածէ գալ ներկայանալ Սիրէյ :
Նա կը լսէ Զեր վրայ խօսիլս, իմ պահապան հրեշտա-
կին . « Ո՛հ, ո՛հ, կ'ըսէ, քանի որ ան Զեզ բարիք կ'ը-
սէ, ուրեմն ինձ ալ կ'ընէ : Ինձ համար զրեցէք անոր »:
« Բայց, Պարո՞ն, մտածէ՛ որ չարաչար պիտի գործա-
ծեմ իր բարեկարտութիւնն »: « Ե՛հ ուրեմն, գործածէ՛,
կ'ըսէ ան : Բոլորովին անոր պիտի նուիրուիմ, ոչինչ կը
խնդրեմ, անոր պիտի ծառայեմ ամէն բանի մէջ : Ժը-
րաջան եմ, հլու եմ, յոդնութեան կը դիմանամ : Վեր-
ջապէս անոր համար ինձ նամակ մը պուր »: Ես որ
բարեմիտ մէկն եմ, անոր կուտամ նամակ : Նամակն
առնելուն պէս շատ երջանիկ կը համարի իր անձ :
« Պիտի տեսնեմ . . . » կ'ըսէ : Եւ ահա այս կորովի
երիտասարդը Զեզ կը դիմէ :

Տէ՛ր, պատիւ ունիմ ուրեմն Զեզ զեկուցանել զայդ :
Նա Զեզ պիտի ներկայանայ գեղեցիկ դէմքով և չնչին
յանձնարարականով մը :

Կը պաղատիմ Զեզ, այս ձանձրութեանս համար նե-
րեցէք ինձ . յանցանքն իմս չէ, չկրցայ զդիմադրել Զեր
բարութիւնները գովելու հաճոյքին . Այս անցորդ մը
ըսաւ . « Ես ալ բաժինս կ'ուզեմ »: (Թարգմ.)

34. Յանձնարարական նամակ գործաւորի մը համար:
Տէ՛ր,

Գրամաստյցս է ժիր գործաւոր, որ իր աշխատասիւրութեան և յաշողակութեան փորձերը տուած է ինձ ամէն առթիւ: Ուստի մասնաւորաբար կը յանձնեմ զնա Ձեզ: Կրնաք գործածել զանի Ձեր հրամանին տակ եւ կամ ուրիշ յանձնարարել վաստակաբար:

[Թուական]

9/18/

* * *

35. Աղյատաց Խնամակալուրեան մը իրդմէ հիւանդ մը յանձնարարել բժշկի մը:

Աղնուասիրու Տէ՛ր,

Տնօրէն Խորհուրդս երախտագիտութեամբ լի քաշ հիւանդաց: Դուք իրեւ բարեկամ, իրեւ հայր մօտենաւ լով հիւանդին՝ անկողնոյն քով, հոն յոյս ցոլացուցած էք:

Արդ, կը փութանք դարձեալ Ձեր ծանօթ բարեսըր հիւանդն բարեհաճիք դարմանել. Ձեր այցելութիւն մեծ խնամքին յանձնարարուելու արժանի է ամէն կերպով: Հարդ չենք աւստեր երկար յորդորներ կարդալ Ձեզ, ըստ որում Դուք Ձեր աղնուառութեամբ նուիրական

պարտաք կը նկատէք օգնել աղքատին, և միշտ Ձեր հալուարութեան նոր գրաւական ընծայել:

Վաստահ եղէք թէ Ձեր բարեգործութեանց իբր վարձք սիստ ընդունիք աղքատաց օրհնութիւններ, որոնց կը կը կցենք մեր խորին չնորհակալութիւններն:

Ատենադպիր Ատենապետ

[Թուական]

9/18/

36. Վաճառատան մը մէջ պաշտօն խնդրել:

+

Տէ՛ր,

Պատախ ունիմ խնդրել Ձենէ հաշուակալի սպաշտոն մը Ձեր վաճառատանց մէջ: Գիտեմ տոմմարակալութիւնը բաւականին՝ Ձեր հրամանին ներքեւ գործելու համար:

Տէ՛ր, պարախմ ըսել Ձեզ թէ Պ. . . կատարեալ վաստահութեամբ կը յանձնարար զիս Ձեզ: Եւ եթէ հաշուականիւ զիս Ձեր գրաւենեակիներուն մէջ, ամենայն անհնաւիրութեամբ աշխատող մը սիստ ունենաք Ձեր արամադրութեան ներքեւ, արժանի Ձեր սպաշտոնաւթեան և չնորհներուն:

Պատախ ունիմ ըլլալ, Տէ՛ր, Ձեր շատ խոնարհ ծառան

[Թուական]

ԸՆԴՀԱՅՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Ծնորհակալուրիւն բարեւարի մը ուղղեալ. — Ներեցք ինձ, եթէ չկրնամ յայտնել ամբողջ երախտազիտութիւնս Զեր բարիբներան փոխարէն։ Քաղցր է ինձ հաստատել թէ Դուք Զեր ազնիւ անցինչ պիտի մնայ ։ Վերջասորութիւն։

2. Գարձնեալ նոյն նիւթ. — Մեր բարեկամն յաճախ իր օպարտ ըրած է իրեն։ Հիմայ գարձնեալ տեսնելով իր բարեկամութեան անոր։

3. Ծնորհակալուրիւն. — Մանկամարդ օրիորդ մը, որուն եղացը վաճառասան մը մէջ ընդունուած է, կը զրէ տիկնոջ մը՝ որ զանի պաշտպանած է, և շնորհակալութիւն կը յայտնէ նոյն տիկնոջ իր ընտանիքն անունով։

4. Ծնորհաւորուրիւն բարեկամի մը ուղղուած. — Ի՞նչ մը գորզնմբով պիտի թեթեւնան վշտեր և պարեմյն կնոջ թիւներդ։ Դրուատիր իր յաջող ընտրութեան համար, ևայն։

5. Ծնորհաւորուրիւն. — Մեր բարեկամն առեւարական մեծ քաջողութիւն ունեցած է։ մեր խնդակութիւնը կը յայտնենք և կը մաղ-

6. Ծնորհաւորուրիւն. — Մեր ընկերութիւն ծանր պարագաներ անոր ապարագութիւն կը շնորհաւորենք անոր հիւանդութիւնը զանի որ այս տարի վիշտավայցութեան ատեն մեր մատ զայ, և

7. Ծնորհաւորուրիւն. — Կ'իմայնենք դպրոցականի մը թէ մեծ պարագաներ տեղեկացանք անոր յաջող քննութիւններ անցունելն։ Ֆից ենք իր այս յաջողութեան համար։

8. Յաւակցական համակ հօր մը ուղղուած. — Հէք հայտնամբ կը տարակարգ անոր, անոր արցունքին կը խառնենք մեր արդյա ընդհանուր համակրութիւնն իցիւ չափաւորէ թշուառ։

9. Յաւակցական համակ այրի կնոջ մը ուղղուած. — Ամենէն զժնդակ հարուածը կը կրէք, տիկին, այս կորուսով ։ իբրւ մայր կը կորսնցնէք ամենէն ապահով նեցով Զեր որդիներուն։ Սփոփուցիք սական, մասձելով թէ երկնային կամքին հպատակիլ պէտք է Զեղ նման առարմնի կնոջ մը։

10. Քրոջ մը մահուան համար ցաւակցական համակ. — Մեր բարեկամին, որ կորսնցուցած է բոյր մը, զզացած վիշտն զմեզ կը յուզէ խորին։ Օրիորդն էր չընալամիք, ամենուն մեծարամներին արժանի։ Մեզ ևս դան է զրել այս նիւթին համար մեր բարեկամին եւ աւելի պիտի սիրեններ լուել եթէ մեր լուռութիւն անսարբերութեան նշան մը չերեւէք։

11. Յաւակցուրիւն. — Իր շնուամիքն հեռացած բարեկամունքի մը ուղղեալ համակ։ Այս բարեկամունքն, որ մի բանի ամիս առաջ եղացը մը կորսնցուցած էր, այժմ ևս կը կորսնցնէ հայրը։ Անոր համար անմիջապէս չզբեցինք, որպէսզի իր սիրան շուտով չափեցնենք։ Իր մօրը նկատնամբ լուրեր։ Կը ցաւինք որ այս դժուակ պարագայն մէջ իրեն մօտ չենք։ Սփոփանք։

12. Յաւակցուրիւն. — Որզի մը իր հայրը կորսնցուցած է։ կը յայտնենք անոր մեր ցաւակցութիւնն, և կ'ըսենք թէ հանգուցեալը կը թողու իր որդուն ժառանգութիւնները և բարի օրինակներ, որը խսկան առաջուածք են, և իրեւ սիրաններ՝ թթատոնէի մը կեանքն և զեկեցիկ մատ մը։ Կը մաղթէք որդուն՝ հօրը կեանքն նման չքիազ կեանք մը։

13. Յանձնաւարական. — Երշանաւարափի օրիորդի մը նամակն տիկնոջ մը ուղղուած, որ հեռուն կը բնակի. Օրիորդը կը փափարի զպոցի մէջ պաշտօն առանձնել։ Բատ որում որբունի մ'է, որոշած է աշխատիլ։

14. Յանձնաւարական. — Մեր մէկ բարեկամն Պրուսա կ'ուղեւորի Հոն ունինք ծանօթ մը՝ որուն կը յանձնաւարենք և կը խնդրենք որ ի հարկին իր որեւ աշխացութիւնը զզանայ մեր այս բարեկամին։

15. Յանձնաւարական. — Մեր մէկ բարեկամն չերմասպէս կը յանձնաւարենք երիտասարդ մը, որ զրոծ կը խնդրէ. Այս երիտասարդն մեզ ծանօթ է իր անձնուեք զործունեթեամբ, մասցի է եւ բարեհամբոյք. Եթէ անկարելի ըլլաց զրոծ մը զանել, գասահ ենք մեր բարեկամը կը չանայ ծանօթայնել յանձնաւարեան ուրիշ վառասանեց։

X
ԳԼՈՒԽ Գ.

ԱՌԵՒՏԲԱԿԱՆ , ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԴՐԱՄ
ԽՆԴՐԵԼՈՒ ՆԱՄՄԱԿՆԵՐ

Թիսողութիւն . — Հաս որում բնական հետեւութեամբ հարկ կ'ըլլայ զրծի եւ առեւտրոյ վերաբերեալ նամակներ գրել, երբ առանձին ստորագրութեամբ մուրհակներ, հասարակ պատրամուրհակներ, վանառականական մուրհակներ, փոխանակագրեր, համերաշի յանձնառութեանց գրեր, յանձնեալ վանառաց ցուցակներ, եւալին զրուին կուտան բազում վիճանեց, հակառակութեանց, մերժմանց, յանդիմանց, աստի յառաջ եկած է զրծի եւ առեւտրոյ բորակցութիւնն, կամ դժուարութիւններ բառնալու, մեկնութիւններ տալու, առանձներու յանձնելու : Ուրեմն բանաւոր կը կարծենք այն զանազան նոր նամակաց օրինակները դնել, վասն զի ասոնք տաս անզամ ձագում կուտան միւսներուն :

Այս տեսակ նամակներ ընդհանրապէս բոլորովին ի բաց կը մերսութիւն եւ յասկութիւն մտիր նիզ : Կարելի եղածին չափ նամակումար : Սակայն պարզ գրել ուղելով՝ ստորին ոնոլ մի՛ գրեմ :

1. Շրջաբերական :

Կ. Պոլիս 1/14 Յունուար 1902

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանել Զեղ թէ քաղաքիս մէջ առևտրական տուն մը հաստատած եմ

Կ. Ա. Ա. Ս Ո Ւ Ր Ե Ա. Ն

անուամբ, որ պիտի զբաղի ամէն տեսակ վաճառքներու արտածութեան և ներածութեան, փոխանակագրոց միջնորդութեան և յանձնարարութեան գործերով :

Հաճեցէք, Տ. ծանօթանալ մեր ստորագրութեան, որ ի սարք, և ընդունիլ մեր խորհն յարգանաց հաւասարիքն :

ԿՈՂԵՐՆԻԿ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

2. Վարկագիր :

Կ. Պոլիս, 20 Փետր. 1901

Տ.

Վիշնուա

Պատիւ ունիմ Զեղ յանձնարարել Գրամատոյցս Պ..., որուն կրնաք մինչև 1000 Օսմ. ոսկի վճարել, փոխարէնն իմ հաշուոյս անցունելով :

Պ . . . Ձեզ պիտի տայ առած գումարներուն դէմ
երկերիու օրինակով ընկալագիր, որոնց մէկ օրինակն
Ձեր քով պիտի մնայ, իսկ միւսն ինձ պիտի խրկէք:

Ահաւասիկ Պ. ի ստորագրութիւնը :

3. Վաճառք խրկել :

Տրապեզոն, 1 Յունուար 1901

Մեծարդոյ 8 . . .

ի կ. Պոլիս

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ որ այսօր մեկնող
Բաղմա շոգենաւով յուղարկեցինք Ձեր ապսպած 200
պարկ լուրիս: Եերփակեալ կը գանէք անոնց բեռնա-
գիրն և հաշուեցիրն, որոնց գումարն է 400 Օմք. ոսկի,
քին Յունութեան հաճեցէք անցունել մեր պահանջ-

Յոյս ունիմ որ գո՞ն պիտի ըլլաք յիշեալ ապրանք-
ներու թէ՛ տեսակէն, թէ՛ գնոց աժանութենէն և թէ՛
ծախուց չափաւորութենէն, և պիտի հաճիք ի մօտոյ
նորանոր հրամաններ խրկել մեզ, զորս պիտի ջանանք
Հաճեցէք, Տէ՛ր, ընդունիլ մեր յարգանքներն :

4. Ստացագիր :

Ստորագրեալս կը յայտարարեմ որ ստացայ . . . է,
50 ոսկի Օմք., ի հաշիւ 20 պարսկական գորգերու,
զորս իրեն ծախած եմ թուականէս 25 օր յետոյ յանձ-
նելու պայմանաւ:

Կ. Պոլիս 25 Յուլիս 1892

5. Բ. Օրինակ Ստացագրի :

Ստացայ Տ. է 100 լիրա Օսմանեան-
Պ. ի հրամանաւն և անոր հաշուոյն համար:

Կ. Պոլիս 15 Օգոստ. 1891

6. Փոխանակագիր :

Կ. Պոլիս 10 Մեպտ. 1890

Փ. Վ. Լ. Օ.

1400

Թուականէն երեսուն և մէկ օր յետոյ, վճարեցէք
այս միակ փոխանակագրով Տ. Պէրպէրեանի հրամանին
հազար չորս հարիսր լիրա Օսմանեան, արժէքը կան-
իսիկ ընդունած եմ և անցուցէք ի հաշիւ ըստ ծանուց-
ման:

Առ Տ. Պ. Մըսըրեան
ի կարին

Ո. Մանոհիկեան

7. Մուրհակ :

Կ. Պոլիս, 21 Յուլիս 1900

Մ. Վ. Լ. Օ. 100

Թուականէս երեսուն և մէկ օր յետոյ, պարտիմ վճարել Յ. Մանիկեանի հրամանին, հարիւր լիրա Օսմանէան, արժէքն ապրանքով ընդունած եմ:

Մ. ԱՌԵՔԵԼԵԱՆ

8. Բաց մուրհակ :

Թուականէս երեսուն և մէկ օր յետոյ, այս թուղթունքայացնողին (կամ բերողին) պարտիմ վճարել երկու հարիւր լիրա Օսմանէան:

Կ. Պոլիս, 5 Մայիս 1892

Մ. ԵՐԱՄԵԱՆ

9. Հրամանագիր :

Կ. Պոլիս 30 Հոկտ. 1890

Հ. Վ. Լ. Օ. 250

Յառաջիկայ Դեկտ. 30 ին, վճարեցէք այս հրամանագրով, Տ. Գրիգոր Տիլակերեանի հրամանին, եթեաւ դունած եմ, և անցուցէք ի հաշիւ ըստ ծանուցման:

Առ. Տ. Մարոյեան ի Տփլիս:

Ա. ԳԱՂՂԱՐ

Վ. Օ. 200

10. Դրամ խնդրել:

ՏԵՇ,

Մինչեւ երեկ հաշուած էի թէ դրամական վիճակս պլիսի ներէ լաւ վճարում մ'ընել ինայողական Մնառու կին՝ ուրիշ կարեւոր գումար մը փոխ առած եմ Պատէմիկի տանս համար: Սրդ անհնարութեան մատնուելով վճարումս կատարելու մասին, կ'աղաչեմ որ . . . Օսմ. ոսկի բարեհաճիք վճարել ինձ: Վատահ եղէք թէ ներկայ ամսոյս մէջ կը վճարեմ զայն: Վայրկեան մը չեմ ապրակուսիր թէ կը յօժարիք ինձ ծառայութիւն մը մատուցանել, ուստի կը միամ կանխաւ:

Զեղ երախտապարտ:

[Թուական]

* * *

11. Ժիւտական պատասխան :

Արքելի՛ բարեկամ,

Շատ կը ցաւիմ մերժելով Ձեր ինձմէ ինսդրած ծառայութիւնը: Այս պահուն դործ ունիմ այնպիսի անձերու հետ, որոնք ինձ չեն կրնար վճարել պահանջմանը, և հաղիւ հիմակուան վիճակս կը ներէ օրական ծախքերուս:

Հաւատացէք իմ ցաւիս և անկեղծ բարեկամութեանու:

[Թուական]

* * *

12. Նպաստառու պատասխան :

Սիրելի՝ բարեկամ,

Մեծ հաճոյքով կը կատարեմ Ձեր խնդիրքն, Գիտցէք
թէ երջանիկ կ'զգամ վիս Զեղ որեէ ծառայութիւն մը
մատուցանելուս :

Կրնաք վաստահիւ բարեկամութեանս : Վաղը՝ հաճե-
ցէք ներկայանալ դրասենեալս, ուր պատրաստ է որոշ-
եալ դրամը Զեր արամադրութեան տակ :

[Թուական]

* * *

13. Բարեկամէ մը փոխառութիւն :

Սիրելի՝ բարեկամ իմ,

Ներկայիւս կը խնդրեմ Զենէ ծառայութիւն մը -
Զեղ կը դիմեմ, որովհետեւ կը ձանչնամ զԶեղ իբրև
բարեկամներուս ամենէն անձնուէրը :

Այս պահուն քիչ մը դրամական տագնապ կը կրեմ .
այն վարչութիւն՝ որուն ներքե կը ծառայեմ, այս ան-
դամ իր վճարումներն օրաձեց :

Կը խնդրեմ Զենէ ինձ փոխ տալ . . . դրամ, զոր
ամսաթոշակս ստանալուս Զեղ կը վերադարձնեմ :
Կրնաք ինձ այս ծառայութիւնը մատուցանել : Եթէ
այո՛, ապահով եմ որ այս կերպով կ'ընծայէք ինձ Զեր
բարեկամութեան նոր նշան մը :

[Թուական]

Զեղ երախտագէտ

* * *

14. Կնոջ մը նամակն իր ամուսնոյն ուղղեալ,
ասակ խնդրելու համար :

Սիրելի՝ ամուսինս,

Ո'րչափ ժամանակէ ի վեր մեկնած ես ասկէ : Յի-
րաւի ես շատ երկար կը գանեմ զայն առանց քեզի :
Եոյն իսկ մտահոգութեան մէջ եմ, քեզ նկատմամբ
լուրեր չստանալով :

Թէպէտ քենէ հեռու, բայց միշտ մտքով կը հետեւիմ
քեզ : Գրէ՛ ինձ շուտ թէ որպիսութիւնդ լաւ է, և թէ
ինձ քիչ մը դրամ իրկէ՛ :

Գիտես արդէն թէ վճարմունքդ հաղիւ կը բաւեն
մինչեւ այս ամսոյ վերջ մեր որդւոց պէտքերուն և տան
համար :

Կը յուսամ թէ քիչ ատենէն կը պատասխանես ինձ :
Ճնորհակալութիւն :

[Թուական]

* * *

15. Գիշերօրիկ աշակերտէ մը իր հօրը ուղղուած նամակ,
դրամ խնդրելու համար :

Գորովագո՞ւթ հայր իմ,

Քառամսեայ քննութիւնն յաջող անցուցի: Ներփակ-
եալ վիճակացոյս կը հաստատէ խօսքիս ճշմարտութիւ-
նը : Շատ լաւ է վիճակս : Հոս ամէն բանէ գոհ եմ:
Աը : Շատ լաւ է վիճակս : Հոս ամէն բանէ գոհ եմ:
Պաստառներն ալ ինձմէ գոհ կ'երեւն: Միւսիւ Պ . . . ի

6

դասերուն ամինէն աւելի կը հետեխմ, առանց սակայն միւս դասերուս մէջ թերանալու : Ո՞հ, մեծ փափաքս է բժիշկ մը ըլլալ և մեր քաղաքին մէջ ծառայել : Հոս Պոլսոյ մէջ բժիշկներ շատ կան, մինչդեռ մեր քաղաքին մէջ հազուագիւտ են :

Սիրելի՛ հայր իմ, անցեալ օր Տնօրէն էֆէնտին իր սենեկալը կանչեց զիս և քաղցրովթեամբ յիշեցուց դըպւրոցին օրէնքը վճարմանց մասին :

Ես ալ խոստացայ գրել Ձեզ : Կ'աղաչեմ շուտ խըրեք այս տարեկանը : Շատ անհանդիստ եմ այս մասին : Խրկեցէք Պոլիս Պ. Սարգսի . ես անկէ կ'երթամ կ'առնում :

Շուտ պատասխանեցէք նամակիս :

Կը համբուրեմ Ձեր և քաղցրիկ մօրս ձեռքերը, եղայրներուս և քոյրերուս աչքերը :

[Թուական]

Հնաղանդ որդիդ

* * *

16. Նամակ տան շիրոց մը՝ տան վարձին վճարելն յապահելու մասին :

Տէ՛ր,

Պատիւ ունիմ Ձենէ ինդրել երկարաձգում . տանը Վարձքը վճարելու մասին :

Գիտէք թէ նիւթական անձկութիւն մը ունինք . աշխատովթիւննիս դադրած է և կինս ու որդիքս չեն քաջառողջ : Մինչև ցարդ խղճամիտ ձշութեամբ վը ճարած եմ Ձեզ, և վստահ եղէք թէ պիտի շարունակեամ այսպէս, եթէ հաճիք ինձ տալ պայմանաժամ մը :

[Թուական]

Յարգանօք

* * *

17. Նամակ տան շիրոց մը ուղղեալ՝ խնդրելու համար անկէ վարձելու դաշնագրին երկարաձգումը :

Տէ՛ր,

Մեր վարձած տան պայմանաժամը ներկայիւս կը լրանայ, և հիմայ կ'ուզեմ գիտնալ թէ ասկէ վերջն ալ կը հաճիք տան պայմանաժամը նորոգել : Ես կը փափաքիմ երկարաձգել պայմանաժամն միւնոյն պայմաններավ :

Եմ տարակուսիր թէ կ'ընդունիք մեր խնդիրքն ինկատ առնելով մեր բարուք յարաբերութիւնները : Սակայն կ'աղաչեմ որ շուտով պատասխանէք ինձ, վասն զի եթէ ուրիշ նկատումներ ունիք, կ'ուզեմ կանուխէն ինձ տեղ գտնել :

Հաճեցէք ընդունիլ յարգանօքներս :

[Թուական]

* * *

18. Նամակ տան շիրոց մը ուղղեալ վարձակալի մը լողմէ անոր տունեկն եղնելու առիւ :

Տէ՛ր,

Անակնկալ պարագայ մը կը ստիպէ գմեղ թողուց Ձեր տունը :

Եմ կարծեր որ մեր ելնելովը Ձեզ մեծ վնաս պատճառէ, որովհետեւ մեր կողմերը հետզհետէ յարդ կ'ըստանան և տուներուն գիները կ'աւելնան, և չեմ տառ

բակուսիր թէ անմիջապէս նոր վարձակալ մը սիրտք գտնէք :

Նոյնպէս համոզուած եմ թէ կը հաւանիք խնդրանցու . մեր բարոք յարաբերութիւնները այս մասին երաշխաւորութիւններ են ինձ :

Զեր պատասխանին սպասելով , Տէ՛ր , պատիւ ու նիմ զՁեղ ողջունել :

[Թուական]

Խորին յարդանօք

* * *

19. Գործ խնդրել :

Սիրելի՝ բարեկամու ,

Համարձակութիւն ունիմ այս պահուն զենէ օգնուածիք զեր վարչութեան ներքեւ առնուլ զիս : Ապահովութային ու բարեկամուն առնուլ զիս : Ապահովութիւններ առնուլ զիս :

Ինդունեցէք նաև և առաջ բարեկամի մը չնորհաւ կալութիւններն :

[Թուական]

* * *

20. Դարձեալ նոյն նիւք :

Գերազնիւ Տէ՛ր ,

Ներեցէք որ համարձակիմ զեր Ազնուութեան դիքայլերուած և աղաչեմ որ նուաստիս սոյն աղերսին

Զեր բարձր ուշադրութիւնը նուիրելու չնորհք ընէք :

Սաորագրեալս , երբեմն դործակատար (այս անուն) վաճառատան , իմովսանն չատ տարիներ աշխատած եմ հոն ամենայն հաւատարմութեամբ և աշխատիւ :

Բայց հիմայ բաւական ժամանակէ ի վեր անդործ կը առաւալիմ ու կը առաւալին ինձ հետ կին և որդիք : Աւելորդ կը նկատեմ ախուր վիճակս պատկերացնող ու կարեկցութիւն հրաւիրող խօսքերով յուղել Զեր աղնիսիրար , միայն կ'աղաչեմ որ հաճիք ընդունի զիս Զեր ընդարձակ գործառնութեանց մէջ , ուր հաւատարմութեանս և աշխատափրութեանս գեղեցիկ ապացոյցներ պիտի գնահատուին անցուած Զեր Ազնուութիւններ և ես իսկ ընտանեօք Զեր քաղցր պաշտպանութեամբ երջանիկ՝ Զեր պիտի նուիրեմ Զերմ երախտագիտութիւնն և օրհնութիւններս Զեր թանկագին կենաց և բարեհամբաւ գերդաստանիդ :

Ե. Յ.

* * *

20. Վարձակալի մը նամակն որ ժամանակ կը խնդրէ իր տանուտերեն :

Տէ՛ր ,

Գիտէք թէ այս տարի մեր ցորենները կորսուեցան գէւ եղանակներու պատճառաւ : Ասով չկրցայ վճարել գու և է գումար պարտքիս համար : Երախտապարս պիտի ըլլամ Զեզ , եթէ հաճիք երկարել սպայմանաժամբ :

Վճարմանց մասին ցարդ ունեցած ձշդասկանութիւնն ինձ յոյս կուտայ թէ պիտի հաճիք իմ խնդիրքս չմերժել : Յարդանօք առ Զեզ

[Թուական]

* * *

22. Ուրիշ նամակ վարձակալի մը իր տաեսիրոց
ուղղեալ՝ մեծ աղետ մը յետոյ :

Տէ՛ր,

Սուկալի ուրական մը երէկ քիչ ժամանակի մէջ աւերեց մեր գաւառները։ Նա անցաւ իբրև իրական թաթառ մը և ջրով ծածկեց, տապալեց տուներ, պտղատու ծառեր, և հողը բոլորովին տակնուվրայ ըրաւ։ Այլ եւս հունձք չէ մնացած, և այս այնքան արագահամեղաւ որ չկրցանք աղասել արջառներն։ Ադարակին պատերը ամէն կողմէ փլած են։ Հարկ է հիմէն նորոգութիւն։ Մեր կարասին ամբողջովին կորսուած է զերջապէս ընդհանուր աւեր մը։

Լսած էք անշուշտ այս մեծ աղէտքն, որուն զոհն ինչպէս մենք, նոյնպէս դուք էք. որովհետեւ այս արածը ինձմէ կը խլէ ամէն հարսառութիւն։ Սակայն և թեանս պառուղն էր, կը յուսամ վերստին շահիլ զայն ։

Այս յուսով պատիւ ունիմ ըլլալու Զեր երախտագէտ վարձակալն։

[Թուական]

* * *

23. Նամակ հիւսան մը իր տաեսիրոց ուղղեալ՝
իր պահանջի մասին։

Տէ՛ր,

Հակառակ անխոնջ աշխատութեանս, ահա երեք ամիսներ անցան, ուրկէ ի վեր որկէ գումար չեմ ընդու-

նած Զենէ։ Ինքնին կրնաք հասկնալ թէ ո՞չափ գժուարին է ինձ սպասել օրականներուս դանձման համար։ Կ'աղաչեմ որ՝ այս շարթու վերջ հաճիք վճարել ինձ առնելիքիս գէթ կէսն։ Մնացորդը կրնաք ուշացնել քիչ մը ասենի համար։

[Թուական]

* * *

24. Նամակ փաստաբանի մը ուղղեալ։

Տ.

Կը հաճիք ստանձնել այն գործն՝ որ ինձ համար շատ կարեւորութիւն ունի։ Զեր վայելած գերազանց համբաւը կը ստիպէ զիս դիմել Զեղ (իսրայ ի արձայ եւ յստակօրին յայսնել իսնդիրն)։ Անշուշտ պիտի հաճիք ստանձնել այս գործն, ուստի կ'աղաչեր Զեղ տեղեկացնել ինձ թէ ի՞նչ պարտիմ վճարել Զեղ, և թէ ի՞նչ ձև պարտիմ տալ Զեր փոխանորդագրին համար։ Հաճեցիք նոյնպէս մուլ թէ նախնական ծախուց համար ո՛րչափ դրամ որէտք է վճարել։

Խորին մեծարանոք

[Թուական]

* * *

25. Նամակ հրդեհի ապահովագրութեանց մեօրենի մը ուղղեալ։

Տէ՛ր,

Զեղ՝ իբրև ներկայացուցի ապահովագրական... ընկերութեան՝ կը փութամ ծանուցանել այն արկածն՝ որ ուն գոն գնաց տունս։

(Կարձ ի կարձոյ եւ յստակօրեն պատմել պատահարը,
իր մանրամասնութիւններն, եւ այլն:)

Նամակիս կը կցեմ թաղապետութեան վկայագիբն՝
որ կը հաստատէ թէ մեր տունէն չէ ծագած հրդեհը:
Իմ ապահովութեանս մուրհակը (ըսկը մուրհալին թիւը
եւ ամսարիսը) կ'ապահովէ ինձ 200 ոսկի Օսմ.: Գործա-
կալն զոր պիտի հաճիք անշուշտ յղել ինձ, պիտի բերէ ինձ
ի հարկէ վերոյգրեալ գումարն:

[Թուական] Զեր հնաղանող ծառայն

* * *

26. Վաճառք խնդրել:

Տէ՛ր,

Ներկայս ընդունելուդ պէս հաճեցէք երկաթուղիով
խրկել հետեւեալ ապրանքներն՝

Վասահ եմ թէ այն զանազան ապրանքներու մասին
լաւ ընտրութիւն պիտի ընէք և այնպէս ծրարէք դա-

[Թուական] Ընդունեցէք, Տէ՛ր, մեր ողջոյներն:

* * *

27. Ապրանք խրկելն իմացնել:

Տէ՛ր,

Պատիւ ունիմ Ձեզ իմացնել թէ Անդրիանուպոլսոյ
երկաթուղիով Ձեզ կը յղեմ Ձեր խնդրած մի քանի
ահեսակ ապրանքներ, որոնց ցուցակը ներփակեալ կը
գտնէք:

Ձեր ընդունելէն յետոյ հաճեցէք հաշիները կարգա-
դրել մինչեւ ներկայ տմայու վերջն:

Ընդունեցէք, Տէ՛ր, մեր խորին յարգանքներն:

[Թուական]

* * *

28. Գրամ վճարել հրամայել ուրիշի մը:

Տէ՛ր,

Կը համարձակիմ Ձեզ ներկայացնել գրամասոյցս,
Պ. Պետրոս Առաքելեան, որ Մարսիլիոյ ճամփով Զմիւռ-
նիա պիտի երթայ, ուր հաւանականաբար քիչ մ'ատեն
պիտի մնայ՝ մինչեւ որ գործերը կարգադրէ:

Եթէ Պ. Պետրոս գրամի պէտք ունենայ, Ձեզ կը
թոյլատրեմ իմ հաշուոյս և Ձեր ծախքերը հանելէ վերջ
մինչեւ 2000 գրանք տալ իրեն, որոն վոխարէն հաճե-
ցէք աեսօրէն երկու օր վերջը վճարելի իմ վրաս վո-
խանակագիր քաշել:

Ընդունեցէք կանխաւ չնորհակալիքս:

Ձեր անձնուէր ծառայն

[Թուական]

* * *

29. Պատասխան վերոյակրելոյն :

Տէ՛ր ,

Սնցեալ ամսոյ . . . ին մեր նամակը հաստատելով ,
պատիւ ունինք Ձեզ իմացնել թէ Պ. Պետրոս Առաքել-
եան երեկ մեր գրասենեալը եկաւ , և 2500 ֆր. վճա-
րեցինք իրեն , մեր ծախքելը հանելէ վերջ , ի հաշիւ այն
վարկին , զոր իրեն համար բացած էք մեր վրայ :
Ներփակեալ Ձեզ կը խրկենք Պ. Առաքելեանի ընկա-
լագիրն , և միանդամայն Ձեզ կ'իմացնենք թէ յիշեալ
գումարին համար տեսօրէն տասն օր վերջը վճարելի
փոխանակագիր քաշեցինք Ձեր վրայ :
Հաձեցէք ընդունիլ Ձմեզ Ձեր անձնուէր ծառայն :

[Թուական]

* * *

30. Վաճառատան մը մասին կարծիք հարցունել :

Տեա՛րք ,

Ձեզի երախտապարտ պիտի ըլլայինք , եթէ հաձէիք
թղթաբերին վերադարձն հաղորդել մեզ Ձեր կարծիքն
պատուաւորութեան մասին այն վաճառատան՝ որուն
անունը պիտի գտնէք առկցեալ թուղթին վրայ :
Եյս տան հետ ապրանքի մեծ գործ մ'ընելու վրայ
ենք , և կը փափաքինք գիտնալ թէ մինչեւ ո՛ր աստի-
ճան ապահովութեամբ կարել է գործել : Վաստահ եղէք
թէ ինչ որ պիտի հաձիք հաղորդել մեզ այս մասին՝ մեր
մէջ պիտի մնայ :

Յարմար առթիւ պիտի փութանք նմանօրինակ ծա-
ռայութիւն մը մատուցանել Ձեզ :

Ընդունեցէք , Տեա՛րք , մեր յարգալից բարեներն :

[Թուական]

* * *

31. Վաճառատան մը պատուաւորութեան մասին
վարանոս պատասխան տալ :

Տեա՛րք ,

Կը ցաւինք որ Ձեր . . . պատասխանին մէջ ինդըց
նիւթ եղող տան մասին ստոյգ տեղեկութիւններ չպիտի
կրնանք հաղորդել Ձեզ : Երկար ատենէ ի վեր այդ պա-
րոններուն հետ գործելու առիթ չենք ունեցած : Եթէ
հրապարակին վրայ շրջող զրոյցներու նայինք , վերջերս
մեծամեծ գործառնութեանց մէջ նետուեր են , որոնք
համեմատական չեն իրենց կարողութեան հետ : Միւս
կողմէն՝ մենք անձամբ գիտենք թէ միշտ կանոնաւոր
եղած են իրենց վճարմանց մէջ : Կը հետեւի թէ կը վա-
րանինք զՁեզ յորդորելու կամ զգուշացնելու անոնց
հետ գործ ընելու :

Յուսալով որ ուղիւ առթիւ աւելի օգտակար կրնանք
Մնամք Տեարք ,
ըլլալ Ձեզ .

Ձեր անձնուէր ծառաներն

[Թուական]

* * *

32. Անձի մը նկատմամբ շաւ խօսիլ :

Տէ՛ր,

Ի պատասխանի Զեր ամսոյս . . . ի պատուականն, ուրախ եմ կարենալ Զեղ իմացնելուս թէ Պ . . . հոս հաստատուած հինդ տարիէ ի վեր, մեր հրապարավին վրայ ընդհանուր յարդանք և վատահութիւն կը վայերէ, և թէ ես յօժարակամ պիտի տայի իրեն աւելի երկար ու մեծ վարկ մը անկէ աւելի՝ զոր Զեղմէ կը ինչը : Լուրջ և պարտաճանաչ մարդ մը ճանչցուած է և ցայսօր ըրած բոլոր գործառնութիւններն՝ խելացի և բաւական աղէկ վիճակի տէր վաճառական մը ըլլալը կ'ապացուցանին :

Եյս աեղեկութիւններն ուղածնուդ պէս գործածեցէք, և հաւատացէք զիս, Տէ՛ր և բարեկամ,

[Թուական]

Զեր անձնուէր ծառայն

* * *

33. Անձի մը նկատմամբ տեղեկութիւն խնդրել :

Տէ՛ր,

Վատան միանդամայն Զեր բարեկամութեան և գաղտեկութիւն մը ստանալու համար :

Տեղւոյդ . . . անուն անձէն 40,000 ֆրանքի յանձնաբարութիւն մ'ընդունած եմ, որուն կէսը կանխիկ և

կէսը Յ ամիսէն վճարելի : Բայց որովհետեւ այս անձը բնաւ չեմ առնչնար և չեմ ուղեր գործի մը մէջ նետուիլ, ասամնց գիտնալու թէ ի՞նչ տեսակ մարդոց հետ է գործս, կուգամ խնդրել որ հաճիք անկեղծօրէն ինձ ըսել թէ կրնամ ապահովութեամբ ապրանքս յանձնել :

Պիտի յետածգեմ պատասխանել . . . էքէնտիլի նամակին, մինչեւ որ Զենէ հարկ եղած տեղեկութիւններն ստանամ : Կրկնապէս երախտապարտ պիտի ընէք զիս եթէ հաճիք կարելի եղածին պէս շուա հաղորդել զայն: Գաղտնապահութեանս վրայ վատան եղէք և ոչ մէկուն պիտի հաղորդեմ ինչ որ իբր գաղտնիք կը խնդրեմ Զենէ : Հաւատացեք թէ առիթը ներկայանալուն նոյն պիտի ծառայութիւն և ես պիտի մասուցանեմ Զեղ :

Զերդ ի պատէ

[Թուական]

34. Պահանջմ խնդրել :

Տէ՛ր,

Պատիւ ունեցանք քանիցս Զեղ գրել մեր հաշուոյն գումարը պահանջելու համար . բայց դուք ոչ պատասխանեցիք և ոչ ալ մեր խնդիրը կատարեցիք :

Այլ ես չկրնալով սպասել՝ Զեղ կ'իմացնենք թէ գործը գատարան յանձնած ենք . որովհետեւ անպատճեն կարգադրութիւն մը պէտք է մեղի, նկատելով ճառ կատարեցիր ունինք ընելիք յառաջիւր մենք ալ շատ վճարումներ ունինք ընելիք յառաջիւր կայ ամսոյ 15 ին : Կը յուսանք թէ կ'ըմբըսնէք մեր այս ստիպողականութիւնն՝ որ մեղի խիստ լեզու դորու

ծածել կուտայ և թէ մեր յարաբերութիւններ չեն վը-
նասուիր :

[Թուական]

Բնդունեցէք մեր բարեհներն
* * *

35. Փաստաբանի մը ուղղուած :

Տէ՛ր,

Տեղւոյս կօշկակարներէն Պ . . . ի դէմ դաստավարե-
լու համար պէտք եղած թղթերն Զեզ կը խրկեմ : Ան-
պատճառ վճարելն կ'ուզեմ, և բնաւ տրամադիր չեմ
չնորհում ընելու, մանաւանդ թէ այս մարդը դիւրա-
սուզեր ես վիսանել :

Ամէն միջոց ձեռք առէք, կ'աղաջեմ, և առանց
յապաղման :

[Թուական]

Զեր ամենախոնարհ ծառայն
* * *

36. Ծանուցագիր :

Տէ՛ր ի Սամսոն

Կ. Պոլիս

Տէ՛ր,

Պատիւ ունեցանք ընդունելու Զեր նամակն, որով
կ'իմացնէք թէ Պ. ի 500 ֆր. ի վարկագիր մը տուած էք
մեր տան վրայ :

Զեր հրահանդները կէտ առ կէտ պիտի գործադրուին:
Հաճեցէք ընդունիլ մեր յարգանքներն :

[Թուական]

* * *

37. Ծանուցագիր :

Կ. Պոլիս

Մեծ. ի Նիկոմիդիա

Տէ՛ր,

Կը համարձակեմ Զեր տան վրայ վարկ մը բանալ
յամակարերիս :

Հաճեցէք իրեն վճարել որչափ դքամ որ ուզէ, մին-
չափ քրանք, ի փոխարէն իր ընկալագիրնե-
չել քրանք, կամ փոխանակագիրներուն՝ զորս ուզէ քաշել
մեր տան վրայ Զեր հրամանին, որն որ Զեզի հաճոյ
ըլլայ :

Բնդունեցէք մեր յարգանքներն :

[Թուական]

* * *

38. Այլ ծանուցագիր :

Պուստ

Մեծապ. ի Քոնիս

Տեա՛րք,

Ներկայիւս Զեզ կ'իմացնեմ թէ ի վար-
կագիր մը տուած եմ Զեր տան վրայ ֆր-
քանքի :

Հաճեցէք ինկատի առնուլ զայն ի պատիւ իմ սսու-
րագրութեան :

Մնամ , Տեա՛րք , Զեր խոնարհ ծառայն
[Թուական]

* * *

39. Ապրանի մը յանձնարարութեան մասին
շնորհաշիֆ :

Տէ՛ր

Ներկայ ամսոյս ի Զեր պատուականաւն
ինձ դրուած յանձնարարութենէն շատ դո՞ս մնացի և
աղաչելով այս մասին իմ անկեղծ չնորհակալիքս ըն-
դունիլ , ներկայիւն կը կցեմ հաշուեցուցակն այն ապ-
րանքներուն՝ զորս անմիջապէս Զեր խրկեցի :
Ապրանքն բոլորովին համաձայն պիտի դանէք նմոյ-
շայտնէք անոր նկատմամբ՝ ի մօտոյ նոր յանձնարարու-
թին մ'ալ տալով ինձ :

[Թուական]

Խորին յարգանօք

* * *

40. Տան մը սմաճկութիւնը ծանուցանել :

Տէ՛ր ,

Ցաւօք սրտի կը ծանուցանեմ Զեր . . . Եղբարց
տան սնանկութիւնը , Դժբաղդարար մեծ պահանջման մէջ կը գտնուիք , չնոր-
հապարտ պիտի ըլլամ Զեր եթէ համիք զիս ներկայա-
ցնել այս գործին մէջ . այս մասին Զեր կը խրկեմ իրենց
հաշիւն համդերձ փոխանորդագրով : Սակայն եթէ կըր-
նաք կարգադրութեան մը յանդիլ , կամ պայմանաժամ
քան թէ դատի մանել : Ինչ որ ալ ըլլայ , Զեր վրայ
այնքան վասահութիւն ունիմ , որ կատարելապէս կ'ա-
պաւինիմ Զեր խոհեմութեան : Գործեցէք ինձ համար
այնպէս՝ ինչպէս պիտի գործէիք Զեր անձին համար , և
հաւատացէք զիս :

Զերդ , և այլն

Որովհետեւ դուք ալ առնելիք ունիք , կը փութամ Զեր
ծանուցանել , որպէս զի պէտք եղած միջոցները ձեռք
առնէք : Այս մասին ինչ որ պատահի , փոյթ պիտի
տանիմ Զեր տեղեկացնելու :

[Թուական]

* * *

41. Պատասխան :

Տէ՛ր ,

Մեծապէս չնորհակալ եմ Զեր . . . Եղբարց տան
վրայ Զեր ինձ տուած տեղեկութեանց համար : Մեծ
զարմանք չպատճառեց ինձ այս բանը , իմացած ըլլա-
լով արդէն թէ իրենց երկու փոխանակագրերն բողոքի
առիթ տուած էին :

Որովհետեւ նոյն քաղաքին մէջ կը գտնուիք , չնոր-
հապարտ պիտի ըլլամ Զեր եթէ համիք զիս ներկայա-
ցնել այս գործին մէջ . այս մասին Զեր կը խրկեմ իրենց
հաշիւն համդերձ փոխանորդագրով : Սակայն եթէ կըր-
նաք կարգադրութեան մը յանդիլ , կամ պայմանաժամ
քան թէ դատի մանել : Ինչ որ ալ ըլլայ , Զեր վրայ
այնքան վասահութիւն ունիմ , որ կատարելապէս կ'ա-
պաւինիմ Զեր խոհեմութեան : Գործեցէք ինձ համար
այնպէս՝ ինչպէս պիտի գործէիք Զեր անձին համար , և
հաւատացէք զիս :

[Թուական]

* * *

42. Զեկոյց :

Երիտասարդ մը, քաջահմուտ վաճառականութեան, և ող հինգ տարի Պոլսոյ ամենէն նշանաւոր վաճառատանց միոյն մէջ պաշտօն վարած է, պաշտօն մը կը միտուէ. Ամենալաւ տեղեկութիւններ կրնայ տալ: Դիշանն անմիջապէս:

Յ. Գ. — Աղէկ Անգղիերէն ալ կը դրէ ու կը խօսի:

43. Պայմանագրի օրինակներ :

Ստորագրեալներուն, Բերա . . . փողոց . . . թիւ
• • • բնակող վաճառատան . . . ի, մէկ կողմէն .
Եւ միւս կողմէն, Բերա . . . փողոց . . . թիւ . . .
բնակեալ՝ վաճառական . . . ի միջեւ:
Հետեւեալն պայմանագրուած է:

Յօդ. Ա. — Վերոյիշեալ անձանց միջեւ հաւաքական ընկերութիւն մը կազմուած է, ամէն տեսակ ասպրանքի վաճառականութիւն ընկելու համար, յանձնարարողէւ:

Յօդ. Բ. — Դրամագլուխը երեք հազար ֆրանք պիտի ըլլայ, և կէս առ կէս պիտի դնէ ընկերաց իւրա քանչիւն. արուած դրամագլուխը կրնայ դրամ կամ ընկերութիւնն ընդունուած ուրիշ արժեթուղթ ըլլալ:

Յօդ. Գ. Ընկերութեան անունը պիտի ըլլայ . . . : Ընկերակիցներուն իւրաքանչիւրը պիտի կրնայ դրամագլուխը միմիայն ընկեր:

բութեան գործերուն համար պիտի կրնայ գործածուիլ: Յօդ. Դ. — Ընկերութիւնն հաստատուած է Բերա . . . փողոց . . . թիւ . . . :

Յօդ. Ե. — Ընկերութիւնը պիտի տեսէ տասը տարի, և պիտի սկսի յառաջիկայ Մարտ 1 էն հաշուելով:

Յօդ. Զ. — Ընկերակիցներուն և ոչ մին պիտի կըրանայ իր հաշուոյն գործ ընկել, որովհետեւ բոլոր իր խնամքաներն ընկերութեան գործերուն պէտք է նուիրէ:

Յօդ. Է. — Շահերու բաժանումը կէս առ կէս է:

Յօդ. Ը. — Ընկերակիցներուն իւրաքանչիւրը պիտի կրնայ՝ իր ընկերակիցն հաւանութեամբ՝ ընկերութեան մնառուկը դնել, ընթացիկ հաշուուիլ, ուղածին չափ գումար. ընկերութիւնը տարեկան 6 % տոկոս պիտի տայ իրեն այս գումարին համար. գոնէ ամիս մը առաջ ընկերութեան չիմացուցած՝ գումարը չպիտի առնու:

Յօդ. Թ. — Ամէն ամիս, իւրաքանչիւրը ընկեր . . . պիտի առնէ. այս առնուած դրամները ընդհ. ծախքի հաշուոյն պիտի անցնին:

Յօդ. Ժ. — Ընկ. լիքիտասիոնը ընկերներու միոյն կողմէ պիտի ըլլայ, և աւելի անոր կողմէ՝ որ ընկերութեան վաճառականութիւնը պիտի չարունակէ:

[Գրեալ ի Բերա Թուական] Առողջութիւնն

* * * *

44. Պայմանագրի ուրիշ օրինակ :

Ստ Կայքրեալներն՝ . . . մեծաքանակ վայտի վաճառական, բնակեալ ի Բ . . . փողոց, . . . թիւ, մէկ կողմէ, և . . . կալուածատէր, բնակեալ ի . . . փողոց, . . . թիւ, միւս կողմէն՝

Հետեւեալ պայմանները կնքած ենք.

Յօդ. 1. — Ես . . . , կը յայտարարեմ գլխադրութեամբ ընկերանալ Պ. . . ի հետ, մնծաքանակ փայտի վաճառականութեան մէջ՝ զոր կ'ընեմ ի . . . ուր պիտի հաստատուի ընկերակցութիւնը, բաժնելու համար, յետագայ եղանակով, միշեալ վաճառականութեան յառաջ գալիք շահերը, և ինձ հետ կրկու համար պատահելիք վնասները, սակայն այնպէս որ ինչ որ ալ ըլլան այս վնասները՝ Պ. . . ի նկատմամբ, իր դրած դրամագլուխը չ'անցնին :

Յօդ. 2. — Ներկայ ընկերութիւնս . . . տարուան համար կնքուած է, սկսեալ ի . . . ց . . . :

Յօդ. 3. — Ծնկերութեանս բոլոր տեւողութեանը միջոցին՝ միշեալ վաճառականութենէն յառաջ գալիք նակից պիտի ըլլայ Պ. . . :

Յօդ. 4. — Ես . . . , կը խոստանամ միշեալ . . . ի բուն : Յիշեալ . . . գումար, հետեւեալ ժամանակամիջոցներուողութեան միջոցին, միշեալ Պարոն . . . ի արամարդութեան տակ պիտի ըլլայ, և ամբողջ ինք պիտի վճարել . . . գործերու մէջ :

Յօդ. 5. — Պ. . . առանձին պիտի վարէ ընկերութիւնս : Հետեւաբար, ինք պիտի ընէ զնումները և վարութեանս միւս գործականները, և պիտի տեսնէ բոլոր և ոչ մէկ կերպով պիտի կրնայ միշեալ ընկերութիւններն : Պարոն Մ. . . գործերուն խառնուիլ :

Յօդ. 6. — Ծնկերութեանս անունը պիտի ըլլայ . . . : Պիտի ստորագրէ ընկերութեան ա-

նունով, և այդ ստորագրութիւնը միայն ընկերութեան պէտքերուն համար պիտի կրնայ գործածել :

Յօդ. 7. Ծնկերութեանս պայմանաժամը լրանալուն, Պարոն Մ. . . իր դրած դրամագլխոյն գումարը և անոր ինկող շահերուն բաժինը պիտի ընդունի . եթէ վնասը ըլլայ, իր դրած դրամագլուխին պիտի ընդունի, անոր ինկող վնասը մէջէն հանուելէ վերջ :

[Թուական]

Ստորագրութիւններ

ԸՆԴԱՑՑՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. ՍԱԼԵՏՐԱԿԱՆ ՇԱՄԱԿ. — Դիւղը կը բնակիք և սովորութիւն ունիք տարեկան նպարը մէկոնց զներու . զրեցէք այն նպարավաճառին որմէ կը զներ սովորաբար, յանձնարարելով իրեն ձեր պէտք ունեած նպարելինըք :

2. ՍԱԼԵՏՐԱԿԱՆ ՇԱՄԱԿ. — Հայրենիդ՝ որ անդամալոյծ է և զինար զրել մէկու մը՝ որոն սուակ փոխ տուած է և որ սովորութիւն չէ վճարած : Ամենայն բաղաբավարութեամբ կը զրեք և կը հրաւիրէք այդ անձն՝ որ մէկ մ'ալ չուշացնէ պարտը վճարել :

3. ՍԱԼԵՏՐԱԿԱՆ ՇԱՄԱԿ. — Զեր մայն՝ որ այս միջոցին շատ զրայած է, ժամանակ չունի զրելու նպարավաճառի մը՝ որոն յանձնարարութիւն մ'ունի ընելիք . ձեր մօր տեղ դոք կը զրեք, մի՞ մոռնար նշանակել ուզուած ապրանքներուն զինն ու բանակութիւնը :

4. ՎԱՅԱԿԱՆ ՇԱՄԱԿ. — Վայական մը նոր տուն մը կը հաստատէ իր մէկ գործակատարին համար՝ որ երկար տարիներէ ի վեր իրեն բոլ ծառայած էր հաւատարմապէս : Արդ այս տունը իր բոլոր թղթակիցներուն կը յանձնարարէ :

5. ՀԵԱՐԻՔԻ ՄԵՐ ՇԱՄԱԿ. — Հեարիք մը՝ որ զիւտ մը ըրած է, կ'ուզէ վաճառել զայն վաճառականի մը . ուստի նամակով կ'առաջարկէ զայդ՝ իր զիւտին առաւելութիւնները ցուցնելով :

6. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԽԱՆԳԻՆ. — Սեղանաւոր մը՝ որ արհենսաւորի մը փոխատութիւն մը պիտի ընէ, իր մէկ բարեկամին կը դիմէ

գրաւոր կերպով ու կ'ուզէ տեղեկութիւն ստանալ՝ փոխ դրամ խնդրով
արմեստաւորին նիւթական վիճակին վրայ :

7. Վաճառաւուն մը հասածել. — Վաճառական մը Վիքն-
կած է : ապրանքներ պիտի ծախէ, և ասոր համար նոր դորձի ձեռնար-

8. Վաճառականական. — Վաճառական մը՝ որ հրապարա-
կի վրայ երկար ժամանակ պատուաւոր կերպով դորձ տեսած է, մեռաւ
թակիցներուն կ'իմացնէ թէ ինը յարաբերութիւններ պիտի ունենար-

9. Որդի մը իր հօրը. — Թաղէոս, զոր իր հայրը զիշերօթիկ
վարժարան մը դրած է կարելի եղածին չափ կատարեալ կրթութիւն մը
առնելու համար, կ'իմանայ թէ նիւթական մեծ կորուսաներ ունեցած են-
իր ծնողը և անձնութեան մասնաւոծ . խոյն կը զրէ անոնց և կը
յուսայ շուտով դրամ շահիլ և ընտանիքին անձկութեան դարման տանիլ:

10. Պատասխան վերինին. — Թաղէոսի հայրը կը պատաս-
խելով. բայց չուզեր զայն ընդունիլ: Խնայողութիւններ պիտի ըլլան,
պիտի չանայ օգտուիլ իր ընդունած դասերէն :

ԳԼՈՒԽԻ Գ.

ԿԾԱԿՆԵՐ

ՊԱՏՃԵՆ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ ԿՏԱԿԻ

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅՑ ԵՐ ՀԱՇԻԽՑՆ ՍՐԲՈՅՑ

Գևինիրէ 1865 ամի, Յունաւարի մէկ

Ես կ. Վ. Շահնազարեանց, ծնեալ ի Համատան յաշ-
մի 1814, հիւանդութեամբ հոս գալով բժշկութեան
համար և տեսնելով որ վիճակս օր աւուր կը ծանրա-
նայ . ուստի քրիստոնէական պարտքս ամենայն ջերմե-
ռանդութեամբ կատարելէ զկնի այս կտակս ըրի առողջ
մտօք, իմ սեփհական գրչաւ և սորորագրութեամբ
ի գիտութիւն ապագայից, և ի հրահանդ իմ կտակա-
ր Վանմաղայլ նուպար փաշային, իմ բարեկամին
և բարերարին :

1. Ունիմ ի Պոլիս հանգուցեալ Խորասանձեան Պետ-
րոս Ամիրայի տունը երկու մաստուկ գիրք, զգեստ եւ
բոս Ամիրայի տունը երկու մաստուկ գիրք, զգեստ եւ
կարասիք, նոյնակս Ղալաթիայ լուսաւորիչ եկեղեցւոյ
քարուկիր սինեկի պատուհանն մէկ կապոց պիտանի և
քարուկիր սինեկի պատուհանն մէկ կապոց պիտանի և
անպիտան գրուածք, սմալար, վերմակ, եւայլն . զորս
գրեր եմ Խասպիւզի Գէորգ քահանայ եւլորս իւր տունն
տանիլ. Այս ամէնս նոյն անձին կը ձգեմ իբրև միշտակ-
տանիլ: Այս ամէնս նոյն անձին կը ձգեմ իբրև միշտակ-

տանիլ:

2. Ղալաթիա բնակեալ Մեծատուրեան Պետրոս աշայի մօտ շահով ունիմ 100 Օսմանեան լիրա, իսաս-
դիւղի Տէր Գէորգի և Մոմեան Մկրտիչ աղայի գի-
տութեամբ: Այս 100 լիրաս իմ մահուանէն յետոյ առ-
նուի և Թիֆլիզ գրկուի մեր անկեղծ բարեկամ Զաքա-
րիա Յովհաննէսեանին, որպէս զի անկէ 75 լիրան իմ
քեռորդի Մկրտիչ Արքահամեանին ընծայէ իմ կողմէն,
իսկ 25 լիրան իմ հօրեղբօրորդւոյն:

3. 1856 թուէն սկսեալ մեր մամուլէն ելած Հայե-
րէն և Գաղկերէն Շար Պատմագրաց և Կանոն Սաղմոս
Դինակի չափ աղքատ դպրոցներու ընծայեր եմ, մնաց-
կը ինդրեմ Նուպար փաշայէն որ զանոնք ամէնն ալ
խել տայ:

4. Զրդ յօդուածին մէջ յիշատակեալ Զ. ին 150
մար, որ և ինձ երկու տարի առաջ 200 ֆրանք դըր-
դրուի որ կարօտաւոր ուսումնականաց և աղքատ ու-
ղինն:

5. Թէոդոսիա Այլաղեան Գաբրիէլ վարդապետի
մօտն 70 հատոր Շար Պատմագրաց ունիմ և 10 երկ-
րագունակի 30 թուի վարձ. գիրք և գումարն Նուպար

թղթոյ, 42 Շար Պատմագրաց, և 8 օրինակ Երկրա-
գունակ ստակ ունիմ. առնոք ալ կտակակատարս առնու:
6. Եսայի Պատրիարքի մօտ 20 Հերքումն Դաշանց
գունակ ստակ ունիմ:

7. Հալէպցի Քիւրքճեան Պարոն Յովհաննէսն մեզ 15

լիրա սթէրլին, 11 լիլին, 10 ½ փէնիփ ստակ պարտա-
կան է ի զին մէկ ջրհան մեքենայի՝ զոր անոր աղա-
չելով Անգլիա Յակոբեան աղայի ձեռամբ գնեցի և
Եքիզէր կարապետ աղայի ձեռամբ լրկեցի անցեալ
տարի. հաշուեթուղթքն Մանչեսթեր են. այս գումարս
ալ կտակակատարս ստանայ: Նոյն Քիւրքճեան մեզ
պարտական է նաև 7 Երկրագունակի 30 թուի ստակ.
այս ալ ստանայ:

8. Մանչեսթեր Եղիազարեան կարապետ աղայի մօտ
ունիմ 7 Օսմանեան քօնսօլիսէ. անոր յանձներ եմ նաև
մէկ կնքեալ սնտուկ, որու մէջ կան մէկ սոկի էնֆիէյի
տուփ, մէկ սոկի մինէլի տուփ, մի սոկի և մի արծաթի
ժամացյցներ, քանի մը հարիւր սոկի և արծաթ հին
դրամներ, և մի փոքրիկ մագաղաթի լրայ գրուած Ա-
ւետարան Յովհաննու. Բախտիար Պատրիկի գործածու-
թեան համար, մի փղոսկրեայ այցելութեան պահարան
քանդակեալ, և այլ մանր մունր արծաթի և սոկի և
այլ կարասիք: 23 հին դրամներն Աղնուուհի Ֆուլիկ
տիկնոցն Նուպար փաշայէն կը ձգեմ իբրև ամենաչնչին
երախտագիտութեան ապացոյց. մագաղաթի Աւետա-
րանն որ իմ ընտանիքէս ինձ մնացեր է և որ արդարե
յոյժ հազուագիւտ է, որովհետեւ ոչ էջմիածին, ոչ Ե-
րուսաղէմ, ոչ Վենետիկ և ոչ այլուր անոր նմանն չկայ,
որոյ համար ինձ շատ անգամ 1500 աալով կամեցան
ունել և ես չկամեցայ աղղէն հանել, Վ. Նուպար փա-
զին կը ձգեմ իբրև յիշատակ անմուաց սիրոյ, այնու-
զային կը ձգեմ իբրև յիշատակ անմուաց սիրոյ, այնու-
զային ստակ որ որդւոց որդի իր ընտանիքին մէջ պահէ,
իսկ ամէն մնացեալն ինդրեմ վաճառել տայ և մէկ գու-
մար կաղմէ, որոյ համար յետոյ գրելու եմ: Քօնսօլիս-
ներն նոյնակէս ծախուին և գումարն նոյնակէս միանայ:
Նոյն աղայի մօտ թղթոցներ եմ դարձեալ 40 զինէ, որ

մեր դարանի մասր ծախքն հոգայ. եթէ ես պարտուկան մնացեր եմ, տրուի, որովհետեւ մինչ և հիմայ հաշու չէ զլկեր :

9. Մանչեսթերի եկեղեցին ունիմ մէկ արծաթի գըլ-խով ապահով գաւաղան, մէկ արծաթի մասնատ ոփ, մէկ արծաթի խաչ, արծաթապատ Աւետարան, մէկ ձեռք զգեստ պատարագի. բոլոր եկեղեցական գրե. նըն իմա են. ունիմ նաև մէկ կերպաս փլոն, մէկ չու խայ սոր վերարկու, վեղար, եալին, զորս բոլորն ալ սոյն եկեղեցին ձգեմ յիշատակ, բացի արծաթի խաչ. որ Խասդիւղի եկեղեցին աւանդ առնուած ըլլալո. կը և իմ հոգիս աղատէ :

10. Մանչեսթերի եկեղեցւոյ տան մէջ ունի մի գրատուն, ուր կան 3000 հատորի չափ Հայերէն, և աղ-ներ. կան հարիւրաւոր արծաթի և պղնձի անափքու սեր, Պատմութիւնն Պօլսոյ Միջագիւղի Պատղարքի առեր եմ, և իր տեղը դարձուի. իմ ննջարանիս թէջն արծաթի կերակրոյ դգալ, և նոյնաչս չափ, և 6 տոդ լեցուն զգեստով և կրկու յոմա ամբողջ լուսանկարի գործիք և հարիւրաւոր չի ինի և պլանտի : 3000 հատոր դրեանքն կը կտակեմ. Պլոյ Հիւանդանոցին և իշմիրի Մեսրոպեան դպրոցին. մէն ընս մօտ :

11. Մանչեսթեր մէկ ամբողջ տպարան ունիմ հան-դերձ մամլով և ամէն պարագայիւք. 11 տեսակ պղնձի դերձ պարագանի և գումար ըլլայ մեր կտակակառ-

ամբողջ մայրերն և այլ երեք տառ ցուլիչ Նորմանտոնին մօտն է, զորս տուեր էի գիր թափելու և մոռացմամբ մնացեր են. ունիմ մեր տպարանն նաև 25 կապ թուղթ և 700 քիլոյի չափ Հայերէն և Անդղիարէն տառք : Ա-մէնն ալ ծախուին և գումարը մեր կտակակառարին յանձնուի :

12. Մանչեսթեր մէկ բժշկի՝ որ Քուէնախ Սդրիդ կը նստի՝ 1 լիրա 18 չիլին պարաք ունիմ, նոյնափէս ցուլիչ Նորմանտոնին 14 չիլինի չափ, նոյնափէս Փարիզ Ռիւ Վալէն 48 թիւ ցուլիչին 7 ֆրանք, և միւր Լա Հարավ 38 թիւ ծերունի կաղմարարին 16 ֆրանք տալու եմ. ասոնք ամբողջապէս վճարուին և հոգիս աղատուի :

13. Մանչեսթերի գրոցս մէջ կան իմ շինած Գաղ. և Հայերէն Բառարանն, Գաղ. Միքայէլ Պատրիարքի պատմութեան թարգմանութիւնն, երկու հատոր Եկեղեցական պատմութիւնն, և մի հատոր Ընդարձակ քրիստոնէական վարդապետութիւնն և այլ շատ մասր գըրշուածք. ասոնք յանձնուին Խասդիւղի թանդարանին, գուցէ օր մը ապուին :

14. Մանչեսթեր ապած պատրաստի կան Տէր Յովհաննէս Խաչկեանի անցքն և իր պատկերն պղնձի վրայ փորուած հոն է: Այն գրքի ճակատի խաչն ծուռ դրուերէ և թուականն 1864 է, և գրքին մէջ քանի մը տառասիսալներ կան, որոնց ցանկն իմ և անոր թղթակցութեան մէջ է: Մեր գրաչարին այս վրիպակները շարել տրուի և ճակատին հետ մէկտեղ տպուին 1865 թիւ դնելով: Նոյնափէս անոր 500 պատկերն տպուի և իմ ծախութ թղթակալմ ընելով, բոլորն մէկ մնառուկ լեցախորով թղթակալմ ընելով, կալկաթա իրեն դրկուի: Նոյնափէս հոն տպած պատրաստի կայ Միքայէլ Պատրիարքի պատմութեան առաջին հատորն: Ասիկայ ալ թղթակալմ

կապուի և մեր բաժանորդ վճարողներուն ձրի բաժնուի և մնացեալն ծախուի ի շահ մեր :

15. Փարիզ Կոստանդնեան Պօլոս աղայի մօտ մի պարկ ունիմ որոյ մէջ կան 25 Լոմբարդ, որոց արժէքն է 13500 ֆրանք, 2 Օբլիկասիոն Վիլ առ Բարիսի, որոնց արժէքն է 850 ֆրանք, 5 հինգերորդական Օբլիկասիօն Կոմմիւնալ, որոնց արժէքն է 405 ֆրանք, իմ մօտ սնտուկիս մէջ ունիմ երեք օբլիկասիոն Քրէսի իմ մոպիլիէ, որք ինձ արժեր են 1500 ֆրանք. բայց այժմ հաղիւթէ 1200 ֆրանք արժեն : Ասոնք ամենը ծախուին և գումարն իմ կտակալատարն առնու :

16. Ուշնիոյ աղքատաց համար 3000 ֆրանքի չափ օգնութիւն ժողվեցի, և Պ. Պ. Լանկլուայի և Մուրատեանի գիտութեամբ հոն դրկեցի . յետոյ Յակոբեան աշղան անցեալ տարի ինձ յանձնեց 4 վրա, Բիրմանէն ալ այս տարի եկաւ 270 ֆրանք : Այս գումարա ստացուի և մեր և լիրայի հետ միացունելով իր տեղն դրկուի :

17. Իմ ձեռքս եղած ստակն իմ թաղմանս բաւական է . ինդրեմ որ իմ թաղումն պարզ ըլլայ և անշուրք : Կամ գրանիտ մէկ ու կէս մէթր երկայն, եւ վրան դըրշահնազարեանց, ծնեալ 14 մայիսի 1814 ամի ի Հա-

18. 25 տարի է եղեր մէկ փափաք միայն ունեցեր եմ, և այն իմ տոհմին համար : Զանացեր եմ ընդ զահագան ժամանակս մէկ ուսումնական միաբանութիւն նաւոր եկեղեցականներ պատրաստել, որք այլ եւ ազգութիւն, Փարիզ և Մանէկութիւր իմ ժամանութեանց կեն-

դանի վկայ են . ուստի ինչ որ իմ կենդանութեանս չկարացի ընել, իմ մահուանէս յետոյ կը յանձնեմ իմ կտակակատար Վանմափայլ նուպար փաշային որ ընէ . իմ անունս փոյթ չէ որ միշուի կամ ոչ, բաւական է միայն որ իմ փափաքս կտարուի : Հետեւաբար իմ վերոյիշեալ ստացուածքն վաճառուելէն և պատրաստ գումարներն ձեռք բերուելէն զկնի կարծեմ թէ հազար գինէի զուտ զումար կը կազմուի : Այն գումարն կը ինդրեմ այնչափ ատեն շահով բանեցունէ՝ մինչև որ և հազար գինէի գումար ըլլայ . ապա դրամագլուխն հաստատուն եկամուտի գնելով՝ անոր տարեկան եկամուտովն տասն աշակերտի համար իմ անուամբ մէկ գիշերօթիկ դպրոց բանալ տայ . վերատեսչի, դասաւուաց և այլ տնօրէնութիւններն իր գերդաստանին մէջ պահելով, որով Աստուծոյ օրհնութեանն, տոհմին երախտագիտութեան, և իմ գոհութեանս արժամնի ըլլայ ինքն, իւր ընտանիքն, և բոլոր ազգատոհմն յորդուց յորդիս, ամէն :

19. Իմ դէմպր փոստի ալբումն Պօլոս նուպարեանին միշատակ կը ձգեմ որ քանի տեսնէ՝ զիս միշէ :

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՂԵՑ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՃԸՆՊԵԿԵԱՆԸ Կ'ԱՏՈՐԱԳՐԵԱՄ

ՆԵՐԱՅԵՍ ԵՊԻՍԿ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

1865 Օգոստոս 31

Ք. Խասզիւղի

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԻՄՆԱԾԱԿՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏ ԶՈՒԾՎ ԶՈՒԾՎ ԶՈՒԾՎ ԶՈՒԾՎ

Հիմնարկութիւն և Ասպետ Զունդ ստեղծեալն յԱս-
պետէ Աւատածատրոյ առ Զունդ, որ հապատակն է
Աւատրիոյ և բնակէ ի կ. Պոլս, սահմանեալ է ի խրա-
ժոյս վերակարգ ուսմանց ի Հայս ուղղափառ (Գոր-
գորեան) :

Սկիզբն գործոյ Հիմնարկութեանս լինիցի զկնի մահ-
ուան Հիմնարկողին :

Նախաւոր դրամագլուխն որ վասն այսր վախճանի
եղեալ է ի Հիւպատոսարանն կայսր արքայական Աւատ-
րիոյ - Հունդարիոյ որ ի Պոլս է գումար (60000) վաթ-
տոկոսիք մինչև ի մահն Հիմնարկողին և աձելոց պար-
վասն իւրոյ գործոյ այս լինելով վախճան նորա ըստ
հետևեալ պայմանաց :

Ա. Եկամուտ բովանդակ դրամագլուխն զոր Հիմ-
նարկութիւն Ասպետ Զունդի դնելոց է զկնի մահուան
գումար 2000 ֆրանքաց ի պէտս ուսանողաց ուղղափառ
յայլ ամենայն պետութիւնս և որք չքաւորք իցեն ևւ
փափաքիցեն ի համալսարանի ուրեք յԱւատրիա - Հուն-
դրաւագիստեան, բժշկութեան, աստուածաբանու-
տարապետութեան կամ այլ ամենայն արուեստաւոր

դիտութեանց և արուեստից : Ընտրութիւն ասպարիզին
և Համալսարանին թողեալ է ի կամս ուսանողաց :

Բ. Հիմնարկութիւնս վարիցի ի ձեռն Հիւպատոսարա-
նին Աւատրիա - Հունդարիոյ կ. Պոլսոյ, որ առ գիւրել
ջանի իւրոց կարէ կարգել զոք ինամակալ, միշտ ընդ-
իւրո՛ հակողութեամբ, և նմա պարտք են կատարել
զառն չութիւն ընդ ուսանողաց և հակել ուսմանց նոցա:

Ա յն այս խնամակալ զհաշիւ տեսչութեան իւրոյ ա-
մի ա նի մատուացէ Հիւպատոսարանին և ընկալցի զգինա
ծախուց իւրոց : ի խնդրոյ խնամակալիս Հիւպատոսա-
րանն ի վարձ տարեկան աշխատութեան և բոլոր ծա-
խուց նորա կարէ տալ առ առաւելն 1000 ֆր. միայն :

Գ. Դրամագլուխի Հիմնարկութեանս հանդերձ ամե-
նայն յաւելուածովք պահիցի ի Հիւպատոսարանն Աւատ-
րիա - Հունդարիոյ կ. Պոլսոյ կամ ի ձեռն նորա արկցի
ի մի ւմ յառաջնակարգ պանդայից՝ այլ միշտ ընդ հա-
մարս լարտութեամբ Հիւպատոսարանին :

Դ Խնդրուածք առ ստանալ զմի ի թոշակաց ուղ-
ղին առ Հիւպատոսարանն Աւատրիա - Հունդարիոյ կ.
Պոլս, եթէ խնդրողն ի հապատակաց իցէ պետութեան
Աւատ հա - Հունդարիոյ, իսկ առ Պատրիարքարանն
ուղղ իառ (Գրիգորեան) Հայոց կ. Պոլսոյ՝ եթէ ի հպա-
տակ ի իցեն այլազան պետութեանց :

Ե թոշակ իրաւամբ վերապահեացի միշտ վասն ու-
սան որ Աւատրիոյ հպատակ ուղղափառ (Գրիգոր-
եան հայ իցէ, և միւս թոշակ վասն՝ որ Հունդարիոյ
հպա- ոկ ուսանող իցէ : ի գէպս յորս ի մի մասանցն
միա առութեան ոչ գտանի բնիկ ոք արժանի՛ Հիւպա-
տոսա- անն կարէ վերգոսին թոշակսն սահմանել այլում
որ զ անիցի կամ ընդ Աւատրիոյ կամ ընդ Հունդարիոյ
պետութեամբ՝ միայն զի կատարեալ արդարութեամբ

ընտրեսցի : Իսկ ի դէպս՝ յորս և ոչ ի միում յայսց մաս սամցն գտանի արժանի ուսանող ի ժառանգութեան երկոցուն վերապահեալ թոշակաց՝ Հիւպատոսարանն սահմանէ զնոսին վասն ընտրելոյն ի կողմանէ Պատրիարքարանին :

Ընդունելութիւն Աւստրիացի և Հունդարացի հպատակաց կատարի ի ձեռն Հիւպատոսարանին այսպէս . հրատարակէ և հրաւիրէ որ ոք կարօտ կամ չքաւոր իցէ, և ի վարս անբասիր, և որ վկայական ի ձեռին ունիցի յաջողեալ լինելոյ յերկրորդական ուսմունս և ըստ արժան բաւականի վարժ ի հայերէն լեզուի :

Ե. Միւս այլ թոշակքն տացին ի ձեռն Պատրիարքարանի, առ Հայոց ուսանողս պատկանեալս ուղղափառ (Գրիգորեան) Հայոց առանց խարելոյ վերկիր պետութեան: Բաց ի վկայականաց չքաւորութեան և անբասիր բարոյից՝ զոր մատուցանելոց են ուսանողքն առ Պատրիարքարան, պարտին քննել, նախ քան զբնուունելու Պիւնս մասնաւոր քննութեամբ ըստ եղանակի զոր Պատրիարքարանն որոշէ և ըստ պահանջել ժամանակին:

Պատրիարքարան դտեղեկագիր քննութեան և զանուանս ընտրեալ թոշակասուայն առաջի առնէ Հիւպատոսարանին Աւստրիոյ - Հունդարիոյ, սա ընդունի պատճառի անուցանին և առաջարկէ զայլ ոք փոխաթոշակառուացն ի Պատրիարքարանէ՝ այլ ի լինել կարեոր նակել ի տեղի մերժելոյն: Այսպէս ի պակասել միոյ ի պատճառարանին և Պատրիարքարանին :

Զ. Պատրիարքարանն, ըստ ցանկութեան ողբացեալ լոց է զմի ի թոշակացն վասն ուսանողի ի կանանց սեռ, որոյ փափաք իցէ ուսանել զվերակարգ գիտու-

թիւն յօտար աշխարհի և ի նմա կատարեալ գտանիցին պայմանք ընդունելութեան նշանակեալք ի Հիմնարկութեանս յախմիկ :

Է. Իւրաքանչիւր ուսանող զբաժին միոյ թոշակին վայելէ ցորչափ տեէ ժամանակ վերակարգ ուսման՝ այլ ոչ առաւել քան զի՞նդ ամաց բոլորումն :

Ծ. Խնամակալն զսահմանեալ գումարն հատուցէ առ ուսանողսն ի կարեոր ժամանակի :

Պարտք են սմա տեղեկանակ ուր թոշակասուն բնակէ, հոկել ծգութեամբ ի վերայ բնթացից ուսման նոցա և թէ զիարդ յաջողեալ ի տարեկան քննութեան :

Խնամակալն կանոնաւորապէս տեղեակ արասցէ բղնակատասարանն զորպիսութենէ աշակերտին և առաջարկեացէ հանել զթոշակն յորմէ ոչ օգտակար գատիցի:

Վասն աշակերտաց որ չիցեն Աւստրիացի կամ Հունդարացի՝ Հիւպատոսարանն տեղեակ առնէ զՊատրիարքարանն և յայսնէ զորոշումն իւր և խնդրէ զայլ ոք աշակերտ փոխանակ առաջնոյն ընծայել :

Թոշակն ոչ են իրաւոնք առողին կամ վայելովին, այլ ձրի պարզեւ՝ ցորչափ արժանապէս վայելէ :

Թ. Դրամագլուխ Հիմնադրութեանս անձեւնամերձ կացցէ և մնացէ, տոկոսիք միայն ի պէտս արկցին ըստ չափու թոշակացն :

Ամենայն յաւելուած տոկոսեացն Հիմնարկութեանս որ դեռ ևս ոչ իցէ բաւական առ գումար սահմանեաթոշակին բարդեացի ի դրամագլուխն :

[Առուազրութիւն]

Կ. Պոլս, 3 Ապրիլ 1890

ԱՍՏՈՒԱՆԱՌԱՅՈՒԹ 81 ԶՈՒԴ

Հաստատափ վաւերականութիւն վերոցգրեալ ստորագրութեան Սապետ Աստուածարարոյ ար Զունդ :

8

Հիւպատոսարանն կայսր - արքայական հաւանի լուտանձնել զկառավարութիւն առաջիկայ Հիմնարկութեանս ըստ ստորոգերեաց և ձեւակերպութեանց որ նշանագրեալ ի Հիմնարկողէն :

Հիւպատոս կայսր - արքայական


Ա. Պոլիս, 3 Ապրիլ 1890

Աւագիոյ - Հունգարիոյ

(Սուրագուրիսն)

[ԿՈՒԲ]

ՔԱՐԱՐԵԼՅ



ԳԼՈՒԽ Ե.

Ա Դ Ե Բ Ս Ա Գ Բ Ե Բ

Թիտուրիւն. — Խնչակն որ խնդրանաց տեսակին մէջ բազմ նուրբ զանազանուրիւններ եւ խորութիւններ կան, նմանաչեն նարկ է ուշադիր ըլլայ նամակագրական ատախնանաւուեալ կամ զանազաննեալ պատճենուրեանց, ձեր բազմանաց բնուրեան, եւ բարձի պատույն համեման եւ յարաբերուրեանց ու կապակցուրեանց ասինանին համեման, որ կամ ձեր եւ այն անձանց մէջ, որոց կը դիմէ՛:

Եթէ օրինակի աղազան ասինանաւոր անձ մը ըլլայ, որմէ ընուի մը կը խնդրէ՛, ձեր ո՞յ պէտք է ոչ միայն պատկառու ըլլայ, այլ նաև նաւասար ողբանօֆ խառնուած : Այսպիսի դէպի մէջ խունկին անուուրիսք գործ չափի աւրէ : Եւ սպակայն անառգ ողողուր մը մի՛ ըլլայ, արհանդանանի եւ նուաստացուցիչ մերժում մը կրնան յուռաց զալ ձեր զծուծ ասիկարուրեան պատճառաւ : Թող ձեր զութեան պատճառարաննեալ եւ նաւասարուրեամբ հօղարկեալ ըլլայ . նավասուրիսք ձեզ պիտի ախտանիշ է զայտնապահ պիտի ախորժի ձեր զութեանք : Զեր խնդրանաց առարկայն ընդհուպ պիտի ժնորհուի եւ

Երբեմն զգուեալ մասպարծուրիւնն է մանաւանդ որ զձեզ պիտի գոհացնէ նաև թէ բարեւսուրիւնը :

Տայց եթէ բարեկամէ մը բան մը խնդրելու դէպին մէջ ըլլայ, գործը բոլորովին աւարե կ'ըլլայ : Անկեծուրիւն, նաւասարուրիւն կատարեալ ոն եւ ոգի մը պէտք է . նա զձեզ կրնայ արհանդաննել, եթէ ձեր նամակին մէջ զինքը ձենէ վեր բարձրացնէ՛ : Կան նաև իրմագիրներ, որ իրենց բնուրեամբ պարզ բարսկավառուրիւն միայն կը պահանջեն . կան նաև ուրիշ կացուրիւններ՝ յորս մասցի գրաւրուրիւն մը երեմն լիուլի յաջորդուրիւն յառաջ պիտի բերէ : Աղաչանն ընդունող մարդը կը մայիս եւ ոնոյ յիմարուրեանց կը ընորհէ ինչ որ գուցէ պիտի զլանար բուն խնդրոյն :

1. Քահանայի ձեռնադրուրիւն խնդրելու
աղերսագիր :

Ամենապատիւ Ա. Հայր

Նախագահ կրօն. Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչ.

Ստորագրեալքս, ամենախսոնարն որդիքք Զեր . . . , զիւզի, համարձակութիւնն կ'առնունք հրաւիրել Զեր բարձր ուշադրութիւնն հետեւեալ տողերու մասին :

Թերեւս ծանօթ է Զեր Սրբազնութեան թէ մեր գիւղի քահանան, այր սրբակրօն և երկիւզած, Հայրն Թաղիկ հերու վախճանեցաւ խոր ծերութեան մէջ : Անկէ ի վեր գիւղացիքս զուրկ ենք կրօնական պաշտամունքէ, վասն զի եկեղեցին փակուած է : Շատ երախայք յաճախ կը մնան անկնունք, հարսանեկան հանդէսներ գաղրած, նոյն իսկ մեռելոց գերեզմաններ երիցու օրհնութեանց չեն արժանացած : Ի՞նչ աղիողորմ վիճակ է պառաւ կիսերու՝ որոնք անհաղորդ կը մնան, և զրդ-

ման արցունք կը թափեն փակեալ եկեղեցւոյն դրան
առջեւ, և կը վախնան զի իրենց գերեզմանն եւս
չօրհնուի :

Իրաց այս վիճակին յաջող ելք մը տալու համար
խորհեցանք գիւղիս ուսուցիչը քահանայութեան կոչել
տալ, և այս պատճառաւ յդել զինքը Պոլիս, որպէս զի
ներկայանալով Պատկ. Կրօնական ժողովոյ ատենին
պարտուղատչած քննութեամբ յայտնէ իր ձեւնհատու-
թիւնն այդ սրբազն պաշտօնին : Կրօնական գիտելիք-
ներու, մայլենի լեզուի մասին ունի հմտութիւն ըստ
բաւականին, որպէս և յերեւան պիտի գայ իր կարո-
ղութիւն սրբագրումար Ատենիդ առջեւ . իսկ վարուց
մասին կրնանք վկայել թէ միշտ սիրող եղած է բարու-
յականի, դիտէ սիրաշահիլ, և ոչ անսաստող է վերին
իշխանութեանց : Իր խոնարհ և հեղ բնաւորութեամբ
երբեք տեղի տուած չէ դժգոհութեան, այլ ընդհակա-
ռաք դաստիարակութեամբ օգտակար եղած է մեր որ-
դիներուն : Իր կեանքն եղած է դպրոցէն եկեղեցի, և
եկեղեցին դպրոց յաձախիլ, և ոչ երբեք գանուած է
անհածոյ վարժանց մէջ : Այսափ ինչ աեղեկութիւն հա-
ղորդելով յիշեալ քահանայցուի մասին կը սիրենք յու-
թեան հետ պիտի ծառայեն արագ տնօրինելու հարկ ե-
քըն, և փակեալ եկեղեցին բանալով մեր պատեհական
հաւատքը պաշտել տալ աւելի եռանդով :

Կալպաչենք, Սրբազն Հայր, Կրօնական ժողովոյ
բազմադիմի խնդրոց կարգին մէջ բարեհածեցէք առաջ-
նութիւն չնորհել գիւղացոյս ինդրոյն և յիշեալ ու-
եկեղեցւոյն վրայ :

[Թագավան] (40 անձանց ստորագրութիւններ)

2. Մեծատունի մը այդի մը զմել առաջարկել :

Աղնուաշուք Տէ՛ր,

Զեր մեծութիւնը շատ լաւ կ'ըմբռնէ կարեւորու-
թիւնն այնպիսի խնդիրներու՝ որոնք իրեն առիթ կ'ըն-
ծայեն նորանոր ապացոյցներ տալ իր բարեգործութեան,
իր աղնիւ սրտին՝ որ խորապէս կ'զգայ բախտէն հալա-
ծուած անձի մը տիսուր կացութիւնն :

Այդ վիճակ կը դասնայ հետզեաէ անհանգուրժելի .
ասոր զոհուեցան ցարդ ամէն նիւթական միջոցներս,
զի չէի կրնար տեսնել ընտանեացս մորմոքը կարօտու-
թեան վիճակի մէջ . սրտիս վէրքը կ'արիւնէր, բայց ես
պա՛րտ էի զուարթ երեւնալ, կուուիլ անողոք ճակա-
տագրին դէմ . բո՛ւոն և կատարեա՛լ պայքար, որ կո-
րովս յաճախ կը ջլատէր և կ'ընկճէր զիս :

Բայց բարի է Աստուած, չեն ոչնչացած ամէն յոյսեր.
Կենացս այս ալեկոծութենէն աղատելու համար դեռ
կը մնայ ինձ միջոց մը, վասն զի ունիմ այգի մը՝ զոր
վաճառելով կրնամ ընտանեացս ժամանակ մը ևս օրա-
պահին հայթայթել :

Այդին, զոր հօրմէս ժառանգած եմ, Գարթալի մէջ
նշանաւոր է իր հազարաւոր որթերով . որթալուին հնոն
չէ ըրած մինչեւ հիմա իր աւերիչ արշաւներն . ունի իր
մէջ քարաշէն տնակ մը, որուն խոհանոցին մէջ կայ
անուշ ջրոյ աղբերակ մը : Հայրս ինձ ըսած է թէ մեր
այգին հողը շատ յարմար է բուսաբերութեան, և ինչ-
պէս փորձն ցցուցած է, արդիւնաւէտ եղած է այն ու-
րիշ մերձակայ այգիներէն աւելի : Նա երբեք անխնամ

չէ մնացած, այլ ընդհակառակն վայելած է ամէն արթուր խնամիքնեղ:

Արդ, Աղն. Տէ՛ր, կ'աղաչեմ որ Զեր բնաձիր մարդասիրութեամբ գնէք զայն՝ որուն դումարը դրամագլուխ ընելով պիտի ձևոնարկեմ իմ անհատական գործիս: Թէկ ժամանակաւ մինչև 1000 Օսմ. ոսկի գինը առաջարկեցին, սակայն այժմ այս գումարին վրայ կարեւոր գեղի մ'ընելով՝ կառեն է ։

Զեր Ազնուութեան արժանի կը տեսնեմ զայն . այլ
եւս պէտք չունիմ ես անոր , բաւական գուարթացուց
զմեղ անոր գինին մեր ուրախութեան ժամերուն . արդ
արժան է որ զջեղ ուրախացնէ ընդմիշտ խրախսաններով ,
ինչպէս որ անոր արժեգինն ես դիս , ատ ափախ
երջանկացնէ :

Կը հաւատամ թէ Դուք գնելով զայն՝ միենոյն ժամանակ - աղնոտօրէն և մարդասիրական ողբով ձեռնց պիտի կարկանէք յարուցանելու զիս այն տարտամ և անորոշ վիճակէն՝ որ կը տանջէ զիս և որ կը ստիպէ զիս միշտ նոր նոր պարտքեր ընել աջ ու ձախ։
Ժամին՝
Ժամին՝

ԹԱՐԱՎԵՐ

Եմ նուաստ ծառաւ, զեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՇՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱԿԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱԿԱՐԱԿԱՆ

U. Querhurfe Zor uηηηνιαδ :

Բարձրացնորհ Սրբազն Տէ՛ր ,

Նախ. Խնամակալութեան. Արմաչու Դպրեվանուց.

Մեր գիւղի վարժարանին շրջանը գեռ նոր աւարտած՝ կը դիմեմ յոսս Ձեր Սրբազնութեան և կը խընդիմ զի ընդունիք և զիս Գալքելվանուց աչակերտութեան, որ երկար ժամանակէ ի վեր դրաւած է ուչս, և ուր կը գտնիմ աիբանուէր ձկաւումներուա ճարակ :

Սրբազն Տէ՛ր, մի՛ զարմանաք եթէ կանուխէն
կուզեմ մտնել կուսակրօն եկեղեցականութեան ուխտին
մէջ . հոգւովս համոզուած եմ թէ ծանր չէ այն լուծ,
զոր մեր Երկնաւոր Վարդապետը կը դնէ իր սպասար-
կուաց վրայ, և ո՞չ ապաքէն ինքն եւս ըստ . « Զի
լուծ իմ քաղցր է, և բեռն իմ՝ փոքրոգի » : Կենացա-
նկատմամբ տեղեկութիւններ կարող է տալ մեր գիւղի
քահանան . նա զիս կը ճանաչէ ամէն կերպով . եթէ
նա եւս ոգատշաճ դատէ ինձ իմ այս որոշում, թող բա-
րեհածի յայտնել . չեմ ուզեր Տիրոջը մեղանին անարժան
ծառան ըլլալ : Իսկ ինչ որ կարելի է ինձ գրել իմ ներ-
քին մադոյն համար, կը յայտնեմ թէ գիտեմ պատկառ
կալ օրէնաց, հնագանդիլ իշխանութեան և եկեղեցւոց
առնեն որբազն սպահանջներուն :

Վատահութեամբ կը յայսնեմ թէ Դպրելանոց աշա-
կերուութեանս ամբողջ ընթացքին մէջ պիտի ունենամ
զգացնի կեանք, բարեհամբոյր վարք, պիտի հանդի-
պահան

սանամ աշխատասէր, ուսեալ, որպէս զի իմ ապագայ
վիճակին համար մասուցուի աներկբայելի երաշխիք :

Տիրաւանդ օրհնութեանցդ կարօս

[Թուական]

ամենափոնարհ որդի

* * *

4. Վաշխառուի մը գրել որպէս զի մնացորդ պարտին
այլ եւս տոկոս չառնե :

Մեծապատիւ Տէ՛ր,

Քաջ գիտէ Զեր Մեծապատութիւնը թէ այսչափ
սարիներէ ի վեր անընդհատաբար վճարած եմ Զեզ
պարտքերս իրենց տոկոսներով մէկաել : Ճշգալահու-
րուս միակ արժանիքը, և այսքան տարիներէ ի վեր
պանդխառութեանս գլխաւոր մտածումն եղած է գրամ
վճարել, որպէս զի ընտանիքս հանգիստ ապրի, ծերու-
այս վերջին շրջանին մէջ, այլ միշտ օրհնէ զիս և նո-
րակալմ ընտանիքս :

Եւ ինչպէս որ ես կրցածիս չափ գոհ լրած եմ Զեզ,
րիմ ընթացքով ուրախացուցած էք զիս : Երբեք չէք
ները քանդելու կը հետամտին, որբին և աղքատին ա-
րինը կը քամեն, և անիծից նշաւակ կեանք կ'անցունեն:

Տէ՛ր, նպատակ չունիմ Զեր անձնական արժանեաց
ներբողներ հիւսել, այլ միայն արդարութեան պարագ-
մէ այս զոր կ'ուզեմ ներկայիւս հասուցանել Զեզ :
Պանդխառին ալ միսիթարութիւնն այն է, երբ գիտնա-
թէ իր գրամն յափշտակութեան չպիտի մատնուի :

Արդ, Մեծ. Տէ՛ր, վասահ Զեր ծանուցեալ մարդա-
սիրութեան վրայ՝ կը յայտնեմ թէ իմ մէկ քանի ամսէ
ի վեր անգործ մնալով բոլոր հասոյթներս ցամքեցան
առօրեայ պիտոյից համար իսկ կարօս մնացի, և ահա
այս ինչ յաջողեցայ իմ նախնկին գործս չարունակել :
Ասկէ յայտնի է թէ չպիտի կրնամ ըստ առաջնոյն շա-
րունակել վճարումներս, ուստի կը ինսդրեմ որ մնացորդ
պարտքիս համար որոշեալ առկուն կարեւոր գեղչ մը-
քնել բարեհաճիք, որպէս զի միանդամ ընդ միշտ կար-
գալըրուի պարտքս, և ես հանգիստ սրտով պարապիս
գործերուս, որովհետեւ ինձ համար պարտքի մտածումն
ամենին ծանր է և խուսվիչ :

Կը յուսամ թէ այս մասին անմիջական կարգադրու-
թիւն մ'ընել կը յօժարիք Դուռք՝ որ պանդխան ցաւերը
կը նախազգաք, և անոր ցաւած սրտին կը նայիք կա-
րեկից աչքերով :

Ակնդէտ նամակիս պատասխանին՝ Եմ

Խոնարհ ծառայ (*)

[Թուական]

* * *

(*) Հպարտութեան նշան է փոխանակ խոնարհ ծառայ ամբողջա-
պէս զրելու միայն Խ. Ծ. գրել :

5. Կին մը իր ամուսնոյն օսար երկրի մէջ պատկռած
ըստար բնեղով կ'աղաք Ա. Պատրիարք Հօր որ
պէտք եղած պատիմը տայ :

Ամենապատիւ Սրբազն Հայր,

Ո՞վ է նա՝ որուն կարենամ դիմել այս տառապագին
կացութեանս մէջ, ո՞վ է այն՝ որ դիմայ կնոջ մը վի-
ճակն, որ ախուր է, ապերջանիկ՝ իր որդիներով :

Զեր Բարձր Սրբազնութեան, կը դիմեմ, ո՞ւ ազգա-
խնամ Հայր, յուսալից թէ հաճութեամբ ունկն պիտի
դնէք իմ ազերսին և բանաւոր անօրինութեամբ ուրա-
խացնէք զիս :

Սարբագրեալս Զեր նուաստ ազախինն ասկէ իրդ
եօթը տարիներ առաջ ամուսնացայ Պ. Վրդանէս Սրբա-
տարիներ կենակցելով՝ Աստուծով ունեցայ երեք որդի-
ներ. ամուսինս դժգո՞ն կ'երեւէր իր արհեստէն, և իր
ազատի այս վիճակէն. ես խոլզսանն կը քաջալերէի
և ի հարկին աշխատութեամբ կը դիմացնէի իր գործն,
որ էր ընտանեաց ապրուստն : Բայց նա չէր ուղեր տա-
թալ իր ընտանեաց բարեկեցութիւնը աշխարհ եր-
պատակաւ : Ի սկզբան հաւատացի իր խօսքերուն ան-
դնէ. բայց մեծ եղաւ զարմանքս, երբ տեռայ թէ ոչ
կարօտութեան վրա, և զարեկցի : Ըստերկար աղերաեւ-

ցի, առանձինն և անօդնական մնալով արտասուելով
անցուցի ժամանակս սիրուն փոքրիկներովմ՝ որոնց ա-
մէն հոգ կը ծանրանար վրաս: Հեռացաւ գնաց, ոչ մէկ
միջոցաւ կարելի եղաւ դարձունել զանի իրեններուն
քով : Սատուած իմ, ամուսնանալ, ուխտել ի միասին
կրել կեանքի ամէն պատահարներ, և մի օր բաժնուիլ
չարաչար դրժելով այն ուխտին՝ որ աստուածային է,
վասագոյն չէ այդ անձ. դասալիքի ամօթն ու նախա-
տինք չունին նա իրաւամբ իրեն բաժին :

Սրբազն հայր, խարեւաններ և դրուժաններ օրէնքի
խստութեան ենթարկել Զեր վսիմ գործն է, մանաւանդ
այնալիսի մէկ խարեւայ՝ որ իր կնոջմէ և որդիներէ
բաժնուելով օտար երկրի մէջ ամուսնական նոր տուն
կը հաստատէ, նոր տուն կը կազմէ, անձը ամուրի հա-
ւասացնելով և խարելով տեղական իշխանութիւններն :

Եթէ յախտենական է ամուսնական կապն, ուրեմն
ինչ յանդգնութեամբ կը համարձակի խղել զայն, և նոր
թշուառութեան մասնել իր օրինաւոր ընտանիքն :

Անհնարին է ինձ նկարագրել թէ ինչ սրտառուչ ա-
զալակներով կը գուեն որդիքս. « Հայր, հայր » : Ար-
դասուելով կ'ըսեմ անոնց . « Զաւակներ՛ո », ձեր հայրը
մեռած է . այսուհետեւ, ինչպէս յառաջ, ձեր հայրն եր-
կինքն է . անոր պազատեցէք » :

Նախատալից մահ :

Կ'աղաջեմ, Սրբազն Հայր, Դուք պաշտպան իր
յոյսերուն և փափաքներուն մէջ խարուած կնոջս, Դուք
ինամակալ անմեղ որդերու, Զեր հոգօր ազգեցութիւնն
ի գործ դնելով հաճեցէք պատմել այս նոյնօրինակ խա-
րեւան, սախովելով եկամուտ մը կապել իր զրկեալ ըն-
բերան, սախովելով եկամուտ մը կապել իր զրկեալ ըն-
բերան, և խանգարելով այն առւն՝ որ անիրաւութեան
վրայ կը հաստատուի :

Ասոնք են աղերասանք թշուառ կնոջ մը և անոնեղ
որբերու :

Եմ Զերդ

Բարձր Սրբազնութեան
Նուասսա աղախին

[Թուական]

ԸՆԴԱՅՆԵԼԻ ՆԻՒԹԵՐ

1. Նպաս Խօնորել. — Մէկն որ երբեմ մեծատան մը քով պատասոր եղած է, յետոյ առևտրական սասպարէզի մէջ մտնելով մեծ վասաներ կրած է, արդ կը զրէ նամակ նոյն մեծատան՝ որպէս զի իրեն ձեռնատութիւն ընէ :

2. Հօր մը նամակին գործարանափրոջ մը. — Այս հայրն որդի մը ունի, որ դեռ նոր շրջանաւարտ եղած է, այժմ սոյն աղերացով կը խնդրէ գործարանատէրէ մը՝ որ ընդունի իր որդին գործեւուն:

3. Երիտասարդի մը նամակին. — Երկաթուղիի վարչութեան մէջ մտնելով համար ազգեցիկ անձի մը միջնորդութիւնը կը խնդրէ ան-

4. Երում հայցել. — Կրթական պաշտօնեայ մը թերութիւն գործած է, և ասոր համար պաշտօնանկ եղած է: Արդ զդշալով իր յանհանքին՝ կը խնդրէ որ վերանաստառուի իր նախակին պաշտօնին մէջ :



ԳԼՈՒԽ Զ.

Վ. Կ. Ա. Յ. Ա. Գ. Բ. Ե. Պ

Վկայագիր ուսման :

Պ. Առզումոն Շմաւոնեան իւր աշակերտառութեան հընդունակայ շրջանին մէջ՝ (1888—1893) իր բարի վարքով և ջանասիրութեամբ գոհացուցած է մեզ: Ո՞չ երբեք իր պարտականութեանց մէջ թերացած է, այլ իր համբոյք ընաւորութեամբ և ուսմանց յառաջդիմութեամբ առաջնական մրցանակներ շահած է: Գիտէ ըստ բաւականին լեզուներ Հայերէն, Թուրքերէն, Ֆուանսերէն, գիտութեանց նախատարերքն, թուաբանութիւնն, գիր եւ գծագրութիւն :

Կը յանձնենք յիշեալին՝ այս վկայագիր՝ լաւ ապագայ մաղթելով իրեն :

Տեսուց

[Թուական]

Վկայագիր ուսանողի :

Պարոն Գրիգոր Մելիտոսուեան իբր երեք տարիներ (1890—93) աշակերտակով ինձ Պէտքովի թաղային վարժարանին մէջ, մայրենի լեզուին մէջ զարգացաւ ըստ բաւականին, մինչեւ քաջ խելամուս լինել ընտիր ըն-

տիր գրուածոց իմաստին և շարադրել յաջողապէս զառազան նիւթոց վրայ,

իր աչակերտութեան ամբողջ ընթացքին մէջ փայլեցաւ համեստ վարքով եւ ջանասիրութեամբ : իր աշխատասէր ողին իր բարի վարուց օրինակին հետ սլատի ըլլայ ինձ համար յաւէտ քաղցր միշտակ :

կը հաւատամ թէ կենաց որ եւ է վիճակի մէջ եւս սլատի պահէ իր ձիրքերն և պիտի հանդիսանայ կարեւոր անդամ տոնմին եւ ընտանեաց : Այս ջերմ փայտաքով կը յանձնեմ Պ. Գ. Մելիքոսեանի՝ սոյն վկայագիր:

[Թուական]

Ուսուցիչ

Վկայագիր ծննդեան :

Դանիէլ Յովհաննէսեան, որդի ժամագործ Յովհաննէս աղայի եւ Խոկուհի տիկնոջ, ծնած է 1869 Փետր. 2 ին եւ մկրտուած է նոյն ամսոյ 14 ին, Ռումելի Հինարի Ս. Սանդուխտ եկեղեցւոյն մէջ կնքահայրութեամբ անորս Առաքել աղայի : Մկրտիչ քահանայն է Տ. Թագէոս քահանայ նոյն եկեղեցւոյ :

Աւագերեց

Բարս. Թաղ. Խորհրդոյ

* * *

* * *

Վկայագիր պաշտոնէի :

Պարոն Մտեփան Կոստանեան, ուսուցիչ Մաթէմատիքայի, իր երեք տարի վարժարանիս մէջ պաշտօթեամբ դո՞ս ըրած է մեզ: Ցաւ է մեզ, որ կը զրկուինք

այսպիսի յաջող պաշտօնէի մը գործակցութենէն, նիւթական անձկութեան պատճառաւ: Իբրեւ հայր կամ իբր երէց եղբայր կը վարուէր աչակերտներուն հետ: Հմտալից գասախօսութեանցն յաճախ ներկայ ըլլալով, տեսած եմ թէ իր պաշտօնին խորին գիտակցութեննոնի և երբեք ժամավաճառ չըլլար սնոտի չաղփաղ գութեամբ:

Տեսչութիւնու կը յուսայ թէ Պ. Մտեփան սուզ ժամանակէն պիտի կոչուի գարձեալ ի պաշտօն մեր վարժարանին մէջ եւ ըստ առաջնոյն շարունակէ իր օգտագոր դասախրօսութիւններն :

[Թուական]

Տեսուչ

Վկայագիր ծառայութեան :

Պ. Կարապետ Ոսկանեան օ տարիներ ծառայելով վաճառատանս մէջ իբրեւ գործակատար, գո՞ս ըրած է զիս իր վարժ և գործունեայ ընթացքով . հաշուոյ եւ դրամական խնդիրներու մէջ հաւատարիմ եւ անխարդախ վարժունքով արատ մը չէ բերած երբեք իր հընդամեայ ծառայութեան : Այժմ փոքրիկ դրամագլուխ մը գոյցացուցած է եւ կ'ուզէ ինքնագլուխ գործել: Ուշախութեամբ կը հաւանիմ անոր եւ կ'ուզեմ տեղեկացնել առեւտրական հրապարակին թէ իմ, իր նախկին տիրոջ համարման եւ մեծարանաց արժանացած է ըստ առնեայնի, եւ կարող է հետզետէ համիլ այն բարձրութեան՝ որուն արժանի են ամէն գործունեայ անձինք:

Պ. Կ. Ոսկանեանի ամէն յաջողութիւն մաղթելով անոր յառաջդիմութեան եւս վաստահ եմ:

[Թուական]

→⇒(3)⇒←

ԳԼՈՒԽ Է.

ԸՆՏԱՐԵԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՅ

ԶՈՐՍ ՆԱՄԱԿԻՆԵՐ

Նամակ Ա.

Սիրելի դիմ Գեղանոյշ,

Կը փափաքիմ տեսնել զքեզ քու տանդ մէջ հաստածած եւ երջանիկ. որբ մ' էլիր, զքեզ խնամել յի լոյս սփռեցի այն սրախն մէջ, ուր սեւ գիշեր կը տի էր բայց կ' զգամ որ իմ խանդարեալ առողջութիւնս տակաւ կը խլէ ինչ այն յոյն թէ օր մը քու երջան թիւնդ տեսնեմ: Ուստի չեմ ուզեր զրկել զքեզ այ տեղեկութիւններէն, զորս փորձառութեամբ ստացած եմ, եւ կը կարծեմ թէ քեզ օգտակար կ' ըլլան անոնք, քեզ՝ որ չունիս ո'չ հայր, եւ ո'չ մայր: Զանացի աննաց վիշտը չզգացնել քեզ, սիրուն որբուհիս, եւ ուրաքանչեամբ տեսայ թէ պարկեշտ, հրապուրիչ աղջի մը կ' ըլլաս: Ծնորհակալ եմ, որ իմ խնամքիս կը հաւապատասնես. պարտքս էր, զոր կատարեցի եւ սշարտ էի զայն կիսկատար չժողուլ: Խօսինք այժմ ի միասին ապագայիդ նկատմամբ:

Գիտեմ թէ օր մը ամուսնանալու օրինաւոր փափաքն ունիս, որպէս զի ունենաս պաշտպան մը, հաւատա-

րիմ բարեկամ մը, եւ կազմես ընտանիք մը: Կը հաւանիմ այդ խորհուրդիդ, եւ չեմ տարակուսիր թէ քուաղնիւ ձիրքերուլդ եւ փոքր ի շատէ ունեցածովդ պիակ կարողանսաս լաւ ամուսնան մը ունենալ:

Լաւ ընտրէ՛ ամուսինդ, սիրելի՛ աղջիկս, որովհետեւ այն է բոլոր կեանքիդ ընկեր: Մի՛ խարուիր ոչ արտաքին երեւոյթէ, ո'չ հարաստութեան ակնկալութիւններէ, և ո'չ այնպիսի կացութիւնէ մը՝ որ քուկինէդ վեր ըլլայ: Ասոնք երջանկութեան երաշխիք չեն:

Քու ամուսինդ պիտք է ըլլայ երիտասարդ մը աղուուսուն, առողջ, բարեմոյն, մտացի և իր արհեստին մէջ կարող: Եթէ ասանց վրայ աւելցնէ բարուզ նկարագրի մը, սիրուն դէմքի մը առաւելութիւններն, զուն պիսի գանես գրեթէ կատարեալ ամուսնին մը: Դանիւսան այդ կատարելութիւնը չիկայ աշխարհի մէջ, պիչաք չէ մտքէ անցունել թէ պիտի գտնես ամուսնոյդ անցնին վրայ վիպական գիւցազ մը: Դուն քու թերութիւններդ ունիս, անշուշանա ալ իրենները պիտի ուշանայ: Ուստի Զեր բախար ուրիշի բախարին մի ացըննելէ անաշ ջանացէք ի նկատ առնուլ թէ իրարու համար անելծուած էք:

Ստուգիւ դժուար է այս, որովհետեւ նշանուելու պիտին երկու կողմն ալ իր փոքր թերութիւնները կը ծածէ՛. բայց կան թերութիւններ, որք երկու կողմէն անենա թուլ չըլլան: Դուն փափկութեամբ մեծցած ես, եթէ վայրենամիտ և կոշտ ամուսին մը ունենաս, պիտի տառնապիս, գուն անկեղծ և ուզգամիտ ես, եթէ ունենաս խարեբայ և նենգաւոր ամուսին մը, պիտի ստոկառ դուն բարի ես և անձնուէր, եթէ ունենաս եսասէր և աղան ամուսին մը, թշուառ պիտի ըլլաս: Դուն երկիւ դած ես բայց ոչ սնապաշտ, եթէ ամուսինդ քու կրօ-

նասիրութեանդ հակառակի , քեզ բանաւոր մը պիտի երեւի : — Այսպէս լաւ քննէ՛ ընտրութիւնն , որչափ կրնաս , քու անձիդ և խոհական ու իմաստուն մարդոց միջոցաւ . զգուշացի՛ր շատախօս անձերէ , և այն ատեն որոշում տուր , երբ սիրտդ , միտքդ և բանականութիւնդ գո՞ն զգաս :

Երբ ամուսնանաս , ալ զզումն անօգուտ է , պէտք է ամսուլ ամուսինն այնպէս , ինչպէս որ է , եթէ կարելի է լաւացնել զայն գորովանոք , հաճոյակատարութեամբ , բոլորովին անձնութիրութեամբ . եթէ չյաջողիս , պէտք է բախտիդ հպատակիս և մինչեւ վերջը կատարես քու պարտքդ ամէն պարագայի մէջ եւս : — Ես չպիտի խօսիմ քեզ հաւատարմութեան պարտուց վրայ . քեզ նման ամբիծ և պարկեշտ աղջիկ մը հաւատարիմ կին մը պիտի հանդիսանայ , և չեմ վախնար թէ դու կ'իյնաս գահալէժ այն մոլորութեանց մէջ՝ որոնցմէ ընտարաներ կը կործանին . միմիայն միշտ զգուշացի՛ր այն ամուսներ՝ որոնցմոլ ամուսնոյդ նախանձը կը շարժի : Կան գիւրաւ . կը զայրանան : Բարի և խելացի կին մը կը յարգէ այս փոքր տկարութիւնն և նախազգուշութիւններ ձեռք կ'աւանու տեղի չտալու , մանաւանդ ամուսնութեան առաջին տարիներուն մէջ : Այդ մասին ամուսնիքի խաղաղութիւնը պահպանելու լաւագոյն միրաններ մի՛ պարզեր : Եթէ անոնք անիրաւ են , կը կորեթէ անոնք արդար են , բանի մը դարման չեն ըլլար . ընդհակառակին . երկինք պարզեւած է քեզ թանկագին պարգև մը , այն է քաղցր բնաւորութիւն : Պահէ՛ զայն

մեծ խնամով , սիրելի՛ դուստր իմ , մի՛ զայրագնիր . մի՛ վշտանար ընտանիքի մօր կեանքի մեծ և փոքր թշուառութիւններով : Արիութեամբ ժուժկալէ՛ հիւանդութեանց : Միշտ ամուսինդ ընդունէ՛ այն քաղցր ժայտով : որ զքեզ սիրելի կ'ընէ այնքան : Մի՛ ձանձրացներ զայն կենաց նեղութիւններուն վրայ տրանջալով : Անոր համար բաւ են իր աշխատութիւններն և իր յոգնութիւններ : Եղի՛ր , որչափ կարելի է , անոր առջեւ վայելուչ , խնամոս և ակնահաճոյ : Զըլլայ որ կրես աղտոտ ըլլազգգեստ , ունենաս գէշ սանտրուած մազեր , կրոնկը ծուած կօշիկներ , անյարմար բանկոնակներ :

Ամուսին մը , կ'ըսէր մեծ մայրս , պէտք է միշտ կարենայ բաղդատել իր կինը իր ճանցած ուրիշ կիներուն հետ առանց անոնց վրայ առաւելութիւն գտնելու : Թողքու տունդ և գուն և յետոյ քու զաւակներդ ըլլան միշտ ամուսնոյդ համար ամեննէն աւելի սիրելի արարածներ , որոնց յիշատակն իրեն հետ ունենայ իր աշխատութիւնը քաղցրացնելու համար և որոնք երջանկութիւն պատճառեն իրեն , երբ երեկոյին տուն դառնայ : Զանա՛ գրաւել իր վատահութիւնը յարաւե քաղցրութեամբ և հսազանդութեամբ , և մանաւանդ միշտ ողջ ջամփտ և յաճախ լուրջ երեւցիր : Երբ տեսնէ թէ քենէ ապահով բարեկամ մը չկրնար ունենալ , կամաց կամաց պիտի վարժուի քեզ խորհրդակցիլ թէ ո՞ր միջոց ձեռք առնուլ լաւագոյն է :

Ասկէ օգուտ պիտի քաղես զանի հանդարտեցնելու համար՝ եթէ բարկացած ըլլայ , խթան մը ըլլալու՝ եթէ անփոյթ է , հաշտեցնելու՝ եթէ խոռված է իր աղգականաց և բարեկամաց հետ : Վերջապէս բարեւոյ համար գործածէ՛ այն աղդեցութիւնն , զոր քու արժանիքովդ պիտի շահիս :

Դուն քու օրական զբաղումներէց դուրս բան մը մի՞՛ ըներ առանց անոր հաւանութիւնն առնելու, և նոյն խակ անոր հետ ի միասին կարգադրէ՛ տան ներքին գործերը, կարասիներու կամ հագուստներու գնումները. Այս փոքր բաներն ամուսինն իր կնոջ և տան հետ կը կապէն :

Երբեք մի՛ խոռվիր անոր հետ, նոյն խակ իրաւացի պատճանաներով : Եթէ դուն բաւական ապահով ես իրաւունք ունենալուդ վրայ, յայտնէ՛ ամենայն պազարեամբ, ինչ որ պիտի ըսես, և թող որ ամուսինդ հանդարասի պիտելէն առաջ : Եռանդուն ես, և գիտեմ թէ այդ բան քեզ դժուար պիտի ըլլայ. բայց տնական խաղաղութեան պահպանման համար, ոչ թէ այս փոքր դոհողութիւնն, այլ աւելի մեծերն ընել կ'արժէ: Հա՞յէ է միթէ ըսել քեզ թէ պէտք է որ համբերութեամբ եղորդանոք խնամես զանի իր հիւանդութեանց տաեն, սկսիես զանի և օգնես անոր իր վշաերուն մէջ : Վերշապէս անոր հետ ի միասին ուրախանաս և արտմիս :

Մանաւանդ անոր նկատմամբ ծածկամիտ և սատիօտ մի՛ ըլլար : Այս անմտութիւններ կը վերցնեն վստահութիւն և բարեկամութիւն՝ որոնք պարտին ալիրել ամուսնոյ և կնոջ մէջ : Լաւ է որ խոսարվանիս անկեզծօրէն և թէ մեծ կամ փոքր անյաջողութիւն մը գործած ես, հոգ որ ծանր խօսքեր լսես, քան թէ այնպէս երեւնասւ Մի՛ տրանջար անոր նկատմամբ բարեկամուհիներուդ և դրացուհիներուդ հետ, նոյն խակ եթէ իրաւացի ըլլան տրատունջներդ : Այս կիներն՝ որ ամէն մարդու կը պատրի, արժանաւորութեան, և մեծարանաց մէջ, դորս եթէ ամուսինդ աղջականներ ունի, չանա՛ անանց

աիրոյն արժանանալ : Անոր ծնողաց նկատմամբ ակնածութիւն և յարգանք ցցուր, բարեկամութիւն և եղաքայրական սէր անոր եղբայրներուն և քոյցերուն նըշկատմամբ :

Վերշապէս անձնուէր ըլլալ, հնազանդիլ, սիրել եւ մոռնալ անձը . ասոնք պէտք է ըլլան ամուսնացեալ կնոջ մը դերը անոր նկատմամբ, զոր աստուածային և մարդկային օրէնքներ իրեն տէր պարգևած են : Երկրորդ նամակի մը մէջ պիտի խօսիմ քեզ որդւոցդ համար ունեցած պարտքերուդ մասին :

Լաւ խնամել իր փոյք տղան, սնուցանել զանի, մայուր պահել . ահա բարի մօր մը եռանդեամբ կատարելու աշխատուրիւնը :

Բ. Նամակ :

Տղայք կ'ըլլան յաճախ այնպէս, ինչպէս կը պատրաստեն գանոնք իրենց ծնողք : Մտածէ՛ անգամ մը, սիրելի՛ իմ Գեղանոյշ, թէ ի՞նչ պատասխանատուութիւն ունին հայր և մայր : Ոչ թէ միայն զաւակաց մարմինն է, զոր պէտք է դարգացնեն և չարէն պահանեն, այլ մանաւանդ անոնց հոգին, անոնց միտքն, անոնց բարոյականն ուշադրութեան պէտք է առնուն :

Հայր մը իր խղճով, և նոյն խակ օրէնքով պարտի տալ իր տղուն ապաստան, մնունդ և հագուստ . ոչ նուազ պարտի կրթել և կազմաւորել հոգին և սիրան այս փոքրիկ արարածին՝ որուն կեանք նուիրած է:

Մայրը նոյն պարտքերն ունի . անոնց վրայ կ'աւելունան մայրութեան պարտքերն ալ : Լաւ խնամել իր փոքրիկ տղան, մնուցանել զանի, մաքուր պահել, հսկել անոր վրայ, որպէս զի զանի զերծ պահէ հիւանդութենէ, երբ բոլորովին մատաղ է . ասոնք են այն պարտքերը՝ զորս ամէն բարի մայրեր դիւրաւ կը կատարեն հակառակ իրենց կրած յոգնութիւններուն : Բայց բոլորն այս չէ : Հայրը դուրսն է շատ անգամ իր աշխատութեան, իր արհեստին պատճառաւ . չունի ժամանակ և ոչ համբերութիւն իր զաւակաց դաստիարակութիւնը ուղղելու : Ուրեմն մօրը կը վերաբերի այս գործին մեծագոյն մասը : Նա կարող է կանուխէն ասոր ձեռնարկել, վասն զի կարելի է տղայ մը վարժեցնել անոր առաջին տարին իր ծնողութեանը :

ինամով հակելու և անոր հնազանդելու :
վրայ՝ որ աշխարհք կը մտնեն և քեզ յանձնուած են գանել . դուն պիտի սորվեցնես անոնց բարին չարէն գանա-
կիւղ, բարութիւն, հնազանդութիւն, կամարարութիւն, և ամէն խարդախութեան դէմ : Եւ յետոյ դուն ես որ
առ ծնողս, առ նմանիս, նոյն իսկ առ ինքեանս ունե-
ցած պարտքերը : Քու մեծ պարտքդ է չարին անոնց
մօտենալն արգիկել կարելի եղածին չափ և ջանալ որ
անոնք կարենան դիմադրել չարիքին . աւելի մեծնալով
այլ եւս քու հսկողութեանդ տակ չըլլան : Ուրեմն աշ-
խատէ՛ հեռի պահել զանոնք չար օրինակներէ, յոսի
բարեկամներէ, գէշ խորհուրդներէ, վատթար ընթեր-
ցումներէ, անպիտան խօսքերէ, և որովհետև չես կը ո-
նար յուսալ թէ անոնք պիտի վարեն կեանք առանց

այդ բաներուն հանդիպելու , դարձացո՛ւր անոնց մէջ բարոյական քաջութիւնն , ուղղամտութեան և ընտառեկան պատուոյ զգացումը : Շահէ' անոնց վստահութիւնը ներողամիտ բարութեամբ , այլ մի՛ մունար թէ հօր և մօր պարտական հասպանդութիւն և յարգանք ընտանիքի խարիսխն են : Բարութիւն և հաստատամտութիւն անհաշտ չեն բնաւ մէկմէկու հետ : Այս երկուքին միացումը կարեւոր է տան կառավարութեան մէջ : Կան ծնողքներ այնքան դաժան և խստապահանջ , որ կը յուսահատեցնեն իրենց որդիքը . ասոնք եւս կը փախչին հայրենի տունէն , ստահակներ կ'ըլլան : Ես սպէս շփացած , անխնամ տղայք , որոնք բոլորովին իրենց կիրքերուն և նանբասիրութեան թողուած են , ուր ուրեմն կ'ամալատուեն իրենց ընտանիքը , նոյն իսկ իրենց անձեւքը

Եւս սակայն թերութեանց երեք չորրորդ մասը, ուրոնք հօր և մօր մեծ վիշտ են, անոնց ակարամառաթենէն առաջ կուգան։ Տղայ մը՝ որ լաւ սկզբնաւրութիւն կ'ունենայ և հակողութիւն կ'ըլլայ անոր, լաւ ձամբու մէջ դրուած կառափառումքի կը նմանի։ Նա ուղղակի կ'երթայ, և կը հետեւի իրեն տրուած մզման։ Անչուշա պէտք է հաշուի առնուլ բնական թերութիւնները, բայց երբ մայր մը խելացի է, անվեհեր, ամէնքան իր որդւոց բարութեան կ'ուղղէ։ կը մարակէ դանդաղը, քիչ մը կը սանձէ աշխոյժը, զբաղում կուտաց դործոն բնաւորութեանց, մեղկ բնաւորութիւններն աշխատութեան կը գրգռէ, կը հետամտի լաւագոյնը գանելու, և երբ գտնէ, զայն կը գործադրէ։

Մատաղ հասակի մէջ կան թերութիւններ, որք զարդուն հասակին կերպով մը ինքնին կ'ուղղուին : Ասոնց կարգէն են անհանդարտութիւն, բարկութիւն, հետաքրքրութիւն, որլրամութիւն, անհսազանդութիւն :

գժկամակութիւն : Եսաղամոլութիւն , և արբեցութիւն պէտք է խստիւ արդիլուին : Լաւ է շատ կանուխէն տղայոց սռնկում ազդել այս երկու աղետալի կրքերու մասին :

Ահաւոր թերութիւն մը , որուն ներել անհնար է , սաւութիւնն է : Ճշմարտութիւնը որբազան բան մ'է , պէտք չ' նոյն իսկ դոյզն բանի համար զայն այլայլել : Տղոցդ մի փոքր ստախօսութեան անդամ մի՛ հանդուրս մեր , նոյն իսկ եթէ իբր կատակ զրուցուած ըլլայ : Առնոց արհամարհանք ներշնչէ՝ ստութեան համար , մի՛ թողուր որ իրարու նկատմամբ ստախօս ըլլան . երբ այդպէս բան մը պատահի , յանդիմանէ՛ զանոնք , առնոց ըսելով թէ մեծ յանցանք մ'է : Եթէ անոնք գործած են որ և է անյաջողութիւն մը , մեծ կամ փոքր միալ մը , և գան քեզ անկեղծօրէն խոստովանիլ , մի՛ յանդիմաններ զանոնք : Այս կերպով անկեղծութեան կը վարժուին անոնք : Գաւաթէ մը կոտրել կամ դանակ մը կորանցնել մեծ վնաս մը չէ , մինչդեռ ստելն մեծագոյն չարիքն է : Ըսդհակառակն երբ կը տեսնես որ անոնք կը ստեն , պատժէ՛ զանոնք անմիջապէս եւ խստութեամբ :

Նոյնպէս խիստ եղի՛ր այն փոքր գողօններուն համար՝ որոնց կը վարժին երբեմն տղայք իրենց դպրոցակը գողնան իրենց քովիններէն , կամ խնձոր , կեռաս , ուի . է՞ս , ասոնք անսառակութիւններ են , մեծ բաներ վիափուկ դդացումներն , և գնտակներ գողցող տղան նալի մէջ խարել , փոխ առնուած բաները չցանձնել . ասոնք անպարկեցառութիւններ են : Եթէ կ'ուզես որ քու

աղայքդ խղճի մտօք պարկեցա ըլլան , մի՛ թողուր որ ինան այս փոքր թերութեանց մէջ :

Մի՛ քաջալկերեր երբեք յոռի կատակները , այն գէշ խաղերն՝ որոնք կ'ընեն միմեանց , չար խօսքեր , նենագամութիւններ : Այն ընտանիքներն՝ որոնք այս սովորութիւններն ունին , կ'արհամարհուին իրենց բոլոր դրացիններէն : Նոքա չունին ոչ բարեկամ , ոչ վարկ , և ակնկալելի մարդասիրութիւն , և արդարութիւնը այս պէս կը պահանջէ : Արդիլէ՛ քու տղայքդ զիրար նախատելէ , զիրար ծեծելէ , իրարու մէջ մատնութիւն ընելէ . չգիտցուիր թէ ո՞ւր կրնան տանիլ երիտասարդութեան մէջ առնուած այս գծուծ և գէշ բարքերն : Պէտք չէ միայն ուրիշին անհնականութիւնն , համբաւը , ստացուածքը յարգել , այլ նաև իր անձն յարգել : Բարի մայր մը շատ արթուն է այս մասին և խստութեամբ կ'արդիլէ ամէն անպատճենութիւն : Նա չթողուր որ իր զաւակները վազեն անպատճառ , կիսամերկ , ազտեղութիւն ընեն ուզածնուն պէս , և ոչ անհաճոյ շարժումներ : Մարդ այսպիսի թերութեանց մէջ իյնալով կը կորսնցնէ մարդկային արժանապատուութեան գդացումը , և վայրենութեան մէջ կ'իջնէ :

Քու դստերացդ համար մահաւանդ տւելցուր խըստութիւն : Թող քենէ կարելի եղածին չափ քիչ հեռանան , և շատ վատահելի անձնանց միայն յանձնէ՛ զանոնք : Ցորչափ անոնք գպրոց երթան , անոնց վրայ հսկողութիւն ընել դիւրին պիտի ըլլայ քեզ : Բայց երբ անոնք միձնան , անոնք աջ ու ձախ պիտի ուզեն երթալ բարեկամուհեաց հետ : Այդ բանին պէտք չէ հանդուրեաւ Շատ մատաղ աղջիկներ այս կերպով կորսուած են : Պէտք չէ թողուս որ այդպիսի տնակութիւն մը գըտնաւեսի իրենց վրայ : Ալան զի անդամ մը մարդ տեղի

տալու տկարութիւնն ունեցած ըլլայ, այնուհետեւ ամէն անդամ որ մերժել հարկ ըլլայ, կոփեներ տեղի կ'ունենան : Սակայն բնական է որ երիտասարդութիւնը սիրէ զբօնուլ, և բարի ծնողք պէտք չէ այս մասին ծաղրելի հանդիսանան : Եթէ քու տղայքդ փափաք ունենան որ և է հանդիսի երթալու, ուր գուն կրնաս զանոնք առաջնորդել առանց անպատճութեան, հոն գնանոց հետ : Գէշութիւն մը չկայ անոր մէջ երբ քու աղջիկներդ պարեն քու աչքիդ տակ իրենց եղբայրներուն ու քեզի ծանօթ երիտասարդներուն հետ . մեծանպատճութիւնն այն է, երբ առանց քեզ՝ ժուռ գալու երթան անոնք, ո՞վ գիտէ ո՞ւր, կենան ո՞վ գիտէ որո՞ւ տուն, և ծանօթանան անոնց՝ որոնք կրնան զանոնք չարին առաջնորդել :

Պիտի ըսեմ նաև ընթերցանութեանց համար : Թող քու տունդ չտեսնուին այն լկտի գրքերն, կամ պարզապէս անստօրէն զբուած գրքերն, որք երիտասարդութիւնը կը մոլորեցնեն և կը հաւտացնեն անոնց հազարումէկ յիմարութիւններ : Մինչև իսկ եթէ բոլորովին անբարոյական ալ չըլլան, դարձեալ ատոնք վնասակար կրնան ըլլալ, եթէ մատաղ աղջիկը զգուեցնեն իր հանապազօրեայ պարզ կեանքէն, և անոր մտքին մէջ դնեն աշխարհի վրայ բոլորովին սուստ և չափազանցեալ կարծիքներ : Իրական կենաց մէջ չիկան այնչափ մեծոմիրներ, որչափ այդ գրքերուն մէջ կը պատմուին, ոչ այնչափ մեծ զուարծութիւններ, ոչ այնչափ կատարեալ գիւցազներ, և ոչ այնչափ սրտաշարժ գիւցազնուհիներ : Եթէ դուն ուրեք պատահի այնպէս, բոլորովին բացականուին այժմ գրեթէ ամենուրեք լաւ գրքեր՝ որք այնքան շահագրգիւն են և կրնան բարձրածայն՝

կարդացուիլ ընտանեաց մէջ : Ընտիր ընթերցումներ միտքը կը լնուն և այնպէս կ'ընեն որ այլ եւս զզուելի կը դառնան անհամ և թշնամական բամբասանք եւ շաղփաղփութիւններ :

Այս թերութեանց մին է որուն կը միտին աւելի մատաղ աղջկունք. միւս թերութիւններն են պչըանք, որկրամոլութիւն և ծուլութիւն : Բարի մայր մը այս ամենուն կը յաղթէ հաստատամտութեամբ, քաղցրութեամբ և ողջմտութեամբ : Եւ յետոյ լաւագոյն ուսումն, կը տեսնես, քու ընծայելիք բարի օրինակն է : Այնպէս բարի, այնպէս արդար, ճշմարտախօս, անաչառ եղի՛ր, որ քու տղայքդ քեզ նային հիացմամբ : Անոնց համար եղի՛ր այն ամէն բարեմանութեանց կենդանի օրինակն, զորս կ'ուզես որ ունենան անոնք : Այդ յատկութեանց արժանիքը շատ լաւ պիտի հասկընան, եթէ անոնք ամէն օր անոնց բարերար աղդեցութիւնը զգան : Այն աւեն դու անոնց համար պիտի ըլլաս տեսանելի նախախնամութիւն մը, և անոնց սէրն ու մեծարանք հարիւրապատիկ պիտի փոխարինեն քու կրած նեղութեանցդր :

Իր որդիները երջանիկ և իմաստուն տեսնել, ահա այն քաղցր վարձքը՝ զոր մայր մը աշխարհի վրայ կրնայ ստանալ :

Կարգապահութիւն, մայրութիւն, աշխատութիւն
բարգաւաճնան կարեւոր պայմաններն են :

Նամակ Դ.

Սիրելի Դիմ Գեղանոյշ,

Աշխատութիւն, կարգապահութիւն, խելացի տնտեսութիւն աշխատասէր ընտանիքի մը համար բարգաւաճնութեան կարեւոր պայմաններն են : Ես զքեզ կանուխէն աշխատութեան վարժեցուցի . այն քեզ համար երկրորդ բնութիւն մը եղաւ : Դուն չպիտի կրնաս ապրիլ առանց աշխատելու, և քու ընտանիքու լաւ եւս զարգացնելու համար պէտք է շարունակ աշխատիս : Քեզ սորվեցուցած եմ բաժնել աշխատութիւնը եղանակաց համեմատ, փորձառութիւնը աւելի պիտի հրահանգէ զքեզ :

Թող կարգապահութիւնը քու կենացդ ամենամեծ հոգերէն մին ըլլայ : Ցորչափ մարդ քիչ բան ունենայ, այնչափ կարգապահութեան սոլորյոյթներն մեծ պէտք է ըլլան : Բան մը գետինը մի՛ թողուր, և դուն ապահութիւնը բան մը չկորսուելուն :

Ամեն բանի համար տեղ մը են ամեն բան իր տեղը : Այս բանը միշտ կրկնէ՝ դուն, և ոչ միայն զայն կրկնէ՝, այլ և գործադրութեան մէջ զի՞ր . կարգադրէ՝ կարասիներդ աչաց հաճելի եղանակաւ, որչափ կարելի է, մահաւանդ առօրեայ գործածութեան համար դիւրին : Կախէ՛ խոհանոցի պղնձէ անօթներդ պատին դէ՛մ հորիւ գոնական դիրքով գամուած իւղաներկ տախտակի վրայ

սպունգով պէտք է մաքուր պահնես զանոնք . գարանին մէջ շարէ՛ անօթները և տանդ նպարները տուժերու մէջ զի՞ր : Մի՛ թողուր որ աւելցուք մնան պնակներու մէջ, հացի օթեկ կեղեւներ գարանի մէջ, բանջարեղէններ կողովի մէջ : Ասոնցմէ կրնան կերակրութիւն անասունք, կատուք, չունք, հագարք, ճյժք, հաւք, այծք, ճունք, հաւք, այծք, ճագարք . իսկ եթէ այլ կաորները այնպէս թողուս, պահարանները կ'աղտապին և կը խափանուին : — Եթէ չունիս մութ խորշմը՝ աւելները, խողանակները, վետրաւելները, ջնջանները, եւայն, դնելու համար, վերջապէս ամէն ինչ որ մաքրութեան կը ծառայէ, գետնէն վեց ոսնաչափ վեր տախտակ մը դիր՝ ուր պիտի կրնաս դնել տուժեր և ծրաբներ : Պէտք է մինչեւ գետինը իջնող վարագոյր մը կախել երկաթէ գաւազանէ մը, որուն ետեւ կը ծածկուին բոլոր անգործածելի անօթներ և նոյն խակ արկղներ՝ որ պարունակեն հանքածուիս, տաշեղներ և բանջարեղէններ, ևւն : Երբ անօթները չարուին, վարագոյրը կը քաշուի և ամէն բան կարգին կ'ըլլայ :

Արթնանալուդ պէս անկողինդ շակէ՛, և սախալէ աըղաքներդ՝ որ իրենցը շտկին : Թող անսնք չբաւականան գործը չուս աեմնելու համար, անկողինը ծեծել, սաւաններ քաշել, և վրան վերմակ դնել : Պէտք է դարձունել անկողինը յնցել և թօթուել սաւանները, որպէսզի անկողինը օդ անձէ : Պառկելու համար, նայէ՛ որ տղաք հանուին վութով և յիւմարութիւններ չընեն, իրենց դգետանները ծալլած դնեն, իրենց անկողինը ոտքի կողմը աթութ մը վրայ, և իրենց ոտքի ամանները սենեկին դուրս :

Թող միշտ աղասա ճերմակեղէնդ ըլլայ մերնայարկը կամ դոց սաստուկի մէջ, մի՛ թողուր որ աղտեղի բան մը ըլլայ սենեկաններուն մէջ . բացարձակապէս այդ կը

պահանջեն աւողջութիւն , կարգաւորութիւն և պատշաճութիւն : Խսկ մաքուր ճերմակեղէնն, երբ լուացքէն դարձած է , վերստին երկաթով ողորկելէ առաջ ինամով քննէ՝ ամէն կտորները . ծածկուած կողովի մէջ դի՛ր բոլոր անոնք , որք նորէն նորոգուելու պէտք ունին , ծածկէ՝ միւսները չին սաւանով , որպէս զի երկաթով ողորկուելէ առաջ չաղտոտուին :

Կարկտելու համար սկսէ՝ ամենէն փոքր նորոգութիւններէն : Այսպէս կողովի շուտով պիտի պարզուի : Պաստառներուն բացուած տեղերը կցէ՛ , կտորներ դի՛ր ծակծկած պաստառներուն . թեւ թեւ քակուած խծիպները նորէն չինէ՛ , նորէն կարէ՛ պակսած կոճակները , կապիչները , ժապաւէնները : Բայց ժամանակ մի՛ անցուներ շատ հինցած ճերմակեղէնը կարկտելու , որ չի կրնար ընդունիլ նոր կտորներ : Պէտք է շարեւ իրարու վրայ աղէկ լուացուած հին ճերմակեղէնը մաքուր պարկի մէջ , որպէս զի հիւանդութիւն պատահած կամ ողորմութիւն արուած ատեն առնուի : Լաւ կարգաւորուած ճերմակեղէնով դարան մը բարի տանտիկնոյ մը փառքն է : Զոյդ զոյդ լաւ ծալլուած սաւանները , անձեռոցները , ջնջանները , գողնոցները , մարմոյ ճերմակեղէնները , քառակուսի ուղիղ բարդերով՝ իրեն պարծանքն են : Պէտք է դնեւ կտաւեկեղէններուն վրայ չոր հուսամի փնջիկներ և հիրիկի արմատներ , որոնք կուտան անոնց լաւ , առողջարար և հաճելի հոտ մը : Կտաւեկեղէնի լաւ դարաններու մէջ կայ բանալիով գոցուած գլուց մը : Ապահով փականք մը սուղ չէ , և դիւրաւ կը դրուի այս գլուցին : Հոն կը շարուին դրամ , փոքր գոհարեղէններ , ընտանիքի արծաթեղէնքը , եւ թուղթերը . ծննդեան , ամուսնութեան և մկրտութեան վկայագրեր , ուսմանց վկայագրեր , խնայողական

արկղի գրքոյիներ , մուրհակներ և արժէթուղթեր , եւն , ամէնքն ալ ստուարաթղթէ տուփի մէջ զետեղուած : Երկրորդ ստուարաթղթէ տուփի մը պէտք է պարունակէ տուրքի , ապահովագրութեան , տան վալճուց անդորրագրերն . վերջապէս բոլոր թղթերն՝ որ կարեւոր են լաւ կարգաւորեալ տան մը մէջ պահելու : Պէտք է որ բանալին դրուի լաւ ընտրուած ծածկուկ խորչի մէջ , որ պէտք է ծանօթ ըլլայ ամուսնոյն և կնոջ միայն : Դարանին վերի կողմն կրնաս դնել բեղոյրի ստուարաթղթէ տփեր , հին ճերմակեղէնի պարկը , ուրիշ պարկ մը՝ որ կը պարունակէ կարկատելի առանին զգեստներու կերպասի կտորուածնք , ուրիշ պարկ մ'ալ ուր կը դրուին ձեռակեղէնի նոր կտորուածնք , այսինքն կտաւի , աստացուի , ասուեակի , արքենուոյ պատափիկներ՝ որ կ'իյնան նոր ճերմակեղէն մը ձեւելու ատեն : Տան մը մէջ այս ամէնը իր օգուան ունի : Բայց թող այս նախազգուշութիւնք անկարգութեան չի դառնան , և չի դարձունեն փերթաքաղի խանութ մը . նոյնպէս պահէ՛ դարանիդ մի անկիւնը մի արկղ՝ որ պիտի ծառայէ քեզ իբրեւ փոքր դեղարան : Այսպէս ճեռքի տակ պիտի ունենաս վերք կտմ արկած պատահած ժամանակ ամէն ի՞նչ որ քեզ օգտակար պիտի ըլլայ :

Թող միշտ կախուած և վարագուրով մը ծածկուած ըլլան քու վերարկուներդ , շրջազգեստներդ , քու որդւոցդ և ամուսնոյդ զգեստները . եթէ ասանք դարանի մէջ չըլլան , քիչ ծախքով ընափր ձորձակալներ կը չինուին փոքրիկ փայտէ ձողով մը , որուն մէջ օղագլուխ գամ մը կը գամուի . պէտք է անցուներ առասան մը այն գամին օղակէն և ամէնն ճանկաւոր գամերով տախտակէ մը կախել : Այսպէս կախուած հագուստներ պատուելու վտանգէն աղատ կ'ըլլան և գամերէ կախ-

ուածներու նման ձեւելովին չեն կորսնցներ:

Եթի հագուստները բոլորովին անգործածելի են, եւ կարելի չէ ներազ դուրս դարձունել կամ նորոգել որեւէ կերպով, զանոնք աղքատաց առ' ւր. այս կերպով դույն երջանիկ պիտի ըլլաս սփոփելով թշուաւներն, թէ մեծ հարստութիւն չունենաս: Կարգաւորութիւն և խնաշ յողութիւն ի միասին կ'երթան. մին միւսը կ'առաջնորդէ, և երկուքն լաւ տուներ կը կազմին:

Սմունանալուդ պիտի բերես լաւ օժիտ, քիչ մը կարասի, և ունեցած դրամդ: Եթէ ամուսնանաս բարի գործաւորի մը, կոկիկ մարդու մը հետ, որ վարժ ըլլայ իր արհեստին կամ պաշտօնին մէջ, ձեր երկուքին շահածալը ասլրելու համար պէտք եղածէն քիչ մը ու ելի բան մը պիտի ունենաք, և որդիներ ծնանելէ առաջ գուշը պիտի կրնաք ձեր տունը կահաւորել տակաւ և նոյն իսկ դրամ դնել ինսայողական արկղն: Սակայն այս բանը համեստաօրէն և խաղաղիկ ասլրելու պայմանով կ'ըլլայ անշուշտ: բայց ապահով եղի՛ր թէ երջան կութիւնը պէտք չունի ոչ պերճանաց և ոչ աղմկալից զուարձութիւններու: Ուրեմն նախ և առաջ ձեր հաշիւր ըրեւք, մերժաւորապէս հասկընալով թէ ի՞նչ պիտի ծախս սէք հացի, մսի, ըմպելեաց, անդեան, լուացքի, տաքնալու, եւայլն ի համար: Սւելի յատակ մտօք ըսկը, չմնեցէք ձեր ելեւմաացոյցը այսպէս,

ՄՈՒՏ

Շահնականոց

Ամսական

Տարեկան

150 ֆր.

150×12

1800

Շահնականոց

Ամսական 50 ֆր.

Տարեկան 50×12 600

Զամանական հասոյթք 200

Համագումար 2600

ԵԼՎ

Շահնականոց ֆր. 250

Տարեկան 10

Համականոց 250

Մասնական 950

Լուսաւորումն 30

Ջերմութիւն 50

Լուացումն 60

Ամուսնոց զգեստք 150

Կոոջ զգեստք 100

Կարասեաց ծախսք 50

Զամանական ծախսք 200

Համագումար 2100

Այս ընելէ յետոյ այնպէս մը կարգադրեցէք ձեր կենցաղավարութիւնն, որ ծախսոց կողմը նուազ ըլլայ քան մուտքի կողմը: որովհետեւ պէտք է հաշուի առանուլ հիւանդութեան օրեր, գործադուներ, արտասովոր ծախսքեր:

Եթէ ամէն ամիս ամէն ինչ վճարելէ յետոյ ձեզ վոքր գումար մը մնայ, առանց վարանման դիր ինսայողական արկղը: Մտիկ մի՛ ըներ անոնց՝ որ կ'ըսեն: պիզտիկ գումարի մը համար նեղուիլ չարթեր: Մինչեւ իսկ

10

եթէ միայն հինգ ֆրանք ունենաս մնացորդ , տա՛ր զայն . այս կերպով զայն ըստ հաճոյս վատնելէ փրկած պիտի ըլլաս , և հինգ հինգ ֆրանքով ինսայութեանց դրքուկիդ մէջ բաւական կլոր գումար մը պիտի նշանակուի : Տարւոյն վերջը մտից և ելից ճիշդ հաշիբ տե՛ս , որպէս զի գիտնաս թէ արդեօք չափէն աւելի չէ կենացդ համար ըրած ծախքդ , կամ թէ արդեօք կարո՞ղ ես ամէն տարի գարձեալ փոքրիկ գումար մը աւելցնելով հանդերձ աւելցնել նաև քիչ մը առտնին բարեկեցութիւնդ , կարասիքդ կամ հանդերձելէնքդ :

Երբ քու տղայքդ քերգ հասկընալու չափ բաւական մեծ ըլլան , մի՛ վախնար որ անոնք քու այս տեսակ փոքրիկ գործերուդ տեղեակ ըլլան : Կան մարդիկ՝ որ կ'ըսեն . Պետք չէ այս ամենի բաներով տղոց միտրը նեղել : Հաւատա՛ թէ կը սիսալին : Պարկեցաւ և ժրաշան ընտանիքի մը մէջ ամէն անդամ պէտք է մատնակից ըլլայ հասարակաց շահու վերաբերեալ բաներու : Առանց տղոց միտքը իրենց հասակէն վեր հոգերով անհանգիստ ընելու , կարելի է վարմեցնել զանոնք տակաւ հասկընալու թէ իրենց ուտեսարք , հագուստները , դրքերը՝ խաղալիկները ինքնին չեն գար , թէ անոնց համար վը ճարտած դրամը հօր և մօր աշխատութեան պատուն է թէ կան օրեր , երբ դրամը սակաւագիւտ է , թէ ոկտոք է խնայիլ , և թէ բարի և անհնաւեր տղայ մը պարտի կարելի եղածին չափ շաւա շահելու վիճակին մէջ ըլլալ իր ծնողաց օգնելու համար : Սկիզբը ըսի . խելացի խնայութիւն մը : Արդարե պէտք չէ շփոթել խնայողութիւն որ է ինչ լան մ'է , ադանութեան հետ՝ որ սնարդ ոչ առողջութեան , ոչ մաքրութիւն մը պէտք չէ դուք պէս կարելի է խնայողութիւն ընել փափկակերտութեան ,

որկրամոլութեան վրայ , բայց ոչ ընտանեաց ուտեստի քանաւոր ստակին և քանակին նկատմամբ : Դէ՛ մնունդ առած այր մը և կին մը չեն կրնար աշխատիլ ոչ լաւ և ոչ շատ , և շատ գտուարաւ կը հանդուրժեն իրենց վիճակին յոգնութեանց , որով հիւանդութիւնք կը հասնին և կ'աւերեն տունը : Հին առած մը կ'ըսէ . Բժջիկ երբային առաջ լաւ է ջաղացք երբալ :

Մաքրութեան մասին խնայողութիւնը գարշելի և վնասակար բան մ'է : Աղտոս լաթ հագնիլ , ծակ կօշիկներ , իւղոս հագուստներ կրելն անձին արժանապատութեան թերանալ է , վնասել է իր առողջութեան , իր զարգացման , և բարի անուան՝ զոր պարտի պահել իր ընտանեաց համար : — Վերջապէս խնայողական պատրուակաւ պէտք է միթէ խստասիրտ ըլլալ իր նըմանեաց , մերժել հաց կամ պնակ մը ասլուք թշուառի մը՝ որ անօթութենէ կը տառապի կամ ծախել քիչ մը ստակի փոխարէն հին հագուստներ , որ գեռ ևս կրնան ցուրտի գէմ պաշտպանել կիսամերկ փոքր թշուառաղայք : Ո՛չ , սիրելի՞դ իմ Գեղանոյշ , չգողենք մեր սիրացը այլոց տառապանաց դէմ : Մենք ամենքս ալ եղբայր ենք , ամենքս ալ որդիք նոյն Հօր՝ որ երկինքն է , և պարտինք միմեանց օգնել այն ամէն տուայտանաց մէջ , որոնցուլ աշխարհի կեանքն լցուած է : Միթէ միենոյն տառապանքին մենք ալ ենթակայ չենք : Ամենէն մեծ հարասութիւններ յանկարծ կը կործանին . խորհէ թէ մի քանի ամստաւն մէջ ձախողութիւնը կամ մահն մինչեւ ուր կրնաց իջեցնել ամենէն բարգաւած տուն մը : Զեր ուզեր այս դառն մտածմանց վրայ երակարաբանել . բայց միայն կ'ուզեմ ցուցնել թէ լաւ է երբեմն անոնց վրայ մոածել : Անոնք կը սորվեցնեն խոհեմութիւն երջանիկ օրերու մէջ , և կը պատրաստեն

անտրտունջ հպատակութիւն և քաջութիւն դժնդակ օրերու համար :

Սյս նամակը կ'աւարտեմ այն պղտիկ պատմութեամբ, որ յարձար պիտի գայ ցոյց տալու թէ մինչեւ ուր կրնայ տանիլ պղտիկ բաներու մասին անիութութիւնը :

Բայց դրան մը վուանցը եւ խճայողութեան դաս մը զը միշեմ թէ զիւղն եղած ատենս, տեսայ օրինակ մը այն փոքրիկ վնասներուն, որոնց կ'ենթարկուի տուն մը անփութութեան պատճառաւ :

Առ ի չգոյէ չնչին դանախակի մը, հաւբակի մը դուռն՝ որ դաշտերու վրայ կը նայէր, յաճախ բաց կը մնար : Ամէն եղնող դուռը կը քաշէր, բայց զայն դուցելու համար, արտաքին որ եւ է միջոց ըլլալով, դուռը բացինիկ կը մնար : Հաւբակին անասուններէն շատերը այս կերպով կորուած էին :

Օր մը մատաղ և գեղեցիկ խոզ մը փախաւ դէպիր անտառները : Անա դաշտին բոլոր մարդիկ, պարտիզան, խոհարարուհի, հաւբակի սպասաւոր աղջիկն փախուով կենդանւոյն ետեւէն հետամուռ ըլլալու եւան ասդիմու անդիէն : Առաջին անդամ պարտիզանը նշմարեց, և անոր անցքը արդիկելու համար փոսի մը վրայէն ցատկ կելու ատեն վտանգաւոր կերպով ճմլուեցաւ, որով տասնեհինդ օրէն աւելի անկողնի ծառայեց : Խոհարարուհին խանծած գտաւ այն ճերմակելէնը, զոր կրակին քով ձգած եր չորհալու համար, և որովհետեւ հաւբակի սպասուհին անասունները կապելու ժամանակ չունեցած հեռացած եր գոմին, կով մը անոր բացակայութեան ատեն քուռակի մը սրունքը կոտրեց, որ միենոյն ախոռն մէջ կը պահուէր : Պարտիզանին կորուած օրա-

յանները 60 ֆրանքի եղան, նոյնչափ կտաւին և քուռակին վեաը : Ահա այսպէս չնչին դռնափակ մը չըլլալով մի քանի վայրկեանի մէջ հարիւր քսան ֆրանքի վեաս մը առաջ եկաւ այնպիսի մարդոց, որոնք շատ խնայողութեան պէտք ունէին, չհաշուելով հիւանդութեան պատճառած նեղութիւնները, ոչ անհանդստութիւն և ծախքէն գուրս եղած ուրիշ անպատճենութիւններ : Ասոնք չէին մեծամեծ աղէտներ կամ մեծ վեաններ . սակայն երբ գիւղուք թէ անզգուշութիւնն ամէն օր այսպիսի պատահարներ կը պատճառէր, և ի վերջոյ փացուց պարկեցտ ընտանիք մը, ամէն ոք պիտի բաէ թէ կ'արժէր այս մասին հոգ տանիլ :

Ժ. Դ. Ա. Յ. Յ.

Ազգականաց գալը, մանկան մը յաջողութիւնների

ուրախութեան առիթներ են :

Նամակ Դ.

Բարեբախտաբար կեանքը չէ եղած այխառութեան և հոգերու համար : Հարսանիք, մկրտութիւն, աղգականի մը գալն, մանկան մը յաջողութիւնները ուրախութեան առիթներ են, զորս բարի ընտանեաց մէջ կը սիրեն տօնախմբել գումարու մներով : Այսպիսի պարտիզի մէջ բարի ընտանիքը իր բոլոր տաղանդը կը կը ցուցնէ, բոլոր տնեցիք կամաւ կ'օժմանդակին այս բանին . մանչերը ապօպուած բան մը կատարելու կ'երթան, աղջիկները սեղանը կը պատրաստեն, տունը կը կը զարդարեն . ամէն ոք իր ջանքը կը նուիրէ ; և ա-

մէնքը փափաքող են ընտանիքը պատուելու : Տուներ կան, ուր բոլորովին կը չփոթին այսպիսի պարագայի մէջ, չզիտեն ուրկէ սկսիլ և ամէն ինչ ձախող կ'երթայ : Այսպէս մի՛ լինիր, սիրելի՛դ իմ Գեղանոյշ ու պահէ՛ քու պաղարիւնութիւնդ գլուխդ կրակի մէջ եղած ատեն, և քու ամենօրեայ կեանքիդ ճշդութեան կարգաւորութեան սովորութիւնները զքեզ չպիտի լքանեն : Կ'ուզեմ քեզ օգնել մի քանի խորհուրդներով, նախ և առաջ պէտք է լաւ հաշուել այն փոքր գումարը, որ կրնայ ծախսուիլ և զայն ողջմատութեամբ բաշխել . այսօափ մսի համար, այսօափ բանջարելին ներու և պտղոց համար, ալսօափ աղանդերի համար և այսօափ գինուոյ և խահուէի համար, այսօափ զանազան ծախսոց համար : Մանաւանդ պէտք է զգուշանալ մեծածախ սեղաններէ և թերի պերճանքէ, ինչպէս օրինակի համար աժան գնով իշխանաձուկ գնել, որ թարմ չէ, հոտելու սկսած որսի միս, կարկանդակ, օթեկ հաստեաներ, փաած պտղոններ և գէշ ալքոլով և առնելով ոչ ոք գոն կ'ըլլայ, ոչ հրաւիրեալները, որոնց գան քու յաւակնութիւններուդ վրայ, և որոնք կը խընկարողութեանդ, որուն վրայ կը ծանրացնես կարգէ եթէ կ'ուզես քու բարեկամներուդ հաճոյք պատճառ գըստաւէտ, առատ ըստ բաւականին, որմէ ամէն հանեալ օրն ալ օգտակար կարենան ըլլալ : — Եղանակին թէ՛ : — Հմակելեաց մասին երկրիդ մէջ սովորաբար խըմ-

ուած ըմպելին, այսինքն գարեջուռ, խնձորօղի, կամ չանչագինի պէտք է կարելի եղածին չափ առատ եւ շաւագոյն տեսակէն ըլլայ : Ամառ ատեն պէտք է զուլ լաւագոյն տեսակէն ըլլայ : — Լաւ գինուոյ գալով լաւագոյն է շիշ պահէլ զայն : — Լաւ գինուոյ գալով լաւագոյն է շիշ պահանձութիւնները զքեզ չպիտի լքանել ընտիր վաճամը Պորտոյի կամ Կիպրոսի զինի առնել ընտիր վաճառատունէ քան թէ նպարավաճառէ կամ գինետունէ յուսի տեսակէն երեք շիշ գնել : Ճաշէն վերջ գաւաթի մը սուրճ միշտ հաճոյք կը պատճառէ . պէտք է մեծ խնաւմով զայն պատրաստէլ : Այդպիսի օրերու մէջ պէտք է որ անխառն ըլլայ սուրճը :

գործեր , որք գիտացած արդէն ինձ պիտի ըսեն , կամ
չգիտացած յանօգուտս ինձ պիտ' ուսուցանեն :

Ես փոխանակ կարդալու թարգմանութիւնդ , որ
յոյժ օգտաւէտ անչուշտ ու յանձնարարելի գործ մ'է ,
կը խորհիմ թարգմանչին խակ վրայ : Կը խորհիմ , Պատ-
ուելի՛ , թէ մշանջենական բանտարկեալ մ'ես դու յաշ-
խարհի : Սակայն խորյն կը յարեմ . « Իր հոգւոյն բան-
տարկեալն է Թաղէոս աչազուրկ Պատուելին : » Բան-
տարկեալդ հոգւոյ , բանտիդ շրջանակն յաւէտ դու
կ'ընդլայնես , և չնորհեալ իմացական կարողութեամբք
արգելանդ անսահման աշխարհի մը կը փոխարկես . ար-
տաքին աշխարհին բարիք ու փառաւորութիւնք՝ որոց
վայելմանէն զրկուած ես , ի ներքս . ի քեզ զայնու
հորու : կը ասելծես : Եւ մինչ բիւրուց յ բիւրս արարա-

ներն» : Հարցումս զքէն խորհեղով կ'ընեմ, և աչերու
աւելի պինդ կը փակեմ. . . :

Ե. ՏԵՄԻՔԻՑՈՒՅՈՒՆ

Գատըքէօյ 18 Մեկտ. 1891

Մէկրւական ճամակ :

Փետրուարի 13

Իմ առաջին ներկայացման յաջողութեան մասին
անշուշտ տեղեկութիւն ունէք և կարդացած կը լինէք
Մոմկուայում հաստարակուող Ռուսաց երկու զվարու
թերթերի մէջ . բոլոր թատրոնների գերասաններն այս
տեղ էին և իւրաքանչիւրը զատ զատ սենեակս կու-
գային բարեմաղթութիւններ անելու : Ներկայացումից
յետոյ պարահանդէս կար թատրոնի մեծ սրահն մէջ .
յոդնած էի սասափի, բայց բանի վնած տարան սրահ, ուր
հաւաքուած էին թատեր հանդիսականները, շատ էլ
ուռանուած ուսանողներ, բոլորը միաձայն սկսան ուռայ
ուռաներ և ուսանողներ, բոլորը միաձայն սկսան ուռայ
կամնել և ծափանարել : Դուք երեւակայեցէք իմ դրու-
թիւնս, գեախնը պատռուէր տակն անցնիմ, կը մատ-
թիւնս, գեախնը պատռուէր տակն անցնիմ, կը մատ-

ծոց կը բաշխին արփենի ճաճանչք և ասաղենի նշոյլք և
ի քեզ՝ զքե՛լ միայն լուսաւորելու համար՝ արեգակ
մ'ողջոյն և աստեղաց հոյեր ունիս դուն, — երազ
զոր և ոչ աիեղերակալ մ'իրացուց երբեք յաւիտեան :
Ներքնախարհիկ ովկէանդ, որոյ մօտ թերեւու լճակք
երկրագնդոյն և երկրագնդից ովկէանք, յիւրին ա-
ւազածիր միակ միահեծան հանդիսանենիդ առաջի կը
պարզէ խոռվ կամ խաղաղ իւր տարածն հրաշափառ :
Ներքնակատար բարձանց բնակ՝ քոյնաստեղծ արծուոյք
երկնադաշտիկ ճախրանաց բարձրութիւնն ալ երկուզա-
ծօրէն կը մրցի գերաթոիչ հոգւոյդ վերասլացմանց :

Յորժամ հանդիսանք միմնանց ու դու լսես ձայնս,
թուի իմն ճեռինքդ ճայնիս ուղղութեան կը հետեւին,
և երեւոյթն ունիս յայնժամ մարդո՞յ՝ յորոյ ձեւանհն
թոչուն մը կը խուսափի : Ճայնս արդարեւ ձեռացդ չօ-
չափմանէն վրիպելով՝ աներեւակ հաւ անհունաբանդ
կը խոյնայ հոգւոյդ մէջ : Եւ հմայքն որով զգեցիւալ
անորի կ'ելնէ դուրս, ահա այդ հմայքն է, Պատուելի՛ր
որ ի ներքս ի քեզ անցած սքանչելահրաշ անճառ իրու-
ղութեանց վրայ գաղափար ինձ կուտայ : Եւ անտի՛
տեսչն իմ մեծ՝ յաճախ մօտուատ ընդ քեզ ձայնի՛ւ խօ-
սելու :

Բայց աւելի բուռն բաղձանք մ'ունիմ յաւէտ . —
ունին դնել ամայի լնակարանիս և համօրէն ամայու-
թեանց լուսութեան, որ կուտայ հոգւոյս նախաձաշակն
անհութեան : Ինձ այսպէ՞ս կը թուի թէ լաւ եւս կը
լսեմ, երբ աչուխս խիմեմ : Եւ ստէպ ես աչքերս կը փա-
կեմ արեգական դէմ :

Մերթ եւս մելամաղձութեամբ կը հարցնեմ ես ինձ՝
« Եա՛ ես արտեւանունքն առ յաւէտ չէ կափուցած,
որպէս զի լա՛ւ եւս լսէ և յարաժա՛մ լսէ ներքին ձայ-

մէն ինչ մանրամասնօրէն և միայն ձեզ կարող և պարագան եմ զրել : Ծանօթացայ բոլոր գլխաւոր դերասանաց և դերասանուհետաց հետ : Ծանօթացը ինձ նոյնալէս Ասթէլը լուսկու հետ . շատ սիրով վարուեցաւ հետո , հրաւիրեց ինձ իրեն մօտ ճաշի , երբ լսեց որ Արդիմանար պաշտօն բիէսան թարգմանուած է հայերէն և ես ներկայացրել եմ ժամովլք , սաստիկ ուրախացաւ :

Եկած օրէս ի վեր ո՞րքան տկարութիւն որ ունեմ , մէջտեղ ելան : Տեսէք բաղդը , գալ Մոսկուա , այս պիսի մի անուն և յաջողութիւն գտնել և միշտ հիւանդ լինել . . . :

Առաջին հասոյթից գոյացաւ 1200 լուսի : Երկրորդ ներկայացմանը նուազ գիներով էր : Այդ ներկայացմանը երեկոյին շատ դերասաններ կային , միշտ սկզնեակումս էին անդրաքդներն , ի միջի այլոց Ավագուստինա , Պարիչէվա , Բիուզի , Տակմարովա դերասանուհիք եւս սենեակս եկան և խնդրեցին ինձնից իրեւ յիշատակ մի մի տերեւ ուսանողների ինձ ընծայած պատկից , որն որ տուի մնջ ուրախութեամբ : Այս երեկոյ հրաւիրուած եմ տոմսակով Ռուսաց դրամատիքական թատրոնը Ապէրիախատ տարիք անուն նոր բիէսան տեսնելու , և յետոյ չայի գնալու իրենց մօտ :

Այս տեղ ծանօթացայ խիստ շատ Հայերի հետ : Երկու լուսանկարներ եկան խնդրեցին , որ դնամ իրենց մօտ պատկերս հանել տալու : Հինգ օրից վերջին ներկայացումը կը տրուի և ես հիւանդ՝ չեմ կարծեր որ կարողանամ մնալ այս տեղ , գուցէ ուղիղ նախիջեւան դամ :

Անանովի մօտ հանդիպեցայ Այլազովսկուն , երեւելի նկարչին , որ ինձ ուզեր էր տեսնել : Չորս վայրէ ինչի մէջ մի ծովաչէն աւատրան ուրուագծեց գրչով

և ինձ նուիրեց : Կարող էք երեւակայել թէ ո՞րքան ուրախացայ . յետոյ ուզեց որ մի բան արտասանեմ , արտասանեցի Դարբինները , իրու ի փոխարինութիւն իւր թանկագին ուրուագծին , սակայն իմս անցաւ , նրանը մնաց : Այս' , այնպէս է . նկարիչներից , երաժիշտներից , արձանագործներից և բոլոր գեղարուեստէրերից աւելի շուտ և բարոյապէս կը մեռնին թատերասէրք , այսինքն դերասաններուն գործերը մահից յետոյ ապրելով , կ'ապրեցնեն նաև իրենց հետ հեղինակներուն անուններն էլ , այլ խեղճ դերասանաց միայն յիշատակը կը մնայ , այն էլ եթէ ունենան սրտի տէր բարեկամներ , նրանց սրտին մէջ կ'ապրին : Այլ թատերասիրաց համար միայն կը միշուին այն տեղ , ուր որ կենդանի ժամանակնին ծափահարուած էն , այսինքն թատրոնում : Եթէ մի Հայ թատերասէր իմ մահիցս յետոյ , հանդիպի մի ուրիշ դերասանի , որ ներկայացնում է այս ինչ խաղը շատ վաս կերպով , անշուշտ ինձ կը յիշէ , բայց թատրոնին դունէն դուրս ել ։ Եկուն պէս կը մոռնայ : Եթէ մանկութիւնից ինձ լաւ պարհանակ թէ ինչ է կեանքը , գուցէ ուրիշ ճանապարհով մանէի նորա մէջ :

16 Դեկտ. 1892

Պետրոս Հ. Առաքելյան

(Երեւելք)

Un Ulyrshej Uwimawurkawis:

Հայութական Տէ՛լ,

Ձեր Վաեմութեան բարերար անունն արդէն իմկ
հոչակուած է բոլցանդակ Հայ ժողովրդեան մէջ։ Դուք
որպէսիւս միանդամայն քաջալերած էք դպրութիւնը
և ախորժած էք այն քնարէն զոր մեր հին և նոր դու-
սաններ հնէցին, հաւատոփեմ, թէ կը հաճիք ընդու-
նիլ սոյն Սուակագիրքը, զոր ի պատիւ անուան Ձեր
Վաեմութեան ձօնելու ոչ թէ ինձ միայն պարաք, այլ
և փառք համարեցայ։

Սոքա փրբե գոհարներ , կ'աղաջեմ մթոյլ տալ ինձ ,
յեռուլ և յաւելուլ ի պսակն այն , զոր Մատն Աստուա-
ծային արդէն բոլորած է ի Զեր ճակատ , ուր գիշու-
թիւնն իւր բոլոր չնորներովն այնքան փարփառ կը
ցոլայ : Մազկազարդ պսակներ կը թառամին և ագա-
մանդակուռ գոհարներ կ'եղծանին . այլ սակայն լուսոյ
այն գոհարն , որ ծնունդն է մտքի , որ հոգւոյ մէկ ճա-
ճանչն է , յաւիտեան վառ ի վառ կը շաղչողայ և ոգե-
ւորութիւն կ'աղդէ մինչեւ իսկ տիքտ և տիսուր մտքե-
րու և սրտերու :

Սոյն գրքոյցին , իբր դուզնաքեայ ինչ ձօն , ընդու-
նիլ հաճելով , Գերազնիւ Տէ՛ր , կը թողուք զիս ար-
դարե ոչ թէ միայն չնորհապարտ , այլ և աւագախող
քարոզ ի վկայութիւն կաթողին զգացմանց Զերոց առ-
մեր դպրութիւն :

Անալիստներին յարգահոօք և ողջունիւ ի Տէր:

17 *Uman* 1880

L. Q. M. HU

ՀԱՏԱԿԵԼՎԱԾ ԱՎԱԿ :

Յունի 20/1 Փետրվ. 1884

Ամենասիրելիդ իմ . . .

Ժամանակին հետ էի . որուեցինք մի-
ասին ձաշել : Կերպուրի առևն ըստաւ ինձ թէ , Մատամ
Սառա Պէրնար , այս գլուեր Բօր-Սէն-Մարթէնի թատրո-
նին մեջ պիտի ներկայացնէր Գալելիազարդ Տիկին ա-
նոն թատրուրգութիւնը , առաջարկեց ինձ և չափաղանց
թախանձեց որ իրեն հետ միասին երթամ այս ներկա-
յացման . աեսայ որ այնքան ստիլիզմամբ եղած հրաւէր
մը մերժել ընդդէմ է քաղաքավարութեան , մանաւանդ-
այնպիսի բարեկամի մը համար , որու շատ անդամ ծան-
րութիւն տուած եմ , իմանուամայն հետաքրքիր էի աչօք
տեսնելու սա Սառա Պէրնար դերասանուհոյն դերա-
կատարութիւնն , որու համար բովանդակ աշխարհի
լրագիրները գովեստ ապէ չեն դադրիր . վերջապէս
լրագիրները գովեստ ապէ չեն դադրիր . վերջապէս

(*) Փամերն ըստ Թուրքաց նշանակուած են

ծախք կ'ընէ , ինք սակայն կարեւորութիւն չտար այս-քան մեծ մարդոց . այսու հանդերձ ուրախ զուարթ կը թուի , տանը մէջ միշտ հացկերոյթ , յաճախ պար , ցայ-գահանգէս . այս հացկերոյթներէն միոյն է որ կը ներ-կայանայ Սրման Տիւվալ անուն երիտասարդ մ'որ սրտանց կը սիրէ զՄարկրիտ (Գամելիազարդ Տիկինը) , յետոյ առթիւ մը , իւր սէրը կը յայտնէ նմա . բայց Մարկրիտ կը մերժէ Տիւվալի առաջարին , յարելով թէ ամէն մարդիկ կը յեղյեղեն սէրը , բայց ինք ոչ մէկուն կը վատահի , վասն զի վաղանցիկ կը գտնէ այս զգա-ցումը մարդոց վրայ . Սրման Տիւվալ զօրաւոր ապա-ցոյցներով կը համոզէ վերջապէս զՄարկրիտ իւր սիրոյն անկեղծութեան և աեւականութեան մասին : Մարկրիտ , որ ցայնվայր անզգայ մնացած էր ճշմարիտ սիրոյ հրա-պուրանաց , հետզհետէ այն սատիճան կը յախտակի այս երիտասարդին սիրով որ միտքը կը դնէ աշխարհի յուզ-մունքէն հրաժարելով Սրմանի հետ խաղաղ ու երջա-նիկ կեանք մը վարել Բարիզէն հեռի : Անձնութիւու-թեան , սիրոյ և գորովոյ կենդանի տիսար , Մարկրիտ կ'որոշէ նախ սպարտքերը վճարել , ուստի կը սկսի վա-ճառել բոլոր ունեցածներն և պարտատէրները գոհացը-նել : Սրման կ'իմանայ զայս , և որովհետեւ հայրը շատ հարուստ է , կ'երթայ անմիջապէս անոր հաշուակալին և քանի մը հազար ոսկիի վարկ բանալ կուտայ Մար-կրիտի համար , որտիս զի սա կարենայ առանց բոլոր ունեցածները ծախելու , պարտքերն ամբողջովին հա-սուցանել . հաշուակայն իրողութիւնը Սրմանի հօրն ի-մացնելուն , այս վերջինը կը փութայ Մարկրիտի ներ-կայանալ . տեսակցութիւննին շատ սրտասուչ էր . նա-խապէս , Սրմանի հայրը Մարկրիտի առջեւ ելած ատեն հազիւ գլխարկն ինք վայրկերէ չափ վար կ'առնէ ,

բայց որովհետեւ գէմինը հասարակաց կին մ'էր , այդ-չափ յարգանքն իսկ շատ կը համարի և վերստին գը-լուխը կը դոցէ , կ'իմացնէ իրեն թէ իւր պատճառաւա-ն Արման բոլոր հայրական հարատովթիւնը վճացնելու-սկսած է , թէ ինք (Մարկրիտ) ահագին քանակու-թեամբ ստակ կը մոխէ , ստակ զոր Արման հօրը գան-ձէն առնելով կը բերէր իրեն , թէ իրաւունք չունէր այսպէս պատռաւուոր և հարուստ ճանչուած ընտանիք մը թէ՛ անպատռել և թէ մոխոյ վրայ նստեցնել , և լու-Բայց Մարկրիտ , յետ յայտնելոյ թէ ինք Սրմանէն և ոչ մէկ ստակ ընդունած էր , թէ անոր վերջին կար-գադրութենէն բնաւ տեղեկութիւն չունէր և թէ նոյն իսկ ինք , առանց Սրմանի գիտնելու , արդէն բոլոր ունեցածները ծախելով սպարտքերը վճարած էր , զոր տեսարակներ ցուցունելով կը հաստատէր , և այս ամէնն յայնունի յետոյ , իւր սիրոյն մեծութեան , սրբութեան-և ճշմարտութեան վրայ այսպէս և այնքան գեղեցիկ ու երկար կը խօսի , որ Սրմանի ծերունի հայրը կրկին անգամ գլխարկը վար կ'առնու , ներումն կը ինդրէ Մարկրիտէն , կ'արտասուէ մինչև իսկ՝ երբ Մարկրիտ կը յայտնէ թէ արդէն մահացու հիւանդութենէ մը բըու-նուած էր , և յոյս չունենալով շատ տարիներ աղ-րելու՝ չորրէ կը խնդրէր իրմէ ապրելու՝ Սրմանին հետ մարդունի կը ինդրէնը իրմէ ապրելու՝ Սրմանին հետ մարդունի կը միայ . Սրմանի մերձակայ ամուսնութեան կարեւորութեան վրայ կը պնդէ և չը բաժնուիր՝ մինչեւ որ Մարկրիտ ծայր ստաֆան յուսահատեալ կը խոստանայ մեկնիլ Արմանէն , մերժել անոր սէրը և չիմայնել անոր թէ հօրը հետ այս մասին աեւանուած է : Արդարեւ Մարկրիտ անմիջապէս կը մեկնի նամակ-

մը թողլով, յորում գրած է առ Արման թէ մինչև այն ատեն խաբած էր զինքը, սիրել կեղծելով, թէ գիւղի հանոյքները քանի մը ամիս վայելելու համար Բարիզը թողած էր, և թէ այժմ վերստին հոն կը դասնար իւր հին աղմկալից ու շքեղ կեանքն անցունելու. քիչ օր յետոյ Բարիզի մէջ Մարկրիտի ներկայութիւնը մեծ ձայն կը հանէ, դարձեալ կ'ստանայ իւր աղարանքները, կառքերը, ձիերը, ևայն: Բայց գիշեր ցորեկ կը տանջուի Արմանի սիրով. հիւանդութիւնը՝ որ թուքախտ է, հետզհետէ կը սասականայ, կ'ուզէ Արմանը տեսնել և կը փախչի անկէ . . . : Բայց ահա Արման ներկայ կը գտնուի երեկոյթներէն միոյն մէջ, ուր կը սկսի անուղղակի հախատել զՄարկրիտ, հոն գտնըւողներուն հետ թուզթ կը խաղայ և միշտ կը շահի, միշտ ալ կրկնելով առածը թէ — ով որ խաղի մէջ կը շահի, սիրոյ մէջ կը կորոնցնէ: — Հուսկ ուրեմն, երեկոյթին վերջերը, Արման առանց Մարկրիտին լացերուն կարեւորութիւն տալու, իրքեւ սոտակով ծախուանուելիք արարած, երեսին կը նետէ այնաւել շահած 4-5000 ոսկիի պանքնօթներն և ամենուն տաղեւ կը խայտառակէ զինքը՝ գրած ու իրեն ուղղած նամակը կարդալով. երեւակայէ՛ թէ ի՞նչ կ'զգայ Մարկրիտ այս միջոցին . . . : Հազիւ քանի մ'օր անցած է և ահա խեղճ աղջիկն հազիւ կարող է սենեկին մէջ պարտի, վերջին անդամ տեսակցելու համար իւր բարեկամուհիներէն միոյն միջոցաւ լուր և աղաչանք կը դրկէ Արմանի, որ նոյնպէս հիւանդ ու ցնորած, աշխարհէ զգուած, ախտովախտով կ'անցունէ օրերը, յիշելով Մարկրիտին զինքը խարելը. այս լորյն և աղաչանաց վրայ իւր բոլոր զգացուները կը բորբոքին, կը թռի, յուգայ Մարկրիտին տունը, այն պահուն յորում Մար-

կրիտ իւր սիրոյն վրայ երազելով և ինքնին խօսելով տկարաքայլ կը սլտրտէր սենեկին մէջ. բժիշկը ժամ մ'առաջ մեկնած էր քոյլէն գլուխը տրտութեամբ որորելով և սպասուհոյն կամաց մ'ըսելով թէ հիւանդին ապրելու ժամնը շատ քիչ են: Արման կը մտնէ սենեակը առանց ձայն հանելու և առանց Մարկրիտին տեսնուելու, միշտ այն համոզման թէ իւր սիրուհին զինքը խաբած է: Բայց երբ անոր ինքնիրեն և տկարու մեռելական ձայնի խոստովանութիւնները կ'իմանայ, երբ աչօք կը տեսնէ որ Մարկրիտ այսպէս միայնակ մնալով իւր վրայ միայն կը խորհի ու կը խօսի, յառաջ կ'անցնի և ՄԱՐԿՐԻՄՏ, կ'ըսէ . . . : Կարելի չէ իրենց այս անդամի զիրկընդխառնութեանց տեսարանը նկարագրել. Մարկրիտ հորդան կուտայ իւր զգացմանց ու լեզուին անքան այնպէս, որ Արմանի գրկաց մէջ կ'աւանդէ հոգին . . . :

Սառափկ այս է խաղին նիւթը:

Բայց, եթէ գիւտնաս, Սառա Պէրնար ի՞նչպէս կը ներկայացնէ իւր զերը, ի՞նչ հրաչալի շարժուածք մարմեոյ, որպիսի վեհութիւն խօսքերուն մէջ, որպիս սի անձառ անձնութիրութեան ցուցումն տու իւր սիրահարն, եթէ, կ'ըսէր, այս ինոչ գերասանական հանձարին վրայ գաղափար ունենաս, անհնար է որ տեսնել չուզես իւր ներկայացումները. ես շատ թատրերնել չուզես իւր ներկայացումները. ես աղ քանի գութեանց ներկայ գանուեր ևս Պօլիս, հոս ալ քանի մը անդամ թատրոն գացի, բայց ոչ միայն Սառա Պէրնարի հաւասարող չեմ գտած, այլ այնքան կատարելութիւն չեմ երեւակած անդամ. երբ կը խօսի, ձայնին ելեւէցները, արտասանութեամց փափկութիւնն ու զմայլեցուցիչ հրապոյը կարծել կուտան զմարդ ոչ այս գրկրիտ վրայ, այլ արքայութեան մէջ, ես որ այսպի-

սի բաներու անդգայ եմ, քանի անդամ արտասուեցիր
... և արտասուողներուն վերջինն էի :

Ժամը ինն էր, երբ թատրոնին տուն վերադաշտայ բամբ
Ա. Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ

Առ Տ. Եղիա Տեմիրճիպաշեան :

Յ Յունվար 1884

Մեծապատիւ Եֆէնտի ,

Ընդունեցայ Զեր գեղեցիկ նամակն և զգածուելով
կարդացի զայն, վասն զի անկեղծութեան դժումը կը
կրէր, թէւ իրաւ է թէ գովեստներ շուայլած էիք ինձ,
բայց այդ առատութիւնը Զեր երիտասարդ հոգւոյն
խանդին կը վերադրեմ. և ոչ թէ շողոքորթական նը-
ւաստ կամէութեանց :

Դուք կը հաճիք որ և է գրութիւն լինդրել ինձմէ
այնպիսի թախանձալից ձայնիւ, որ անշուշտ անմիջա-
կան աղղեցութիւն մի պէտք էր ունենալ և Զեր ու-
զած արդինքը արտադրել : Բայց եթէ հակառակը
նշմարե՛ք, մի նեղանաք, կ'աղտչեմ, դուք անձամբ
դատեցէք :

Ես մէն մի անդամ որ գրած եմ՝ հաստատ գաղա-
փար մի և կամ լաւ ես ըսեմ հաւատքս յայտնելու դի-
տաւորութիւն ունեցած եմ, անփոյթ ըլլալով գովեստ
ընդունելու կամ քննադատութեանց ենթարկուելու .
բաւ է ինձ որ ես գոհ ըլլամ խղճիս դատաստանին
առջեւ :

Որ և է հաւատք անկեղծութիւն է, և անկեղծու-

թիւնը բարձրայօն կրնայ կանգնիլ ամէն ժամանակ .
սուար միայն կորագլուխ քայլելու սահմանուած է :

Հաւատքս հոչակեցի տկար ձայնիւ, իրաւ է, բայց
վերջապէս հոչակեցի, քաջութիւնս սոյն հաւատքէն
քաղելով նոյն խկ . առ այժմ ոչինչ ունիմ ըսելիք,
ուրեմն ի՞նչ կ'ուզէք որ գրեմ : Սակայն առաջին ան-
գամ որ զգածուիմ որ և է պարագայէ մը՝ կը խոսսա-
նամ գրելու, և գրութիւնս Ձեզ յղելու . այո՛, զայդ
կը խոսսանամ սիրով : Կը տեսնէք անշուշտ թէ յօժա-
րութեան թերութիւնը չէ յիս այլ կարողութեան, ո-
րով վստահ եմ Ձեր ներողամսութիւնն ստանալու :

Բնդունեցէք, և լու :

Որբոհէի Տիեզրիք

Բարիդ 7 Ապրիլ 1882

Արմելի Եղիա ,

Հազիւ երկու ժամէ ի վեր չողենաւս հեռացած էր
Վագիորի ախունքէն . արեւը մարը մտած էր արդէն և
մութն կը թանձրանար տակաւ տակաւ . նոյն օրն մեծ
ցնցումը կրած էր հոգիս . լալով բաժնուած էի - առա-
ջին անգամ լինելով, ընսանեցս գրկէն, և միայնակ,
դեռ ոչ խկ քսանեմեայ, ես կը հեռանայի այն աս-
պլնջական յարկէն, ոյր տակ անցուցած էի մանկու-
թեան և պատանեկութեան տարիներս, տարիներ ան-
մեղութեան և երանութեան . կը հեռանայի . . . ա՛ւ
մնարիս մօս չպիսի գտնէի հոգտատր մայրիկս, ա՛ւ
չորջս չոլիսի տեսնէի խանդադասանքի ժողովաներն ,
չորջս չոլիսի տեսնէի

ա՛լ զրկուած պիտի մնայի ընդերկոր ընտանիքէս և
բարեկամներէս , կ'երթայի հեռու , շատ հեռու քաղաք
մը , ուր , ո՞ գիտէ , ի՞նչ փորձութիւնք և աղջոք ինձ
կը սպասէին . ուր , անփորձառու և առանձին , պիտի
ստինգուէի մարտ մղել ինձ սպասնացող անհամար հրա-
պուրանաց գէմ . այս տխուր գաղափարներն , դիշեր-
ուան մթութիւնը և Աւ ծովու ներգործած առաջն
տպաւորութեան հետ խաւն , սոսկում աղդեցին ինձ .
յանկարծ ուղեցի ետ գառնալ , գառնալ խաղաղու-
թեան գիրկը , զոհելով ուսումն ու ասպագայն . այլ
ֆանակ յառաջ կը խիզախէր և անփիին անհմիւր շրջանն
ֆանացնէր զիս ծննդավայրէս . աչքու յառած էի
կը հեռացնէր զիս ծննդավայրէս . աչքու յառած էի
այն կողմն , ուր գեռ կը տեսնէի ֆէնէրի կանթեղին
լոյսը , որ տակաւ կ'աղօտանար , տեսայ թէ անհնար
էր ետ գառնալ , բայց հա՛րկ էր մարդ լինել . որոշեցի
վանել սե խորհուրդներու բնթերցմանի . ձեռքու զըր-
պանս տարի և անդ գտայ նամակդ , երթաս բար-
եաւի միակ գիրն , զոր ստացայ քաղաքէդ միկնե-
լէս յառաջ , կարդացի զգայուն տողերդ , որք սփո-
վեցին զիս , մանաւանդ այն տողն ուր դրած էիր ,
« Գնա՛ , հետիկդ ըլլայ Աստուած . . . » :

Այստ , եզիս , ըսկ ինքնին . իրաւունք ունիս , պէտք
ունիմ Աստուածոյ օգնութեան , այլ քանի որ քեզ պէս
առաքինի սրտէ մը այդպիսի մաղթանք մը ինձ կ'ուղ-
ղուի , Աստուած հետիկս է . պիտի պաշտպանէ զիս . . .

Նոյն օրէն ի վեր այդ նամակդ ծոյս կը պահեմ և
երբեմն կը կարդամ զայն . նոյն տողերը միշտ կը զո-
րացնին սիրսս և խրախոյս կուտան ինձ :

Վեց ամիսէ ի վեր կը հետեւիմ իրաւագիտական
դասերուն . կ'աշխատիմ որքան կարելի է , զիշերն
խասնելով ցերեկուան : չգիտեմ պիտի յաշողիմ , այլ

խիդս հանդարտ է , քանզի պարտքս կը լնում : Բա-
րեզ չհրապութեց զիս , կը տեսնեմ թէ կամք ունեցող
երիտասարդէր մը համար հնար է աստ ապրիլ անվնաս
և առանց վէրքի աղատիլ ամէն կողմէ արձակուած
թունաւոր սլաքներէն :

Եղայրդ

ՀՐԱՅԻ ԱՍՏՈՒՐԻ

ԲԱԽԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ :

Գաղատիա , 29 Յունիս 1885

. . . Տէր ,

Յուսամ անհոգութեան կամ անքաղաքավարութեան
արդիւնք համարած չէք լութիւնս փոխարէն Զեր-
չքնաղ նամակին , զոր այնքան բերկութեամբ ստա-
ցայ անցեալ տարի և զոր բառ առ բառ կը միշտ ամէն
օր : Կան սրտեր որք զիրար կը հասկնան , և Զերն ան-
շուշտ գուշակած է որ առ Զեր խորին յարդանաց ըզ-
գացում մի առիթ տուած է գրոյս յապաղման : Զի
գուք ծայրայեղ ներողամտութեամբ դատելով գրա-
կան դոյզն աշխատութիւններս , պատիւ ըրած չք ինձ
առաջարկել որ շարունակեմ զայս Զեր խմբագրու-
թեան ներքեւ հրատարակեալ պատուական Երկրա-
գունուի աշխատակցելով :

Քանի՛ երախտագէս զգացմամբ համակուեցայ այն
բարձր պատույն համար , որով կը հաճէիք չնչին ա-
նունս այնքան մեծ անուններու քով արձանագրել ,
առկայն ընդունելութեանս հետ այս մասին զգացած

ուրախութիւնս կը փախաքէի գործնապէս ապացուցաւ նել , կցելով պատասխանիս տաղ մի կամ մի յօդուած :

« L'homme propose et Dieu dispose » .

Յարդ ընտանեկան զբաղմունք չը ներեցին ինձ սոյն իղձս գործադրել : Այլ փոխուեցաւ սոյն վիճակն ալ որպէս կը փոխուի ամէն ինչ : Այն օրէն ի վեր որ մեկնեցայ Պրուսայէն և գերծայ տաղակալի հիւրեր ընդունելու տանափինական պարաքէս , գործես սկսաց չնչել աղատ , և աստ ամուսնոյս հայրական տունն վեր ըստացայ նոր ընտանեացս քով այն մանկական վիճակն , զոր երբեմն ծնողացս զիրիկն կը վայելէի : Աստ կ'զբազիմ ըստ հաճոյս ընթերցանութեան , և ընթեռնուով սիրելի ընկերութեանց մէջ ապլիլ է ինձ համար : Ուստի կը փութամ վերսկիլ գրական պաշտելի կեանքս և կը յուսամ կը ներէք ինձ որ առաջին գործս թարգմանութիւն մը լինի , մինչեւ կարենամ բաւական վստահութիւն դանել յիս բուն իմ ներշնչմամբք հրապարակ դալու :

Ուստի կը յդեմ ներփակեալ Լամարթինայ մի քերթուածն զոր Զեր միջոցաւ ընթերցած եմ երբեմն , և կը ձօնեմ բարեկամունեացս միոյն : Նորա անունն առ այժմ ծածուկ է մեծ քերթողին դիւցազնունոյն նման , և ինքն չքնաղ է և հանձարեղ է իրբեւ Դայն :

Առ Զեր երախտագիտութեանս յարատեւման աղացոյց մի կը համարիմ հաւատալ որ միշտ միեւնոյն ներողանութեամբ պիտի դատէք զիս և չնորհ ընէք հիւրինկալել սոյն տաղն Զեր անդին թերթին մէջ , ընդունիք նաեւ մշտառե հիացմանս և խորին յարգանացս հաւասարին :

Որով միամ Զերդ ի սրտէ
ԶԱՊԵԼ Կ. ՏՕՆԵԼԵՆ

[Երկրագուն]

Հարսանեկան շնորհաւորացիր :

16 Փետրուար 1898 ԺԸՆԷՂ

. . . Սիրեցեալ բարեկամ ,

Ուրախութեամբ կարդացի Զեր նամակը , որով կ'աւետէք ինձ Զեր երջանիկ ամուսնութիւնը :

Զեղմէ աւելի ե՛ս բարեբախտ պիտի համարէի ինքզինքս կարենալով անձամբ ներկայ ըլլալ Զեր հարսանեաց հանդիսին ու բանիւ բերանոյ յայնուով իմ իղձերա Զեր ու անոր զոր կենակից ընտրեցիք Զեր :

Պէտք է ըսեմ թէ Դուք իմ շատ սիրած բարեկամներէս մին էք , ու միանդամայն այն պաշտօնակիցներէ զորս ամենէն աւելի կը գնահատեմ իրենց խղճամիտ գործունէութեան , իրենց յառաջադէմ ճգանց , արդիւնարար վաստակոց ու բարոյական ազնիւ հանգամանաց համար :

Սւելորդ է ըսել թէ ո՛րքան փափաքով էի ու եմ միշտ Զեր երջանկութեան : Այն սրտազեղ ուրախութիւնը ուրով կը ծանուցանէք ինձ Զեր հարսանիքը՝ ցոյց կուտայ թէ Զեր սրտին ու Զեր իղձերուն համաձայն է միութիւնը զոր կազմեցիք և թէ Զեր ու Զեր տան համար երանութեան աւետարեր հրեշտակ մը կը տեսնէք այն էակին վրայ որ իր բախտը կցեց Զերինին հետ :

Զեր ուրախութեան սրտավին հաղորդ , կը մաղթեմ որ Զեր կնքած ամուսնական գաշնը իրացնէ լիովին Զեր պարկեշտ ու բարեկեր հոգւոյն բոլոր իղձերը :

Իցիւ Ամուքդ սիրայօդ ձեռն ի ձեռն քայլէք միշտ

ընդ երկայնութիւն կեանքին, իրարու քայլերուն քաղցը զօրութիւն ու նեցուկ թանկագին, վարդեր քաղերով ու վարդեր իրարու նուիրելով, ցաւոց փուշերէն Զեր մատներ ու ոտներ անխոց ու անվէր, ու Զեր գլխոց վերեւ Զեր երկնքին աստղեր միշտ շողուն անստուեր, Զեր առաջին օրերու ուրախութիւնքն միշտ թարմ տեւական, ու միմեանց սկրոյն մէջ Զեր գտած երջանկութիւնն աճեցուն այն քաղցրութեամբ. զոր Զեր ասն անոյշ պատողք Զեր սիրոյն, անթիծ պատեկերք Զեր հոգւոյն :

Ահա! այն անկեղծ ու ջերմ բարեմազլթութիւնքն զորս Զեր նոր կեանքին համար կը նույլիէ Զեզ բարեկամ մը օտարութեան՝ բայց նաև սրտագին սիրոյ լուրէն :

իմ զգացմանց մասնակից է և Տիկին Պէրպէրենսու որ նոյնպէս այս բարեբաստիկ առթիւ իւր յարգանքն ու մաղթալից չնորհաւորութիւնքն կը մատուցանէ առ նոր բապակ Ամոյդ :

ի վերջոյ, չնորհակալ ըլլալով Զեզ Զեր նամակաւառ մեզ յայտնած Զեր սիրոն ու իդձերուն համար,

Կը միայն զեզ ոնդմիշտ բարեացակամ

թե զարգացնեն

Նամակ առ Արժ. Տ. Յովհ. Աւագ բահանայ Մկրեան՝
նորս Յակոբի որդուոց մահուան տոքի :

ՈՐԴԵԿՈՐՈՅՄ Հայր,

Գալիսան զուարթաբեր առաւօտ է, Ծալկաղարդի աօնն էր, մինչդեռ աշխարհ կը ծալկաղարդէր, քո ծալկիդ խամրեցաւ, ո՞հ, և մինչ մանկախն ձիթաստան-եաց լերան վրայ Ովսաննայ կ'երգէր, մինչ եկեղեցին կը հրձուէր, դու Յակոբիկիդ կուլսս և ինձ դոյժ կու-տաս որ իբրևու զհայրդ կը սիրէի զինքն, և ո՞վ չէր սիրեր այդ աննաման զաւակդ, որ իւր ամէն աղնիւ ձիթքերով սիրելի եղած էր ամենուն: Եւ զիտեմ, դու անհնարին կը վշտակրիս և կը խռովիս թէ ինչո՞ւ հա-մար շուտ խամրեցաւ նորպայս գարնան ծաղիկդ: Դու կը հաւատա՞ս, Հա՛յր, թէ ծառերու և ծաղիկներու զար-դարիչ մշակը՝ նախախնամութիւնն է, և նա է որ մահ-կանացուաց աշխարհէն կը աեղափոխէ անմահութեան աշխարհին և դրախախն մէջ կը անկէ, և ո՞վ կարող է կամ իրաւունք ունի նախախնամողին ձեռք բռնել, որ խկապէս ծաղիկներուն դարմանիչ տէրն է:

Մի քանի օր առաջ զՅակովիկն տեսայ, ոս գրաս
թէ կուռեր իւր անձնն դէմ և երկնից դէմ կ'ոգորէր .
թէ կուռեր իւր անձնն դէմ և երկնից դէմ կ'ոգորէր .
Հողին ներքուստ կը հեծէր, շրթունքները կափկափե-
լով կը պահառէր . «Տէ՛ր իմ, կ'ասէր, դեռ մասալ
լով կը պահառէր . «Տէ՛ր իմ, կ'ասէր, դեռ մասալ
մանուկ եմ, նոր եկայ աշխարհը, թող որ տեսնեմ թէ
բնչ կայ . ես լոյս կը սիրեմ, առաքինութեան ասպա-
քնչ կայ . ես լոյս կը սիրեմ, առաքինութեան ասպա-
քնչ կայ . ես լոյս կը սիրեմ, ի բարոր սրտէ յառաջդիմութիւն կը
բեզ նոր մաեր եմ, ի բարոր սրտէ յառաջդիմութիւն կը
սիրեմ . ոհ, մրցանակս մնաց, թող տուր ապրիմ նը-
սիրեմ . ոհ, մրցանակս առնում և ապա մեռ-
պատակիս հասնիմ, մրցանակս առնում և

նիմ» : Յառաջդիմութեան սիրահար Յակովը , ա՛հ , մինչեւ քու տագնապի և մահուն օրը զիր սիրեցիր , ու գրիչ սիրեցիր և յառաջդիմութեան կարօտով մեռար : Յակովին գրիչը՝ ձեռքը տուէք , այնպէս զրեք ի գերեղման . թող երթայ երկնից դպրութեան մառանը , հրեշտակներու հետ պարապի , երգէ ու զրէ :

Հա՛յր , կ'աղախեմ , ողջոյն տուր Յակովիկիդ , ես չեմ կարող ժամանել և չեմ հանդուրթել նորա դադաղը տեսնալ : Համբուրէ՛ այն պայծառ ճակաար , որ յառաջդիմութեան նշան կուտար և մահուան ժաման ձեռքն եղծեց զայն : Համբուրէ՛ այն գրասէր աշերը որ քննիրց մանէն լուսանոււաղեր էր . և գիտեմ թէ քանի՛ անձկութեամբ կը սպասէր . որ իւր վաստակաւոր մատանց երկասիրութիւնը (*) տեսնայ և այնպէս մեռնի և միթէ ուխտէ՞ր էր մանկուոյն ընծայ մը տալ և միաս բարով ըսել :

Սորա համար , Հա՛յր , քո վիշտն անկշիռ է և ո՞վ կարող է դքեզ և քո ցաւերդ սփոփել :

Այլ միմիթարեաց , միմիթարեաց , դու Քահանայ Տեառն ես , Քահանայ ես Քրիստոսի եկեղեցւոյն , անմահութիւն և արքայութիւն կը քարոզես , ձեր մեծ կոչումն է , որ սպաւորները միմիթարես : Պլաստի գնա՛ սեղանոյն առաջ զոր կը պաշտես դու , քու ձեռքերդ վերաբրած տարածէ՛ , լի հաւատով դոչէ՛ Ոսկերերաշին վերօհնութիւնը .

« Փա՛ռք քեզ , Աստուած , փա՛ռք քեզ , յաղագս ամենայնի » . Դարձի՛ր ի տուն , սփոփէ՛ Յակովիկին սգամեռ մայրիկը , որ քան զքեզ առաւել կ'աղեկիզե՞ և կը մորմոքի . զի մայր է , և մօր զորովն անհուն է :

1876 Մարտ 28

(*) Նախաշատիդ Գիտութեանց և Արուեստից :

Դարձեալ ցաւակցական նամակ առ Տ. Յ. Աւագ յահանայ Մկրեսան՝ նորա Համասիիւու աղջիան մահուան առքիւ :

Տէր Հա՛յր ,

Զեր չնորհալի դստեր Համասիիւոին հիւանդութեան , մահուան և թաղման օրերուն գտնուեցայ առ Զեզ , բայց զիտնալով Զեր առաքինութիւնը , Զեր արդէն վշտակրութեան վարժութիւնը , և Զեր խաչակիր պաշտօնին հետ՝ կեանքի ձախորդութեանց , ցաւոց առջեւ կուռ արիութիւնդ , որոց կը տանիս քրիստոնէաբար և օրինակելի համբերութեամբ , ի՞նչ կրնայի խօսիլ Զեզ :

Դուք Աւետարանը զիտէք , Աստուածաշնչէն ներշնչեալ էք , յաւիտենական կենաց բանին աշակերտ , և աշխարհի յաղթող զօրագլխոյն կամաւորն ու պաշտօնեայն էք . սիրու ունիք , միտք ունիք , հոգի կը կրէք , կ'ուսուցանէք , կը հաւատաք , կը գթաք և կը միմիթարէք :

Եւ , ինչպէս առաստ էք դուք Զեր բարեկրօնութեամբ այնքան առաքինութեանց մէջը , նոյնքան առաւելութեամբ կը փոխարինուիք նաեւ առաքինասէր դասերէ . ամէն անդամ երբ պատճառ ունեցած էք լալու , հազարաւոր ականողիք իր արտառուքներ խառներ են Զեր լացին , հազարաւոր սրտեր վշտակցած են Զեր վշտակիր սրտին :

Կարեկցութիւն՝ սփոփանք մ'է ցաւ ունեցողին , և բարեկամին արտառուքը սպեզանի է խոցեալ հոգիներու : Կըսեն թէ կղերն անկարեկից է , մանաւանդ կու-

սակրօն կամ ամուրի կղերը : Սուտ է : Միթէ քարէ՞ն
ծնած է նա : Ո՞չ ապաքէն մօր մը ստինքէն մնած է ,
անոր արիւնն ու կաթն կեանք տուած են իրեն . քոյ-
րերու և եղբայրներու խանդաղատանքը տեսած է . իր-
տանն ու գրկիցին , բարեկամաց ու ազգակամաց բերկ-
րանքն ու ցաւերը կրած է . մանաւանդ երբ ժողովը դրդ-
եան մէջ ապրած ոք է , ծնողէ մ'աւելի ընդարձակ և
խոր կ'զգայ նա ցաւն ու վիշտը :

Ես մանուկ էի , և երբ մեր այգեստանեայց նորա-
տունկ խաղողոյ որթերը կը յօսէին , կաթիլ կաթիլ
զուլալ ջուր կը կաթէր կտրած որթէն . մայրս կ'ըսէր թէ
« Այս որթին մայրը , խաղողին կոճղն է կուլայ , անոր-
արցունքն է որ կը թափի » : Երբէք չեմ մունար այս
գթասրտութեան քնքուշ բարոյականը . միշտ կը յիշեմ
այս գորովական մայրական դամն , երբ կը աեմնեմ հօր
մը և մօր մը աչքի առջև ինկած իրենց զաւկին դիակը :

Միթէ այդ որթի փայտէ աւելի անզգայ է կրօնա-
ւորի մը սիրտ . ոչ , ոչ , Տէր Հայր , սրտին երկու վի-
ճակ կայ , երբ յանհունս կը զգածուի զգայուն սիրտ .
մը , կամ չափազանց փղձկելով կ'արտասուէ ու ցա-
ւագին ողբեր կ'արտասանէ , կամ իր կսկծանաց իու-
րագոյն ծովին մէջ կ'ընկլուի , աչքերը կը ցամքին , ւ-
զուն կ'ընդարսանայ , և զգայնութիւնը կը հեղձու :
Բայց անզգայ լինել անհաւատալի է : Ես ի քեզ նայե-
լով , այս վերջին վիճակն ունէի . դեռ այսօր կցկտուր
քանի մը տող աւասիկ կը գրեմ չամասիւրիդ յիշա-
տակին , չանդուրմելով խօսիլ ձեզ բերան առ բերան ,
այլ սրտէ սիրտ , ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ միմի-
թարութիւնը մաղթելով թափագին ծնողական Զեր-
սրտի խաչակիր Տէրտէրիդ և խաչաչարչար Տիրուհոյդ :

Գուղկունձուք , 1884 Յունիս 28

Հոգւոյ անմահութիւն :

Սիրելի՝ Մամուրեան ,

Տիուրէր , շատ ախուր տպաւորութիւն ունեցաւ սըր-
տիս վրայ՝ նորհալի հարսիդ՝ աղնիւ Մարիին մահուան
լուրն : Սրմնցան յիշողութեանս մէջ իւր մանկական
հասակի , իւր գպրոցական կենաց չքնաղ յիշատակներն
— զուարթութիւնն , սրամտութիւնն , գօնսութիւնն ,
պարզապիրութիւնն , գեղեցկախօսութիւնն , արթնու-
թիւնն և ամեն կատարելութիւններն , որոնք կը փայ-
լէին իւր վրայ իբր չնորհաց ցոլմունքներ :

Աղնիւ էր իւր վրաք ու բարքն , քաղցր էին իրեն
համար կրօնական և բարոյական դասերն : Այսպէս որ ,
կարելի է ասել թէ կ'արտածէր ինչ որ արդէն ունէր
քան թէ նոր բան կ'ուսանէր : Անշուշտ կը յիշէք եւ
Դուք , Սիրելի՝ Մամուրեան , որ թէև աւարտած էր իւր
ուսման ընթացքն , բայց գպրոցէն չէր հեռանար : Կըր-
քան Օրիորդաց Ընկերութեան կ'անդամակցէր և իւր
բարեհամբոյլ բնաւորութեամբ ամենուն համակրանքն
կը գրաւէր :

Այս վիճակին մէջ էր Շնորհաշուք Մարին , երբ եւ
իզմիրէն մեկնեցայ : Մեծ եղաւ ուրախութիւնն , երբ
յետ ժամանակաց լսեցի թէ՝ նշանախօսուած է Զեր
աղնիւ զաւակին՝ Հրանդին հետ : Սիրոյ և ձանաշողու-
աղնիւ զաւակին՝ Հրանդին հետ : Սիրոյ և ձանաշողու-
աղնիւ զաւակին՝ Հրանդին էր այդ , ինչպէս որ եղան
թեան նշանախօսութիւնն էր այդ , ինչպէս որ եղան
աղանդ սիրոյ և ձանաշողութեան ամուսնութիւնն ,
աղանդ սիրոյ և ձանաշողութեան ամուսնութիւնն ,
հեռի ամէն չահամբական միտունիերէ , հեռի արտաքին
որեւէ աղդեցութենէ , որոնք շատ անզգամ պատուան-
դան կը լինին ամուսնութեան և շատ անզգամ կը գառ-

նացնեն այն քաղցրութիւնն, զոր սիրոյ Աստուածն հաւած է դնել ամուսնութեան մէջ .

Այս, ո՞չափ ուրախ էի, երբ կը չնորհաւորէի այս ամուսնութիւնն : Խնչպէս կը խայտար սիրս և կը սահեր գրիչս, քանզի Հրանդ և Մարի սաներս էին և անպատում էր ցնծութիւնն : Խսկ այսօր, ո՞հ, այսօր, ըստիսուած եմ միմիթարական գրել Մարիի մահուան առաթիւ : Ի՞նչ գժուարին պաշտօն, արտասո՞ւք սրբել՝ թէ միմիթարական գրել . լա՞ թէ սփոփել : Ո՞հ, ո՞չափ հոգեւոր զօրութիւն պէտք է, որ մարդ, մարմնոյ մի գեղեցիկ և կենդանի շինուածքն քայքայուած տեսնելով, կարող լինի նորա հանդէպ բարձրացնել, պատկերացնել հոգւոյ անսահութեան գեղածիծաղ տեսարանն և առ այն գրաւել սգաւորներու թախծեալ սրտերն ու արտասուաթոր աչքերն : Ո՞չափ գժուարին է ներկայի ազգեցութենէն կորպել, յափշտակել սիրսն և յապագայն սեւեռել : Ո՞չափ տկար է այս մասին մարդն և ո՞չափ տկար էին մանաւանդ հին աշխարհի զօրաւոր կարծուածներն անդամ — Սոկրատ, Պլատոն, Արիստոտել եւ այլք : Արդարել՝ մարդ տկար է ինքնին, յոյժ տկար, մարմինն կը ծանրանայ իւր վրայ, հողեղին յարկն կը հակէ իւր միտքն եւ չթողուր բարձր թռիչներ ասնելու : Բայց կը զօրանայ մարդ եւ կը յաղթանակէ հոգին, երբ զօրալիզն կը կոչէ իւր տկարութեան Աստուծոյ օգնութիւնն, հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ ոգեւորութիւնն, երբ կը խոստովանի թէ՝ Աստուած իւր սիրելի Որդոյ մահուամբ եւ յարութեամբ պարզած է մարդկային կենաց մթութիւնն . փարատած է այն սոսկումն, որով մարդ կը սոսկար, կը զարհուրէր դաշգալին հանդէպ, գերեզմանական խորխորատին հանդէպ : Լուծած է այն գաղտնիքն, որ կը կոչուէր կենաց

եւ մա՞սու գայիտնիք : Իւր Աւետեաց զրքով — իւր Աւետարանաւ — միմիթարութիւն սփուած է . մա՞ն՝ մարմնոյն յաակացուցած է, իսկ կեանքն՝ հոգւոյն : Մարմինն կը մահանայ, իսկ հոգին կը շարունակէ իւր կենդանութիւնն նոյն խսկ յեւ մահուան : Հողն կը հողանայ . իսկ հոգին, աստուածային շունչն՝ առ Աստուած կը դաւնայ :

Ի՞նչո՞ւ մեւնի հոգին . ի՞նչո՞ւ անհետի բարին, ձչմարիան, գեղեցիկն : Ի՞նչո՞ւ իրենց բուրումներն չծաւալինն թէ՝ աշխարհիս վրայ և թէ՝ անդր քան զայս աշխարհ : Ի՞նչո՞ւ սահմանուի, ի՞նչ որ անսահման է : Ի՞նչո՞ւ հողին մէջ պարփակուած կարծուի, ի՞նչ որ մարմնոյ դագաղին մէջ իսկ չէր պարփակեր — կը խոյսնար, կը սլանար, տիեզերքն կը զննէր, կեանքն կը քննէր, կը հաւատար, կը յուսար, կը սիրէր, և ի՞նչո՞ւ անսահման շարունաշուի այս հոգեւոր կեանքն :

Ոյո՛, այո՛, սիրելի՛ Մամուրեան, հոգին չմեւնիք, կը շարունակէ իւր կեանքն անդր քան զգերեզման : Հոգեւոր կենաց պատովներն մահ չունին Բարութիւնն, քաղցրութիւնն ; մարդալիրութիւնն գերեզման չունին . կը մեան արտաքոյ գերեզմանին . կը յիշուին խանդաղատանոք, կը յիշատակուին տարիներով և դարերով և ահա սկիզբն է այս անսահութեան, սկիզբն է յաւիսենական կենաց :

Արդ՝ սիրելի՛ Մամուրեան, յօգնութիւնն կոչենք միմիթարութեան Ա. Հոգին, որ կարող է զօրացնել մեր տկարութիւնն, փարատել մեր վհատութիւնն, սփոփել մեր սիրսն, պարարել մեր հոգին անսահութեան ու Կամք Տեսուն օրինեալ եղիցի :

Ի՞նչ որ Զեղ կը գրիմ, սիրելի՛ Մամուրեան, կը

գրեմ ազնիւ Հրանդին , զգայուն Մարիամին , Վահեին ,
և հանգուցելոյն բոլոր արենակցաց և մերձաւորաց :

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Քատը -քէօյ 12 Յունիս 1896

Բարիզ 1 Սեպտեմբեր 1882

Պղտիկ Լեւոնիկ ,

Ո՞վ ես դուն նայիմ որ քեզի նամակ գրեմ , ո՞րչափ
ատեն եղաւ որ կաթ չես ուտեր կոր : Դու հօրդ մօրդ
գրկէն վար իջած չունիս . հօրդ գիրկը քու աթոռող է :
Երբ կը քայլես աներեւոյթ ողիներ կը թեւապարեն ու
կը պահեն քեզ որ վար չիյնաս : Դուն չես խօսիր , այլ
կը ճուրշտաս , դուն չես մտածեր այլ կ'երազես , դուն
երբ լաներ կ'ըսես՝ երկինքի հրեշտակները կը հասկը-
նան զանոնք . թոշո՞ւն ես թէ հրեշտակ . կուլա՞ս թէ
կը ինդաս , այն ալ յայտնի չէ , լալով կը սկսիս , երգե-
ւով կը վերջացնես : Երբ աչքերդ մեծ մեծ կը բանաս՝
երկինքին կը նայիս թէ մարդոց , ո՞վ կրնայ ըսել : Երբ
թաթիկներդ կ'երկնցնես՝ հայրիկդ կը կարծէ որ իրեն
համար է , այլ ես դիտեմ որ գլխուդ վերեւը կապոյտ
կը տեսնես , անո՞ր կ'երկննաս : Երբ պարտէղ իջնաս՝
ոչ փշոտ վարդ կ'ուզես որ քաղես , ոչ թեթև թիթեռ-
նիկ կ'ուզես որ բանես , լուսինը կ'ուզես որ տան քե-
զի ու չես մտածեր թէ ո՞րչափ բարձր է անի : Քեզի
համար ամեն բան կարելի է ու կը զարմանաս իրաւամբ
թէ ի՞նչ ուրիշ լաւագոյն բան կրնան ընել մարդիկ

քան թէ միայն քեզ սիրել ու քու ամէն կամքդ կա-
տարել :

Իրա՞ւ է արդեօք . իմ ճանչցած լեռնս այսպէս էր :
Բայց անկէ ի վեր երկու տարիներ ու չորս այ ամիսներ
անցան : Կարծեմ հիմա այն տարիքն ես , կամ ոչ շատ
հեռի , ուր երուանդ իմ տունս եկաւ : Մեծցար ուրեմն :
Բայց դուն ո՞ւր ես , ես ո՞ւր : Դուն տակաւին մարդուն
ու հրեշտակին մէջ անորոշ բան մըն ես : Դուն վարդէ
Ճրթոնքներ ունիս վրայէն հպելու համար կենաց բա-
ժակին որ վրա՞ն միայն անոյշ է : Դու զմայլմանց մէջ
կ'աղրիս , քու երկինքիդ վրայ աստղունք կը փայլին
անհամար , դու խնծիղն ես ու կայտիս , քու՝

ի ճակատդ ազնիւ
Եւ ոչ մի կնճիռ
Եղլնգամիր ժըմիրհ
Ոչ գըրեց վաղիւ :

Հապա՛ երուանդը , պիտի ըսես հիմա :
Ա՛հ , երուանդիս խօսքը մի՛ լներ . . .
Աստուած Զեզ պահէ :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԹՂԹ Ա. ՏԱ. Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Թղթատարութիւնը հասարակաց մեծ գործ մ'է. իւլ պաշտօնն է նամակներու փոխանակութիւն, որ անհրաժեշտ է վաճառականութեան և ճարտարութեան պիտոյից : Նա հաւասարապէս գոհացում կուտայ թէ՛ ընտանիկան և թէ բարեկամական շահուց : Վերջապէս կը դիրացնէ ժողովրդոց մէջ յարաբերութիւններ :

Ուրեմն իրաւամբ ըսած է Վոլգեա . « Թղթատարութիւնն ամէն գործերու, ամէն վաճառականութեանց կապն է . անով բացակայք ներկայ կ'ըլլան: Սյն՝ սիու փանք է կենաց » :

Թղթատարութիւնը ստիպողական պէտքէ ծնած է և այդ պէտքն է մարդոց իրարու հետ թղթակցին, անմնց՝ որ երեմն միացած էին, իսկ այժմ՝ բաժնուած են : Ուրեմն կարելի է ըսել թէ քաղաքակիրթ աշխարհ պէս հին է այն :

Ցունական հնութեան պատմագիրք կը խօսին ձիաւոր սուրհանդակակաց հանգոյցներու մասին (reais), զորս կիւրոս կարգաւորեց Յիսուս Քրիստոսէ 550 տարի առաջ, իւր հրամաններն հասցնելու համար իւր ընդարձակ պետութեան ամէն կողմ:

Աստուածաշունչը, Եսիերի գրքին մէջ, առհասարակ քանի մը ծանօթութիւններ կուտայ թղթատարական կազմակերպութեան մասին, որ Պարսից թա-

դաւորին օրով կը բանէր երազաձի սուրհանդակաց միջոցաւ : Հոռվմայեցիք ևս, երբ հասատաեցին իրենց անհուն պետութիւնը, զգացին կարեւորութիւնն իրենց բոլոր երկիրները հազորդակցութեան մէջ դնելու : Նոցա չնորհիւ զանազան թղթատուններ հասատաեցան, որոց բազմաթիւ հետքերն մեր օրերն իսկ կ'երեւան :

Բայց ընդհուպ բարբարոսաց արշաւանքը Հոռվմէական կայսրութեան անկումը յառաջ բերաւ, իբրև կուհակ տարածուեցաւ և մարեց ամէն քաղաքակրթութիւն . որպէս այլ հաստատութիւններ՝ թղթատարութիւնն անհետացաւ :

Մեծն կարուս ջանաց իւր կայսրութեան գաւառներուն մէջ հազորդակցութիւններ հաստատել : Բայց անոր մահէն ետք յաջորդները թղթատարութիւնն անկեալ վիճակի մէջ ժողուցին :

Որովհետեւ այն ատեն բոլոր ճանապարհք ապահով չէին, կարելի չէր կանոնաւոր ծառայութիւնն մը հաստատել : Թղթատարութիւնն այս խոսվեալ ժամանակաց մէջ գրեթէ այլ ևս գոյութիւն չունէր. միայն յատկապէս խրկուած սպասաւորներ կամ մէկ քանի սակաւաթիւ անձինք պատգամաւորներու պաշտօն վարելով՝ նամակներ կը տանիելն վասնկներու դիմագրաւելով :

Սակայն բազմատեսակ պէտքեր զգացուցին թէ թղթատարութիւնն հարկ է կիմնովին բարեկարգել . թղթատարութիւնն այս ընդհուցաւ մեծամեծ բարւոքումներ մինայսպէս այն ընդհուցաւ մեծամեծ բարւոքումներ պիտոյից հաշեւ մեր օրերն յօրս արդի ընկերութեան պիտոյից համաձայն ելաւ :

Այսօր թղթատարութիւնն գրեթէ կատարեալ գործ մ'է ամենաուրեք և կանոնաւորուած է 1878 ի Բարիկու Միջազգային թղթատարական Համաժողովին, նոյնպէս 1892 ի Պէռնի մէջ գումարուած Համաժողովին, ուր

Կայսերական կառավարութեան կողմէ պատուիրակ ներս կայացաւ Ազն. Մելքոն Էֆ. Խեղաչեան :

Այսպէս չնորհիւ հիանալի տնօրինութեանց՝ թղթատարութիւնն կ'ապահովէ այժմ աշխարհի հինգ մասամց բնակիչներու արագ, դիւրին և ինայողական յարաբերութիւններ :

Ազքի առաջ ունենալով թղթատարութեան արդի մեծ դիւրութիւններն, տեսնենք այժմ թէ ի՞նչպիսի սուրհանդակներ կային երբեմն Փոքր Ասլոյ մէջ, քազելով Charles Texier ի Univers ի Փոքր Ասիս անուն հմտալից դորձէն :

«Պարսիկները ի Խրիսուպոլիս (յիւսկիւտար) հաստատած էին սուրհանդակներու կայան մը, որ հրամաններ կը տանէին կայսրութեան բոլոր երկիրներուն մէջ, և Հռովմէական կայսրութիւնն այս հաստատութիւնը խնամով կը սրահէր : Օգոստոս կայսրն Պարսից օրինակին հետեւյաւ հաստատէլով Վէնետիանիներու (թղթատար) արհետապետութիւնն մը՝ որ կայտաններ ունէին խոռն մղոնը անգամ մը, հոն կը գտնուէին պահեստի ձիեր՝ որք յոգնած ձիերու տեղ կը գործածուէին, նոյնպէս երկանիւ կամ քառանիւ կառքեր՝ որք մինչեւ հիշմա հաղար լիսլրա ծանրութիւն կրնային կը լծուելու սահմանեալ կենդանիւաց, ձիոց կամ չորեաց թիւը որոշուած էր կամնագրութեանց միջոցաւ :

«Երկանիւ կառքերն 500 լիսլրա կրնային տանիլ սուրհանդակին ձին 50 լիսլրա աւելի կրնար տանիլ ։ Ամառը ութ ջորի կը լծուէին, ձմեռը տասը. երկանիւ կառքերուն երեք ձի կը լծէին : Վաղենսիանոս թող չտուաւ որ այս վերջնոց մէջ՝ երեք հոգիէ աւելի նըստին : Փոխադրութեան այս միջոցներէն զատ կային Վէնետի կոչուած արշաւի ձիեր, որք ահագին հետա-

ւորութիւններ կը կարէին կ'անցնէին մեծ արագութեամբ : Եթէ թամբին և սանձին ծանրութիւնը 60 լիսլրային աւելի ըլլար, տուգանք կար . իւրաքանչիւր կայարան պէտք էր պատրաստ ունենալ քամն ձի, եւ երբեք աւանց ձիու չմնալ : Պարփիկները իրենց ձիերը ձոխ կազմածներով կը հանդերձէին, սանձերը ու պախուցները ուկեղօծ էին : Վերջապէս հասարակութեան կողմէ վճարեալ անասնաբոյժ մը կայարանին մէջ պատօն ունէր :

«Ամէն տարի ձիերու թուոյն մէկ քառորդը կը նորդուէր, և անոնց տեղ նոր ձիեր կուտար նահանգն : Այս սուրհանդակներու չնորհիւ լուրերը կը տարածուէին ամենամեծ արագութեամբ : Ձիերը թամբելու համար միշտ պատրաստ գերիներ կային : Պաշարաբարձ շտեմարաններ կը ծառայէին ոչ միայն սուրհանդակի ձիերու, այլ և այն ձիաւորներուն՝ որք ջոկատ առ ջոկատ կը համբորդէին : Կայսերք խկ փոխադրութեան այս միջոցը կը գործածէին : Տիտոս հիւանդացաւ սուրհանդակց կաց կայանի մը մէջ :

«Մամնաւոր անձինք կայսերաց փոխադրութեան համար ի գործ գրած միջոցը կրնային գործածել պրետորներու պետին մէկ մասնաւոր հրամանագրով :

«Պիինիսո, Բիւթանիոյ պրետորը, շատ իստապահանջ ըլլալ կը թուի այս հրամանագրերը տալու մասին, և Տրայիանոսի կը գրէ թէ բացարձակապէս կարեւոր ծրայիանոսի կը գրէ թէ բացարձակապէս կարեւոր կառքով . այս կերպով զնաց Եվեսոսէն ի Պերկամա . բայց այս ձամբորդութիւնը շատ յոդնեցուց զինքը, եւ Պերկամայի նաւահանգիստ Պիտանային նաև նստաքլւթանիւ երթալու համար :

«Հասարակաց սուրհանդակներու (Սնկարի) այս հաստատութիւնն տակաւ կը սկսէր դադրիլ Բիւղանդական կայսրութեան օրով, պամսդոկապեանները կողմանակցութեամբ և կամ դրամով՝ սուրհանդակաց կրնային ծառայել, և ուզողին իրենց ձիերը վարձու կուտային։ Ճամբանները գէշ ըլլալուն համար սայլերու գործածութիւնն անպէտ դարձած էր։ Վարչութիւնը կը սկսէր խառնակիլ, երբ Օսմանեանք տիրացան երկրին։ Ասոնք ձիաւոր ժողովուրդ ըլլալով՝ իրենց իշխաններն անգործածութեան մէջ չձեցին հաստատութիւնը՝ որուն մէջ ձին զլիաւոր դերը կը կատարէր։ Հռովմէական Մանսիոնիներուն յաջորդեցին Մենցիխաններն, զորս Սուլթան Սիւլէյման բարեկարգեց։ Պրետորներու պետին կողմանէ յանձնուած հրամանագիրներուն տեղ (diplome) անցան պուլյալտուններն, զորս փաշան կուտար և կառավարութեան գործակատարները միայն իրաւունք ունէին ձի գործածելու։ Բայց փոխադրութեանց այս հաստատութեան մէջ վաճառականութիւնն ալ դեր ունէր։ Միւնոյն ժամանակ քարվանսարայ անուամբ սքանչելի պալատներ հաստատեցին, այսինքն կարաւաններու պալատներ։ Այս հաստատութիւնները գետնայարկի վրայ ունէին ընդարձակ ախոռներ, ապրանաց համար մթերանոցներ և առաջին դըստիկոնին վրայ ճամբորդաց համար սենեակներ։ Բնդհանրապէտ այս հաստատութիւններն, այսինքն կարաւաններ, այսպէս որ կարաւանները չնչին գումար մը տալով կ'ընդունուէին։

ՀԵՌԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԱՏԵՆՆԵՐԸ

«Բացի կայսերական հրամանները ցամաքի ճամբով փոխադրելու եղանակէն, Բիւղանդիոյ վեհապետները օդային - գիշերային հեռագրական թել մը հաստատած էին Տարսոսի և Սկիւտարի մէջ։ Առաջին կայսնը հաստատած էին Պուլկուրլու լերան վրայ։ Այս հեռագրաթելը կը հաղորդակցէր կոստանդնուպոլսոյ հետ։

«Այս տեսակ հեռագրական նշաններու գիւտը շատ հին ժամանակներէ կը սկսի։ Տրովայի առումը աւետուեցաւ Յունաստանի՝ զիշերային նշաններով՝ որք իշրարու փոխանցուեցան մերձ առ մերձ բոլոր լերանց գագաթներուն վրայ։ Կեղտացիք ալ գիտէին թղթակցութեան նոյն միջոցը, բայց հեռագրական նշաններու կանոնաւոր կազմակերպութիւնը բուն իններորդ գարէն կը սկսի. այս նշաններն կատարելագործուեցան Թէսփիւլոսի օրով՝ Թէսաղմնիկէի եղիսկոպոս Լեւոն Խմատասէրի ձեռամբ։ Թէսամեաց շարժումները գիտնալու հարց կը կազմակերպել տեսած էր այս տեսակ հեռագրութիւնը, կը կակներն այնպէս մը կարգադրուած էին՝ որ ծածակագրութիւններն պարբերութեանց խմաստը կը յայտնէին. ութը կայսններ հաստատուած էին Տարսոսի եւ մայրաքաղաքին մէջ։ Առաջինն ի Բուլա Տարսոսի մօտ (անշուշտ այսօրուան Քիւիկի պողագը կոչուածն), իսկ վերջինը Պուլկուրլու լերան վրայ. այս վերջին կայսնը կը հաղորդակցէր ուղղակի պալատին հետ։»

ԵՂՅԱԳԵՐՆ ԵՒ ԻՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1830 էն առաջ մասնաւոր անձինք իրենց նամակները իրենց ծախքով մարդ կը խրկէին կ'առնէին, և կամ

անձամբ կ'առնեին զանոնք նամակատունեն : Շատ նա-
մակներ շատ օրեր կ'ուշանային կամ երկան պատուներ
ընելէ յետոյ անոնց տէրերէն կ'առնուեին : Այսօր թղթ-
թատարութիւնը կանոնառ վարձեալ պաշտօնեաներ
ունի, որոնք նամակները կը ցրուեն իրենց հասցէներուն:

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԵՑ

Դուք ամենքդ ալ տեսած էք գրոշմաթուղթեր :
Անոնք փոքրիկ նկարներ կամ դէմքեր են : Ունին զա-
նազան արժէք իրենց տպման համար գործածուած գոյշ-
ներուն համաձայն : Անոնք կը գործածուին նամակա-
տունը յանձնուած թղթակցութեան առարկայից և նա-
մակաց վճարումէ այլ եւս ազատ ըլլալն յայտնելու-
համար : Ժամանակաւ հարկ էր անձամբ երթալ թղթա-
տուն կամ մարդ զրկել և նամակն գինը վճարել : Այսօր
թղթատարը եւ սեղանաւորը կը վաճառեն դրոշմա-
թուղթ . մենք զայն կը փակցունենք նամակն վրայ ,
նամակատուվիր ձգելէ առաջ , և այսպէս նամակը կը
հասնի իւր տիրոջ :

Այս գիւտին փառքը Անդղիոյ կը վերաբերի , ուր
առաջն դրոշմաթուղթեր յօրինուեցան 1840 ին . Լուի
Ֆիլիէ հետեւեալ կերպով կ'ընէ գիւտին պատմութիւնն
la Science Ullustrée ի 1892 տարոյ թիւերէն միոյն մէջ :

« Դրոշմաթղթերու գիւտը կ'ընծայուի ընդհանրապէս
Անդղիոյ Հասարակաց Խորհրդարանի մէկ անդամին ,
Սըր Ռատուէնա Հիլի: Բայց այս գիւտի մասին Անդղիոյ
իրաւունքները խնդրոյ նիւթ են , և գիւտին փառքը
Ֆրանսական թղթատարութեան վարչութեան կ'ընծայ-
ուի մի քանիներէ , բայց երկու կողմէ փաստեր կը պար-
պին :

« Կ'ըսուի թէ այս դարուս կիսուն Փարիզի ԱԷնթ-
Սնթուան արուարձանին մէջ առանձինն բնակող Բոլո-
նիացի Հրեայ մը Քրաքովիւն յաճախ նամակներ կ'ըն-
դունէր նամակատան մէջ մնալի (poste-restante) , իսկ
ինք միշտ զանոնք կը մերժէր քանի մը վայրկեան ու-
ժի ուշով աչքէ անցունելէ յետոյ : Երբ այս մարդը
դէպ ի Դրաքովիա ճամբորգելու եղաւ , թղթատարու-
թեան պաշտօնեայ մը անոր հարցումներ ըրաւ տրուած-
նամակները մերժելու տարօրինակ սովորութեան վրայ ,
անցուշտ իւր հարցման հետ քիչ մ'ալ դրամ խթելով ,
ձեռնա'րկ՝ որ Հրէի մը համար անմերժելի չէ : Որուն
փոխարէն Հրեան ևս սա խոսավանութիւնը ըրաւ .
« Իմ կինո կը զրէր նամակին վրայ Տէր , ազչիկս ալ
կը զրէ իմ անուն , փեսաս՝ նամակատան մէջ մնալի և
թուա՝ Փարիզ : Այս կերպով կը տեղեկանացի թէ բոլոր
ընտանիքս առողջ էին :

« Թղթատարական վարչութիւնն այն ատեն համոզ-
ուեցաւ թէ հարկ էր փոխել նամակաց փոխադրութեան
գինն , որ այն ատեն չտա բարձր էր , վասն զի կը մի-
շեմ թէ 1840ին Մոնփէլիէն Փարիզ նամակի մը հա-
մար 18 սոլ (20 սոլը 1 ֆրանք է) կը տրուէր : Այն
ժամանակէն է որ գաղփական թղթատարութեան վար-
չութիւնը սկսաւ թղթատարութեան բարենորոգման , մը
ուսումնակրութիւնն ընել :

« Սակայն սովորգիւ Անդղիոյ մէջ է որ առաջին
անգամ դրոշմաթղթեր գործածուած են , և պատճառ
եղած են փոխադրութեան գնոյն մեծապէս նուազման
և հասոյթներու աճումին :

« Այս բարենորոգումը 1840ին հաստատուեցաւ Անդ-
ղիոյ մէջ խորհրդարանի քուէարկութեամբ :

« Ահա այն մանրավէպը՝ որ Անդղիոյ մէջ կը պատ-

մուի այն եղանակի մասին՝ որով Հասարակաց խորհրդագործականը համոզուեցաւ թղթատարական փոխադրութեան գիրնը նուազեցնելու պէտքին :

1837ին, Հասարակաց խորհրդարանի ամսղամ Սըր Ռառուէնս Հիլ Ակովտիոյ մէջ ճանապարհորդած ատեն իջեւանեցաւ պանդոկ մը, ուր ականատես եղաւ հետեւեալ իրողութեան : Յրուիլը սպասուհին կը բերէ նամակ մը իր եղբօրմէն : Սպասուհին ուշի ուշով կը քննէ պահարանը, յետոյ ետ կուտայ նամակը ցրուիչն, պատճառելով թէ դրամ չունի գինը վճարելու համար : Անդղիացին այն ատեն կ'առաջարկէ որ ինք վճարէ անոր համար : Բայց երիտասարդուհին կը մերժէ ի ըստ պառ այս ծառայութիւնը : Ճամբորդը այս յամառութեան վրայ զարմանալով իւր հարցման կ'ստիպէ զանի՝ սա խոստովանութիւնն ընելու թէ առանց քսակին բերանը բանալու իւր եղբօր հետ կը թղթակցէր ինչ ինչ որոշեալ նշաններով, որոնք նամակին պահարանին վրայ կը գծուէին :

« Սըր Ռառուէնս Հիլ այս դէպքը ողատմեց խորհրդարանին մէջ՝ հասկցնելու համար նամակաց գինն իշեցնելու հարկը : Որպէս զի աղքատաները կարենան թղթակցի առանց պետական գանձուն դէմ նենդելու՝ առաջարկեց այդ գինը մէկ բէննիի իշեցնել : Եռաշումը քուեարկուեցաւ և Սըր Ռառուէնս Հիլի յանձնուեցաւ թագուհոյն գլուխը ներկայացնող պատկերներ փորագրել ապա և վերակացու ըլլալ դրոշմաթղթերու սոռաջին հանրան, որ 1840 ին եղաւ :

« Գաղիոյ մէջ առաջին դրոշմաթղթերն՝ որոց համար 25 սանդիմ կը արուէր 15 կոսմ կշող նամակի մը համար՝ Փարիզու փողերանոցին մէջ փորագրուեցան Հիւլօյի ձեռքով և 1849 ին հանուեցան : Յետոյ գինը 15 սանդիմի իջաւ : »

Թուրքիա 1856 ին հնարուեցան դրոշմաթուղթեր, որոնք այլ և այլ ձեւեր առնելէ յետոյ կը կրեն այժմ Օսմ. վինանշաններ :

Մի քանի երկիրներ ընդունած են այլ և այլ պատկերներ տարբեր գնով դրոշմաթղթերու համար : Այսպէս Ամերիկայի Միացեալ Նահանգաց դրոշմաթղթերն երկին երեւելի մարդիկը կը ներկայացնեն, զոր օրինակ Ֆրանքլին, Վաշինգտոն :

Ուրիշ երկիրներ իրենց դրոշմաթղթերու վրայ ապաւորած են իրենց ազգային գէնքերն կամ այն երկրին յատուկ ծաղկիններ, պատուղներ, կենդանիններ :

Պրաղլիոյ նոր հասարակապետութիւնը իւր դրոշմաթղթերու վրայ դրոշմած է արժէքին համաձայն, զանազան գոյն յատակի վրայ, հարաւային կիսագնդին համաստեղութիւնը հինգ աստղերով :

Ճաբոնի դրոշմաթղթերն երկրին ծաղկինները, թըռչունները կը պատկերեն :

Արեւմտեան Աւստրալիա կարապն ընտրեց իւր դրոշմաթղթերուն համար իբրև խորհրդանշան :

Եղիպտոս իրեններուն վրայ դրոշմեց բուրգերն և Սփինքը, իր նախնի քաղաքակրթութեան յիշատակւներն : Թէու նէօֆի անդղիական գաղթականութիւնն ունի դրոշմաթղթեր՝ որոնց վրայ նկարուած են փոկեր, ձողածուկեր :

Դրոշմաթղթերու գործածութիւնն այսպէս քաղաքակրթեալ աշխարհի ամէն կողմերն արագօրէն տարածուիլը կը ցուցնէ թէ ո՞չափ կարեւոր է անոր գոյութիւնն : 1840 ին, երբ հնարուեցան անոնք, ո՞վ գիւտէր թէ անոնք իբրև դրոշմաթուղթ ծառայելէ զատ, բատական կարեւոր առեւտուրի մը պատճառ պիտի ըլլային : Մանկունք այս փոքր պատկերներէն հրապուլ-

ուելով մտածեցին զանոնք հաւաքել : Ծնողք եւս շատ հագրգուուեցան և իրենց հաշուոյն հաւաքումներ կազմեցին :

Գրոշմաթղթերու ալպոմներու ճաշակն այսպէս բոլոր
աշխարհ տարածուեցաւ ընկերութեան ամէն դաստկար-
գերուն մէջ : Եւ այս հաւաքածոներէն նոր վաճառա-
կանութիւն մը յառաջ եկաւ :

Փոքրիկ պետութիւններէն ոմանք, կ'ըսուի թէ, հաւաքողներու համար առելի դրոշմաթուղթ կը ծախսն քան թէ նամակի համար :

Կ'ըստուի նաև թէ շատ երկիրներու մէջ պարբերաց բար կը փոխուի դրոշմաթղթերու նկարը հաւաքողաց գնումներէն չան բնելու համար :

Գալով տղայց, հաւաքման սերը զանոնք զբաղեց-
նելով և ախորժելի զրուանք մը ընծայելով հանդերձ
կրնայ նաև անոնց բան սորվենի :

Արդարեւ մանուկն այդ գրոշմաթղթերն ստէպ ձեռք
առնելով և գասակարգելով կը բաղձայ գիտնալու թէ
աշխարհի ո՞ր մասին մէջ կը գտնուի այն երկիր՝ ուստի
կուգան անոնք։ Այսպէս անաշխատ կը յաւելու իր
պատմական և աշխարհագրական հմտութեւն որ։

Նմանապէս կ'ուսանի այլ և այլ ժողովրդոց զբանական դրութեանց մէջ եղած տարբերութիւնները, եւ կ'ընդելանայ շուտով ստար զբանոց անուններուն, ինչպէս նաև անոնց արժեքները :

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

| | |
|------------|---|
| Նախարարներ | 7 |
| Գլուխ Ա. | Նոր տարւոյ եւ անուան տօնի նամակներ |
| Գլուխ Բ. | Շնորհակալուրեանց . Շնորհաւորուրեանց , ցաւակցուրեանց , յանձնաբարուրեանց նամակներ |
| Գլուխ Գ. | Առեւտրական , վաճառականական եւ դրամ խնդրելու նամակներ |
| Գլուխ Դ. | Կտսկներ |
| Գլուխ Ե. | Աղերսագրեր |
| Գլուխ Զ. | Վկայագրեր |
| Գլուխ Է. | Ընտակարուրեան վրայ չորս նամակներ |
| Գլուխ Ը. | Ընտական , մերժմական , լուրջ նամակներ |
| Գլուխ Թ. | Զանազան տուսակներ |
| Գլուխ Ժ. | Գրագիտաց ումանց նամակներ |
| Գլուխ Ժ.Ա. | Թղթատարուրիւն |

800

ՀՀ Ազգային գրադարան



NL0354613

24498



891.99

9-13